




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

636.9
F-15

Ա.ԲԱԳԻՐՈՎ

ԾԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏՏՐԱՑ 1932 ՅԵՐԵՎԱՆ

FEB 2013

01 OCT 2010

25 FEB 2013

Ա. ԲԱԳԻՐՈՎ

636.9

ur

F-15

1008
34321

ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ



1932

ՅԵՐԵՎԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սոցիալիստական անասնապահության այս նոր հյուղը՝ ճազարաբուծությունը մեծ եներգիա և մեծ նյութական միջոցների ներդրումն էր պահանջում, բայց սրա դիմաց նրանից ստացվում է մեծ քանակությամբ և չափազանց ոգտակար պրոդուկտներ, ինչպիսին է միսը, մորթին, աղվամազը և այլն. այս աեսակետից ել հենց միայն մսի մատակարարման բարելավման խնդրում ճազարաբուծությունը մեզ համար հրաշակական նշանակություն ունի:

Յերնելով սրանից կուսակցության կենտրոնը ճազարաբուծության յայն զարգացման մասին ժամանակին տված իր դիրքերի մենքը, այս մասին շատ վորոշակի կերպով արձագանգեց նաև ՀԿ(Բ)Կ կենտրոնի և ԳՎՀ-ի հունիսյան պլենումի բանաձևը:

«Հասնել ու անցնել» Ստալինյան յողունգը, ինչպես մեր տնտեսության բոլոր ասպարեզներում, նույնպես և անասնապահության այս նոր կարգի և ամբողջ աշխատավորության յեռանդն ու նախաձեռնությունը բնագավառում իրականացնելու համար, պահանջվում է բանվոր դասակարգի ամբողջ աշխատավորության յեռանդն ու նախաձեռնությունը:

ճազարաբուծության կարևոր գործով կարող են և պետք է վոր գրազվեն վազ միայն մեր խորհրտնտեսությունները, կոլտնտեսություններն ու մերձքաղաքային տնտեսությունները, այլև գործարանները, գյուղները, մանկատներն ու հիվանդանոցները պետք է ունենան ճազարաբուծական տնտեսություններ: Այս գործով պետք է գրազվեն նաև անհատ աշխատավորները:

Այս աշխատանքը յերբեք կամպանիոն բնույթ չպետք է կրի, այստեղ պահանջվում է լուրջ ծրագրված ու գրականորեն կազմակերպված աշխատանք: Գլխապտույտ շտապողականությունն ու վնասակար ինքնահոսք գործին ռզուտ չեն բերի: Մեզ հասած տեղեկությունները արզեն վերաբերում են այն մասին, վոր մի շարք տեղերում առանց նախորդ տեղի ու կերի մասին մտածելու ճազարներ ձեռք բերելու հետևից են բնկնում և այսպիսով գործը նախորդ անհաջողության մատնում: Շատերն ել չկարողանալով ոգտադործել տեղական յայն միջոցները, կարծում են թե ամեն ինչ պետք է կենտրոնից ստանալ և այս պատճառով ել գործը հետաձրգվում են. սա չափազանց վտանգավոր վերաբերմունք է գործի հանդեպ: Մեր բոլոր շրջաններում, գյուղերում ու քաղաքներում, ճազարաբուծության բոլոր միջոցներն ել կան, միայն հարկավոր է նախաձեռնող լինել և ոգտադործել:

Այս ասպարեզում մեր հիմնական բացերից մեկը յեղել է հայտատա գրականության պակասը, վորը աշխատում ենք լրացնել հրատարակելով դյուրաստեա Ա. Բագիրյանի «ճազարաբուծություն» գիրքը: Իհարկե այս աշխատությունը վորո՞թեթյուններ կարող է ունենալ. նա ամենից առաջ կրում է իր վրա շտապողականության կնիքը, սակայն ի միճակի յե լրիվ չափով ուղեցույց հանգիստանալու ճազարաբուծության ասպարեզում աշխատողների համար:

Ձեռնարկում բնագրված են համարյա բոլոր անհրաժեշտ ու կարևոր խնդիրները:

Պրակտիկ աշխատանքի ժամանակ ձեռնարկում յերևան բերված թեթյունները 2-րդ հրատարակության մեջ կուղղվեն:

Պետհրատի ագրո-բիոլոգիական սեկտոր.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ճագարբուծությունը մեզ մոտ դեռ նոր և զարգանում և բավականաչափ ուսումնասիրված չէ:

Ճագարբուծության զարգացման համար պահանջվող անհրաժեշտ կազմակերպչական պատճառով նոր կազմակերպվող ճագարբուծարաններում կառուցումների, խնամքի, կերակրման և ճագարների առույժության հետ կապված խնդիրների լուծման ժամանակ հանդիպում են դժվարությունների: Գրա համար ել մենք այս փոքր աշխատանքով ցանկացել ենք նոր սկսողներին տալ այն ցուցմունքները, վորոնք սկզբնական շրջանում անհրաժեշտ են սխալներից խուսափելու համար, վորովհետև կազմակերպման շրջանում կատարված սխալները հաճախ պատճառ են դառնում վնասների ու թերահավատության:

Պետք է նշել, վոր ճագարբուծության բնագավառում դեռ շատ հարցեր մնում են առանց ուսումնասիրելու, վորի լիակատար ուսումնասիրությունը պետք է կատարվի ճագարբուծարաններում աշխատողների ամենորյա փորձնական աշխատանքների ընթացքում, վորոնց միջոցով ել կարելի չէ լրացնել գոյություն ունեցող բոլոր թերությունները:

Ճագարբուծության զարգացման խնդիրը կոնկրետ, խորհրդային, մերձ քաղաքային տնտեսությունների և գործարանային ճաշարանների համար պետք է լինի որպես անհետաձգելի հարցերից մեկը:

Մեր առաջ խնդիր և դրված կարճ ժամանակամիջոցում արդյունաբերական շրջաններին ու կոոպերատիվներին մատակարարել մեծ քանակությամբ համեզ միս և բարձրացնել թե՛ արտահանություն և թե՛ մեր նորակառույց վերամշակող գործարանների համար մորթիների անհրաժեշտ քանակ:

Այդ խնդիրները լուծելու համար հարկավոր է կոլտնտեսությունների, խորհրդային տնտեսությունների և խորհրդային հասարակության լայն խավերի լուրջ ուշադրությունը դարձնել դեպի անասնաբուծական չափազանց արդյունավետ այս ճյուղը:

Ա. ԲԱԳԻՐՈՎ

ՃԱԳԱՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՄԹԵՐԳՆԵՐԸ

Շատերը չ'զննեն, թե վորքան թանկարժեք և ոգտակար մթերքներ կարելի է ստանալ ճագարբուծությունից:



Նկ. 1. Ճագարի մորթուց պատրաստված շերեր և հագուստներ

(ա) Ճագարից ստացվում է մորթի.—միջանի տեսակ ցեղական ճագարների մորթին այնքան խիտ, ղլմացկուն, տաք և քնքույշ է այնքան լավ ու բազմազան ձևերով և ներկվում, վոր դժվարությամբ է տարբերվում ծովալըի «Յենոտ», կուղբի «Բորբ», Շինչիլայի, Կոտիկի և այլ թանկարժեք կենդանիների մորթիներից ու հաջողությամբ փոխարինում է նրանց:

Ներկայումս ամբողջ աշխարհում գործածվող բոլոր թեթև մորթիների մոտավորապես կեսը ստացվում է ճագարից:

(բ) Ճագարից ստացվում է լավորակ միս.—ամենակուլտուրական յերկրներում վաղուց արդեն համապատասխան ուշադրություն են դարձրել ճագարի մսի վրա:

Ձանազան յերկրներում հատուկ հետադոտության են յենթարկել ճագարի միսը: Այդ հետադոտությունները անխտիր ցույց են տվել, վոր ճագարի միսը հրաշալի համ ունի և ավելի սննդարար է ու դյուրամարս, քան տավարի, վոչխարի և այլ կենդանիների միսը:

Ճագարի միսը սպիտակ է, յուղոտ և իր կազմությամբ ու հատկություններով դերազանցում է հավի մսին և ամենից շատ նման է հնդկահավի մսին:

(գ) Ճարպը.—ճագարի ճարպը համարվում է լավագույն ճարպերից մեկը:

(դ) Կաշի.—խոշոր ցեղական ճագարի կաշին ավելի ամուր է, քան հորթի, այծի, վոչխարի կաշին և դեպի չափով թեթև է, նույր ու տաք: Ներկայումս ճագարի կաշուց պատրաստում են ամենալավ շեփոն, գամշը և լայկը, վորոնք ընտիր և նուրբ տեսակի կաշիներ են:

յե) Բուրգը.—ճաղարի բուրգն անխոխարինելի է Ֆետր պատրաստելու համար: Բացի Ֆետրից՝ ճաղարի բուրգից պատրաստում են բրդեղեն կտորներ, հյուսվածքներ, վալիկաներ և այլն:

Անգորական ցեղին պատկանող ճաղարի բուրգը կազմված է բացառապես խավամաղից և իր վորակով ավելի լավ է, քան մերինոսի բուրգը ու մի քանի անգամ ավելի թանկ է գնահատվում նրանից:

զ) Սոսին.—ճաղարի ականջներից, թաթերից, գլխից և կաշվի մնացորդներից պատրաստում են առաջնակարգ սոսինձ, վորը բոլոր սեռերի սոսինձներից ավելի թանկ է անխոխարինելի յե դեղարվեստական իրեր կաշենելու համար:

ե) Ագիֆները.—ճաղարի աղբը ամենալավ պարարտանյութն է:

ը) Աղբը.—ճաղարի աղբը ամենալավ պարարտանյութն է:

ՃԱԳԱՐԸ ՇԱՏ ԱՐԱԿ Ե ԲԱԶՄԱՆՈՒՄ

Ճաղարի նորմալ բազմացումը սկսվում է 6—8 ամսական հասակից, սակայն նա ընդունակ է բազմացնելու նույնիսկ 1—5 ամսական հասակից:

Ճաղարի հյուսվածքը տևում է 30—32 օր: Ամեն անգամ նա ծնում է մինչև 15 և ավելի ձագեր:

Միանգամայն պարզ է, վոր անասնապահության գոյություն ունեցող ճյուղերից միջ մեկը չունի բազմանալու այնպիսի ընդունակություն, ինչպես ճաղարը:

Ճաղարաբուծությունը զարկ տալու միջոցով մենք կ'կարողանանք մեծ չափերով լայնացնել մորթեղենի արտադրությունը, հետևապես նաև արտահանությունը:

Մենք կ'կարողանանք արտահանել նաև մեծ քանակությամբ ճաղարի խավամաղ, կաշի և միս:

Ճաղարաբուծությունը մեզ մոտ պետք է զարգանա կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների դժով:

Կոլեկտիվ տնտեսություններում այդ աշխատանքով կարող են դբաղվել հաջմանդամները, ծերերը, կանայք և յերեխաները:

Ամենից առաջ ճաղարաբուծության զարգացման խնդիրները պետք է դառնան խորհրդային լայն հասարակության սեփականությունը:

Միայն այդ ժամանակ չափազանց մեծ նշանակություն ունեցող անասնապահական այդ ճյուղը մեզ մոտ կ'կատարի իր կարեւոր դերը ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի գործում:

ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանի ճաղարները, անկասկած, ընտելացվել են վայրի ճաղարի: Բայց յե՛րբ, կամ մորտեղ է կատարվել այդ ընտելացումը՝ հայտնի չէ:

Հայտնի չէ, վոր դեռ շատ հին դարերում ճաղարաբուծությունը գոյություն ունեցել Զինաստանում և Ասիայի միջանի յերկրներում:

Հույները զարմանում էին ճաղարի արագ բազմանալու ընդունակությամբ, և յենթադրելով, վոր այդ կատարվում է աստվածների կամքով, գրա հիման վրա կառուցվում էին ճաղարների հուշարձաններ՝ վոր պես բազմացման եմբելմա:

Հին Հռոմում ճաղարի միսը այնքան թանկ էր գնահատվում, վոր մատչելի էր միմիայն հարուստներին, իսկ խնճուղներում ճաղարի միսը համարվում էր ճոխություն:

Հռոմեացիները դեռ այն ժամանակ պարսպում էին ճաղարաբուծությունը և այդ նպատակով կառուցում էին բազմաթիվ բուծարաններ:

Առաջին անգամ ճաղարները Ասիայից անցել են Յեվրոպա XI-րդ դարում:

Հավանական է, սկզբում հյուսիսային Աֆրիկայից—Իսպանիա, բայց յենթադրվում է, վոր առաջին անգամ ճաղարները բերված են Իսպանիա Փյունիկեցիների արշավանքների ժամանակ:

Փյունիկեցիների լեզվով «Սպանի» բառը նշանակում է «ճաղար», հետևապես միջանի հեղինակների կարծիքով՝ «Իսպանիա» անունը առացվել է Փյունիկեցիների «սպանի» (ճաղար) բառից:

Հռոմեացիցիք Սպանիայի գրավման ժամանակ տեսնելով այնտեղ բազմաթիվ ճաղարներ, այս յերկրը «ճաղարի յերկիր» անվանեցին:

12-րդ դարի սկզբերում ճաղարը Իսպանիայից անցել է Ֆրանսիա: Վանքերում գտնվող փաստաթղթերից պարզվում է, վոր դեռ 12-րդ դարում Ֆրանսիայի վանական կալվածներում գոյություն ունեցել ճաղարաբուծություն, վորոնց կերակրելու համար հատկացվել են հատուկ հողամասեր:

16-րդ դարում յերկու Ֆրանսիացի ճաղարաբուծներ՝ Շարլ Ետյենը և Ժան Զյուրլոտումը կազմել են ճաղարաբուծության մանրամասն մի ձեռնարկ, վորից, չնայած 400 տարի է անցել, բայց և այնպես մասամբ կարելի է ոգտվել՝ այդ ձեռնարկից «գարեննա» սխտեմով ճաղար պահելու համար:

16-րդ դարում արևելքից—Պորտուգալիա յե փոխադրված արծաթագույն ցեղի ճաղարներ, վորտեղ սկսել են բազմացնել այդ ցեղը:

Ճաղարի զանազան ցեղերի մասին սկսել են գրել 1637 թվականից, իսկ 1792 թվականին Պրուսիայում նույնիսկ նշանակվել է նվիրատվություն այն ճաղարաբուծներին, վորոնք բազմացնում էին «Անգորական» ճաղարներ:

Սկզբնական չրջանում Յեվրոպայում ճաղարաբուծությունը մեծ չափով զարգացավ Ֆրանսիայում, վորտեղ ճաղարաբուծությունը դարգացած լինելու հետևանքով՝ շատ գյուղացիներ հնարավորություն ունեցին աղբերու միմիայն դրա յեկամուտով:

1870—71 թ. Ֆրանս— Գերմանական պատերազմի ժամանակ, Գերմանացիները տեսնելով Ֆրանսիացիների ճաղարաբուծությունից ստացած արդյունքները, սկսեցին իրենց յերկրում զարկ տալ ճաղարաբուծությանը:

Հենց այդ ժամանակվանից Գերմանացիները կազմակերպեցին ճաղարաբուծների միություն:

Մինչև 1860 թ. Ավստրալիայում չէ յեղի վոր ճաղարներ անգլիացի տանելով Ավստրալիա յեր նախատավոր այսմաններում դրանք սկսեցին մեծ արագությամբ և հսկայական չափերի հասնել:

Ներկայումս Ավստրալիայից արտահանվում է տարեկան հարյուր միլիոն ուղբուր արժողությամբ ճաղարաբուծությունից ստացվող աղբանքներ:

Համաշխարհային պատերազմից հետո՝ Յեմբուպայի շատ յերկրներ՝ Անգլիան, Գերմանիան, Բելգիան, Ամերիկան ճազարաբուծությունը զարգացնում են շատ խոշոր չափերով։ Որինակ՝ Ֆրանսիայում ներկայումս մորթվում են տարեկան մոտ 120 միլիոն ճագար, վորոնց համեղ միսը լավ ընդունելություն է գտնում հասարակության բոլոր խավերի կողմից։ Նրանց մորթիներին պատրաստում են մուշտակներ ու ֆետր, իսկ կաշվից ամենաընտիր և թանկարժեք դոմեշ, լալի և շեվրո։

1928 թ. Ֆրանսիան արտահանել է 338,174,000 Ֆրանկի արժողությամբ ճագարաբուծությունից ստացվող ապրանքներ։

Մինչև 1900 թիվը Ռուսաստանում ճագարաբուծությամբ զբաղվողներին թիվը յեղել է այնքան աննշան, վոր նույնիսկ մի քանի Յեմբուպացի հեղինակները կարծիքով Ռուսաստանում բոլորովին գոյություն չի ունեցել ճագարաբուծություն։

1903 թ. առաջին անգամ ճագարի միքանի տեսակները յերևացել են Մոսկվայի գյուղատնտեսական ցուցահանդեսում։

1908 թ. շատերը սկսում են հետաքրքրվել ճագարաբուծությամբ, իսկ 1911 թ. Մոսկվայում կազմակերպվում է ճագարաբուծների ընկերություն, վորը ճագարաբուծության զարկ տալու նպատակով, հրատարակում է ամսաթերթ «Ճագարաբուծության տեղեկագիր» վերնագրով։

Այդ թերթը հրատարակվել է մինչև 1915 թիվը։

Յարական Ռուսաստանում ճագարաբուծությունը գտնվելով մանր, փոխիցած անհատական տնտեսություններում, զարգացման հեռանկարներ չի ունեցել։

Յարական Ռուսաստանում մորթի վերամշակող գործարանների լիակատար բացակայության պատճառով, մորթիները գնահատվել են շատ է-թան, իսկ վաճառականները ոգտվելով այդ հանգամանքից այն հավա-րել են այնպիսի արժեքներով, վոր միանգամայն խանգարել են ճագարաբուծության զարգացման գործը։

Մինչդեռ այդ ժամանակ մորթի վերամշակող գործարանների կառուցման փոխարեն, խոշոր գոմարներ էլին ծախսվում արտասահմանից ճագարների վերամշակված մորթիներ ստանալու համար։

Իսկ այժմ, յեր Խորհրդային կառավարության ձեռք առած միջոցներով կառուցում են մորթի վերամշակող գործարաններ, յերը մեր պահածոյի հսկա գործարանները կարող են ճագարի համեղ մսից պատրաստել միլիոնավոր տուփ պահածոներ, յերը ճագարապահական մանր անհատական տնտեսությունների փոխարեն կազմակերպվում են խոշոր սոցիալիստական արդյունաբերական ճագարաբուծական արտ-տեսություններ, վորտեղ հնարավոր է խիստ կարճ ժամանակամիջոցում բազմացնել արժեքավոր և ընտիր տեսակի ճագարներ, — վոչ մի կասկած չկա, վոր մոտ ապագայում մեզ մոտ ճագարաբուծությունը կըստանա լայն ծավալ և կարտադրի հսկայական քանակությամբ թանկար-ժեք միջոցներ, վորոնք մեծ նշանակություն կունենան մեր արդյունաբերության համար։

ԱՊՐԱՐՆԵՐԻ ՑԵՂԵՐԸ ՅԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարդիկ վոչ միայն ճագարի, այլև մյուս տեսակի անասունների ազնվացման համար անընդհատ աշխատանք են տարել։

Հարյուրավոր տարիների ընթացքում Յեմբուպայի շատ յերկրներում ճագարաբուծները հայտնի գիտնականների, վորոնց թվում հրո-չակավոր Չարլզ Դարվինի աշակցությամբ, տարել են խոշոր աշխատանքներ՝ վայրի և ընտանի սովորական ճագարներից արժեքավոր տեսակներ ստանալու համար։ ճագարը բոլոր անասուններից ավելի շուտ է յենթարկվում կուլտուրական բարելավման, վորի հետևանքով մինչև որս արդեն ստացվել է մոտ 20 ցեղի և 40 տեսակի ճագարներ, վորոնցից կարելի յե նշել մեկ կիլոյից մինչև 9 կիլո ծանրություն ունեցող, յերկուսից մինչև 20 սանտիմետր յերկար մաղ ունեցող և ութից մինչև յերեսուն սանտիմետր բյերկար ականջներ ունեցող ճագարներ։

Սրանով դեռ չեն վերջանում ազնվացման աշխատանքները, քանի վոր դեռևս կան մեծ հնարավորություններ՝ ճագարից ավելի լավագույն տեսակները ստանալու։

Որինակ կարող է ծառայել այն հանգամանքը, վոր միքանի տարի առաջ բոլորովին պատահամբ, սովորական ընտանի և վայրի ճագարների խառնուրդից ճագարաբուծները ստացել են ամենաընտիր և ամենաթանկարժեք ճագարներ «Ռեզո», «Շինչիլա» և «Սկյուռն» ցեղերը։

Տեղական ճագարաբուծական տնտեսությունների համար շատ հեշտ է ներկայումս գոյություն ունեցող բազմազան տեսակ ճագարներից ընտրել այնպիսիները, վորոնք ավելի յեն հարմարվող կլիմայական պայմաններին և արդյունաբերական տեսակետից ավելի ոգտավետ են։

Թեև ճագարները առանց դժվարության հարմարվում են կլիմայական բոլոր պայմաններին, բայց ավելի նպատակահարմար է հենց ռու-կըզրնական շրջանում ընտրել այնպիսիները, վորոնք հայտնի յեն իրենց գիմացկունությամբ, վաղահասությամբ ու բազմանալու ունակությու-ններով։

Միանգամայն անհիմն է միքանի ճագարաբուծների այն կարծիքը, վոր իրը թե ճագարները բաժանվում են ըստ արտադրողականության, այսպես—

Մսատու	5—9	կիլոգրամ
Մսա-մորթատու	3—5	»
Մորթատու	2—3	»

Այդ կարծիքները թյուրիմացություն հետևանք են, քանի վոր բո-լոր տեսակ ճագարներից էլ կարելի յե ստանալ թե՛ համեղ միս և թե՛ մորթի։

Ներկայումս մեր առաջ դրված է հիմնական խնդիր ճագարաբու-ծությունից կարճ ժամանակամիջոցում ստանալ մեծ քանակությամբ լավորակ միս և մորթի։

Տնտեսության համար բազմացնելու նպատակով ճագարներ ընտ-րելու ժամանակ առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել նրա առողջության, դիմացկունության և աշխուժության վրա։

Անհրաժեշտ էմ համարում նշել, վոր Հյուսիսային Կովկասում տար-վելով Բելգիական հսկա «Ֆլանդր» ցեղի ճագարների արտաքին տեսքով և ցանկանալով բազմացնել ամենախոշոր տեսակները, մի քանի տարվա անընդհատ փորձերից հետո համոզվեցի, վոր արդյունաբերական ճա-գարաբուծության համար միանգամայն աննպատակահարմար են խոշոր

տեսակի ճագարները, վորովհետև նրանք չափ դանդաղաբու են և վատ են խնամում ձագերին:

Անհրաժեշտ է բազմացնել միջակ քաշ ունեցող ճագարներ, որինակ՝ 3—5 կիլոգրամ քաշով, վորոնք հայտնի են իրենց խիտ, փափուկ, զեղեցիկ և միազույն մորթիներով:

Պետք է նկատել ունենալ, վոր թեև մարթի վերամշակող գործարանները մեծ հաջողությամբ ներկում են ամեն գույնի մորթիներ, բայց գործարանները ավելի մեծ պահանջ են առաջադրում այն մորթիներին վերաբերմամբ, վորոնց կարելի չէ գործադրել առանց ներկելու՝ իրենց բնական գույներով, ինչպես որինակ՝ «Շինչիկյա», «Վեննական կապույտ», «Ռեգս» և այլն:

Այն մորթիները, վորոնք ունեն գանազան գույնի բծեր, նշաններ—եփան են գնահատվում:

Հասարակ ճագարից ել նույնպես հնարավոր է ստանալ թանկարժեք մորթի, յեթե միայն նա ամենաընտիր ցեղական արու ճագարների միջոցով յենթարկվում է մետիզացիայի:

Արդյունաբերական ճագարաբուծության համար անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել մետիզացիայի վրա: Այդ խնդիրը պիտի դառնա արդյունաբերական ճագարաբուծության կարևոր խնդիրներից մեկը:

Անգլիացիք ասում են «լավ ցուլը նախքին կեսն է»:

Նախքան մանրամասն կանգ առնելը այն ցեղերի վրա, վորոնք մեր կլիմայական պայմաններին ավելի նպատակահարմար են և վորոնք անկասկած լինելու չեն սկզբնական շրջանում խորհրդային անդրկովկասի արդյունաբերական ճագարաբուծության հիմնական հոտը, նշենք այն բոլոր ճագարների տեսակների անունները, վորոնք գոյություն ունեն մինչև այժմ ցույց տալով նրանց 1—ից մինչև 10 ամսական հասակի կենդանի քաշը, քանի վոր ճագարբուծների գործնական աշխատանքները ընթացքում այդ տեղեկությունների անհրաժեշտությունը կարող է դառնալ:

ճագարների կշիռը ըստ ցեղերի և հասակի (գրամներով)

Ց ե Ղ ե Ր Ը	Գանի ամսական հասակում									
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Բելգիական Փլանդեր	750	1750	2750	3750	4750	5250	5700	6125	6625	7000
Սպիտակ հսկա	625	1500	2500	3500	4250	4750	5250	5500	5750	6000
Վոլոսկան մանյակ	500	1000	1500	2125	2750	3250	3750	4200	4600	5000
Շինչիկյա խոշոր	500	1125	1750	2375	2875	3250	3625	3938	4125	4375
Շինչիկյա մանր	312	687	1000	1375	1750	2062	2312	2500	2625	2750
Հավանյա	438	875	1375	1875	2375	2750	3000	3250	3374	3825
Արծաթազույն անգլիական	250	575	1000	1375	1750	2062	2312	2500	2625	2750
Վեննական կապույտ	500	1125	1812	2438	3000	3500	3875	4187	4375	4625
Վեննական սպիտակ	438	875	1375	1875	2375	2750	3125	3438	3625	4000
Անգորական	438	875	1375	1875	2187	2750	8125	3438	3625	4000
Կաստորեկա	312	687	1375	1875	2375	2750	3000	3250	3375	3625
Շամպայն	500	1062	1812	2250	2750	3125	3500	3750	3938	4125
Գարնտա	250	500	750	1000	1200	1500	1625	1750	2000	2250

ԲԵԼԴԻԱԿԱՆ ՀՍԿԱ ՖԼԱՆԴԻՐ

Առաջին անգամ XVI դարում ճագարի այդ ցեղը բուծվել է Բելգիայի Ֆլանդրիա շրջանում, վորի անունով էլ նա կոչվել է «Ֆլանդեր»:

Բելգիական ճագարաբուծները սկզբում նպատակ ունենալով ստանալ միմիայն խոշոր ճագար, ուշադրություն չեն դարձրել մորթու վորակի վրա:

Այդ ճագարը տարածվել է շատ յերկրներում, մասնավորապես Գերմանիայում, վորտեղ մեծ հաջողություն է գտել: Գերմանացի ճագարաբուծները աշխատանքներով «Ֆլանդեր»-ի քաշը հասել է մինչև 9 կիլոգրամի, իսկ մարմնի յերկարությունը մինչև 75 սանտիմետրի:

Այդ ցեղի գլխավոր հատկանիշներն են՝ ականջների յերկարությունը՝ 16—18 սանտիմետր՝ ցցված դեպի վեր V ձևով: Կենդանի քաշը՝ 6—9 կիլոգրամ, սև, մոխրագույն—կապույտ և կենդուրայի նմանվող բաց կամ մուգ գույնի: Աչքերը մուգ կապույտ: Յեղունակները համապատասխան մորթու գույնին:

Նը:

«Ֆլանդեր»-ը հասունանում է 10 ամսական հասակում, վորից հետո կարելի չէ զուգավորել: Զուգավորելու համար արու ճագարի հասակը պետք է լինի մեկ տարուց վոչ պակաս:

Չագերն անկախ ծնողների գույնից կարող են լինել տարբեր գույների, բայց զտարյուն ձագերը բացի սևից, մոխրա—կապույտագույնից, և կենդուրանման գույնից չպետք է լինեն ուրիշ գույնի:

«Ֆլանդեր»-ը ծնում է մինչև 14 ձագ, վորից կարելի է թողնել մոր տակ մինչև 6 հատ: Այդ ցեղի մայրերը լավ չեն խնամում ձագերին, բացի այդ՝ պահանջում են մեծ վանդակներ, շատ կեր և խնամք:

Արդյունաբերական ճագարաբուծության համար վորը անկասկած պիտի դարձանա կիսարնական պայմաններում—այդ ճագարը աննպատակահարմար է: Իսկ յեթե ցանակացողներ լինեն քաղմագնելու խոշոր ցեղի ճագարներ, այդ դեպքում ավելի նպատակահարմար է «Ֆլանդեր»-ից ստացված մետիսներ, վորոնք անկասկած ավելի զիմացկուն և լավ մայրեր են: Դրանք քաշում են 4—5 կիլոգրամ:



Ն. 2. Բելգիական Փլանդեր

«ՍՊԻՏԱԿ ՀՍԿԱ»


Առաջին անգամ այս ճագարը ստացվել է Գերմանիայում: Գույնը մաքուր սպիտակ է, աչքերը բաց կարմիր, մողերը խիտ ու փափուկ:

Գերմանացի ճագարաբուծների յերկար աշխատանքների հետևանքով այդ ճագարը ստացվել է Բելգիական «Ֆլանդեր»-ից:

Սպիտակ հսկայի մաքուր սպիտակ, խիտ, դափուկ մորթին ներկվում է բոլոր տեսակի կենդանիների թանգարտեք մորթիների գույներով և հեշտությամբ փոխարինում նրանց: Այդ պատճառով նրա մորթին մեծ նշանակություն ունի մորթի վերամշակող գործարաններին համար: Քաշը 4—8 կիլոգրամ է: Ականջների յերկարությունը 15—18 սանտիմետր, վերև ցցված Վ ձևով, յերդունդները մարմնազույն են: Հասունանում են 9 ամսական հասակում, վորից հետո կարելի է զուգավորել: Այդ ցեղի արու ճագարը զուգավորման համար պետք է ունենա մի տարուց վոչ պակաս հասակ:

Զտարյուն «Սպիտակ հսկայի» ճագերը բացառապես սպիտակ գույնի են, միանգամից ծնվում են մինչև 17 ճագ, վորից կարելի է թողնել վեցը:

Սպիտակ հսկան ցրտադիմացկուն է և շատ լավ խնամում է ճագերին: Արդյունաբերական նպատակի համար, հարկավոր է խույս տալ շատ խոշոր տեսակից և պահել 4—6 կիլոգրամ կշիռ ունեցողներին:



Նկ. 3 Սպիտակ հսկա

«ՎՈՉԽԱՐԱՆՄԱՆ»-Ը

Այդ ցեղի ճագարներն իրենց գլխի արտաքին տեսքով շատ նմանում են վոչխարի, վորի համար էլ այդ ցեղը կոչվում է «Վոչխարանման» ճագար:

Նրանց կախված ականջները խիտ տարբերվում են բոլոր տեսակ ճագարների ականջներից: Դեռ հայտնի է, թե վորտեղ է առաջին անգամ ստացվել այդ ճագարը, միայն պարզ է, վոր Յեփրոսյայում յերեվացել է XV դարում.—սկզբում Անդրիայում, իսկ հետո Ֆրանսիայում:


Յենթագրում են, վոր այդ ճագարի շատ յերկար ականջները ստացվել է հատուկ կերերի և հատուկ ջերմաստիճանի ազդեցությամբ:

«Վոչխարանման» ճագարը արդյունաբերության համար խոշոր նշանակություն չունի, բայց հետաքրքիր է վորպես վորձ, թե արդյոք ճագարաբուծների անընդհատ աշխատանքներով ինչպիսի հետաքրքիր հետևանքներ կարելի յե ստանալ:

Այժմ գոյություն ունեն «Վոչխարանման» ճագարներից յերեք տեսակներ. անդլիական «Լոպս», Ֆրանսիական «Բեյլե» և գերմանական

«Մեյբլեն»: Այդ բոլոր տեսակներն էլ ունեն յերկար կախված ականջներ և զանազան գույնի մորթի: Բայց ամենախոշոր ականջներ ունեցողը անդլիական «Լոպս»-ն է, վորի յերկու ականջի յերկարությունը հավասար է 76 սանտիմետրի, իսկ մի ականջի յախությունը 20 սանտիմետրի:

Այդ ճագարները շատ դանդաղաչարժ են ու թմրած. ծնում են մինչև 8 ճագ: Հասունանում են 9—10 ամսական հասակում:



Նկ. 4. Վոչխարանման

«ՇԻՆՇԻԼԼԱ»

Այդ ճագարները առաջին անգամ ստացվել են 1913 թվականին Ֆրանսիայում: Տրանցտարի «Շինշիլլան», չնորհիվ իր մորթու բացառիկ գեղեցկության, ուժեղ թափով զարգացվում է: «Շինշիլլա» ճագարը նմանվում է ներկայումս անհայտացած Չիլիական «Շինշիլլա» կոչված կրծող կենդանուն, վորի մորթին գեռ հին դարերում համարվել և ամենագեղեցիկ ու թանգարտեք մորթիներից մեկը:

Այդ հիման վրա էլ անհայտացած Շինշիլլա կենդանուն նմանվող ճագարի ցեղ ստանալը՝ համաշխարհային ճագարաբուծության և մորթի վերամշակող գործարանների համար՝ յեղել է մեծ նվաճում:

Ֆրանսիայից այդ ճագարը տարվել է Անգլիա, վորտեղ խոշոր պարգևատրություն է նշանակվել այդ ցեղի ազնվացնողներին:

Ամերիկայում նույնպես շատ կարճ ժամանակամիջոցում կազմակերպվել են որինակելի ճագարաբուծարաններ՝ բացառապես Շինշիլլաներ բազմացնելու նպատակով:

Ներկայումս Յեփրոսյայի մի քանի քաղաքների մորթու գործարաններում այդ ճագարի մորթիները վերամշակում են առանց ներկելու՝ իր բնական տեսքով. նա հաջողությամբ փոխարինում է Չիլիական գեղեցիկ թանկարժեք Շինշիլլայի մորթուն:

Այդ ցեղը սկզբում ստացվել է պատահամբ մի Ֆրանսիացի ճագարաբուծի բուծարանում, սովորական բնույթի և վայրի ճագարների բնույթից, վորի հետևանքով մինչև այսօր էլ յերբեմն Շինշիլլա ճագարի ճագերի մեջ պատահում են 2—3 ճագեր, իրենց նախահայրերի փան՝ կամ սև գույնի «Ալյասկա», կամ սև, բայց մասամբ արծաթա-

փայլ մասերով: Այդ պատահում է հազվագյուտ դեպքերում և վոչ բոլոր մայրերի նկատմամբ:

Շինչիլյա ճագարի քաշը սկզբում լինել է $2\frac{1}{2}$ —3 կիլոգրամ, բայց Անգլիացի ճագարաբուծների ֆանքերով նրանց քաշը հասցրված է մինչև $4\frac{1}{2}$ կիլոգրամի, այնպես մոր ներկայումս գոյութուն ունի յերկու տեսակի Շինչիլյա՝ փոքր և խոշոր: Բայց իմ փորձերից դիտեմ, մոր ներկայումս այդ յերկու տեսակները մեծ մասամբ խառնվել են միմյանց հետ և անհրաժեշտ ճագարաբուծի համար դժվար է փորձել, թե $3\frac{1}{4}$ կիլոգրամ քաշ ունեցողը փոքր տեսակին է պատկանում: Հետևապես պետք է քի նկատի ունենալ այդ հանգամանքները և Շինչիլյա ցեղի քաշը ընդունել $2\frac{1}{2}$ — $4\frac{1}{2}$ կիլոգրամ:

Անհրաժեշտ է շատ լուրջ ուշադրություն դարձնել արու ճագարների հատկութունների վրա, մորոնք պետք է ունենան մուգ և զեղեցիկ մորթի: Մորթու վրա չպետք է լինի դույնի բծեր:

Շինչիլյայի մորթին պետք է լինի խիստ փափուկ ու խիտ: Մաշի յերկարութունը 2 — $3\frac{1}{2}$ սանտիմ: Մորթու գույնը պետք է լինի հիմքից մոխրագույն, մորթից հետո բաց արծաթագույն՝ ծայրերը սև: Խակ արանքներում լինում են ցանցերով հիմքից ցցված արծաթագույն — սպիտակ՝ ծայրերը սև մազեր—մորոնց փայլից մորթին ստանում է այլբանման տեսք: Գերադասելի յե մուգ գույնը: Փորի տակի մորթի գույնը հիմքում լինում է մոխրագույն—բիշ կապույտի նմանությամբ, իսկ մրայից սպիտակ: Աչքերը չափանակագույն: Ականջները վեր ցցված՝ Վ ձևով, մոխրա—կապույտագույն, չուրջը սև գծերով: Վզի վրա մի փոքր տեղ սեպագույն, բաց մոխրագույն: Վտքերը և կուրծքը բաց մոխրագույն: Պոչի վերի մասը սև, սպիտակ մազերի քիշ խառնուրդով, իսկ ներքևը սպիտակ: Մորթու վրա գեղին բծերի ներկայութունը համարվում է անթույլատրելի:

Շինչիլյա ճագարը լավ դիմանում է ցրտերին: Ծնում է մինչև 14 ձագ, մորից պետք է թողնել մոր մոտ մինչև վեց ձագ, թեև կարող են կերակրել և 8 ձագ, բայց փոքր ցույց է տվել, մոր մեծ թվով ձագերի կերակրելը աղքատ է նրանց աճման վրա:

Շինչիլյա ճագարը հրաշալի մայր է և լավ խնամում է ձագերին:



Ն. 5. Շինչիլյա

ԱՆԳԼԻԱԿԱՆ «ԹԻԹԵՆ»

Այդ ճագարը 19-րդ դարում ստացվել է Անգլիայում: Յենթադրը—

վում է, մոր այդ ճագարը ստացվել է միջանի տեսակ ընտանի, մորոնց թվում սպիտակ և սև գույնի ճագարների խառնուրդից:

«Թիթեռ»-ը տարբերվում է ուրիշ ճագարներից իր մորթու վրայի զեղեցիկ և ներդաշնակ գծերով ու բծերով: Նրա գույնը հիմնականում սպիտակ է, բայց մորթու գանազան մասերում լինում են մորեկ գույնի բծեր: Աչքերի վրայի խալերը խիստ նմանվում են թիթեռի, մորի համար ել նրան անվանել են թիթեռանման ճագար:

Ականջները, քիթը և շրթունքները սև են կամ չափանակագույն, յերբեմն մոխրա—կապույտագույն: Ըստ այդ գույների ել մարմնի գանազան մասերում—մորթու վրա լինում են բծեր, գլխավորապես կողքերին, իսկ վզից մինչև պոչը՝ ձգվում է մի բարակ գիծ:


Ականջները ցցված են վեր՝ 10—11 սանտիմետր յերկարությամբ: Բաշը 2 — 3 կիլոգրամ է: Աչքերը չափանակագույն են. կարող է լինի և ուրիշ ըստ մորթու վրայի բծերի գույնի:

Այդ ճագարը հասունանում է 6 ամսեկան հասակում, մորից հետո կարելի յե գուգավորել: Ծնում է մինչև 10 ձագ և շատ լավ խնամում է ձագերին: Շատ դիմացկուն է ու պահանջկոտ չէ:

«Թիթեռ» ցեղի ճագարի մորթին ձեռնտու չե մեր մորթի վերամշակող գործարանների համար, հետևապես և մեր արդյունաբերական ճագարաբուծության համար:

Շատերը պահում են նրանց դեկորատիվ, զեղեցիկ տեսք ունեցող մորթու և համեղ մսի համար:

Ներկայումս շատ դյուղերում կարելի յե տեսնել այդ ցեղին նման—վող, բայց վոչ զտարյուն ճագարներ:



Նկ. 6. Թիթեռանման ճագար՝ միջանի անգամ պարզեցված Յեվրոպական յերկրների ցուցանադեսներում:

«ՀԱՎԱՆՆԱ»

1898 թվականին առաջին անգամ այդ ճագարները ստացվել են Հոլլանդիայում, բայց Ֆրանսացիք պնդում են, մոր առաջին անգամ այդ ճագարը ստացվել է 1902 թվականում Ֆրանսիայում, հայտնի ճագարաբուծուհի Ժ. Լեմարյե—յի բուծարանում:

1906 թվականում այդ ցեղի ճագարը փոխադրվել է Շվեյցարիայից Գերմանիա:

Ռուսաստանում նա առաջին անգամ յերևացել է 1909 թ. Մոսկվայի դյուղատնտեսական ցուցահանդեսում:

Այդ ճագարի մորթու գույնը նմանվելով Հավաննայի ցիգարի գույնին (մուգ չազանակադույն) անվանվել է «Հավաննա»: Հավաննա ճագարը ստացվել է միջանի ճագարների խառնուրդից, վորոնց թվում յեղել են գլխավորապես «Վեննական կապույտ», «Գարնաստայ» և «Սև-Հրազույն» ճագարները: Հավաննայի մորթու մազի հիմքի գույնը կապույտ գորշագույն է, վորը մազերի կիսից փոխվում է միատեսակ մաշուր մուգ չազանակադույնի:


Մորթին շատ խիտ է և նմանվում է միջանի տեսակ թանդարժեք կենդանիների մորթիների (կուղը, սամյուր և այլն): Դրա համար ել ճագարաբուծները պետք է ուշադրություն դարձնեն ընտիր արունների միջոցով ավելի բարելավել այդ մորթու վորակը:

«Հավաննա» ճագարի քաշն է $2\frac{1}{2}$ — $3\frac{1}{2}$ կիլոգրամ: Հասունանում է 6 ամսական հասակում, վորից հետո կարելի յե գուլգամորել: Մնում է մինչև 10 չազանակադույն ձագեր: Մոր տակը պետք է թողնել մինչև 6 ձագ:

Հավաննա ճագարը լավ մայր է և լավ խնամում է ձագերին: Այդ ճագարից ամենագեղեցիկ մորթին ստացվում է 6—8 ամսական հասակում: Աչքերը մուգ չազանակադույն են: Ականջները ցցված են դեպի վեր և ունեն 10—11 սանտիմետր յերկարություն:

Վերջին ժամանակներում աշխատում են արդյունաբերական ճագարաբուծության համար ավելի խոշորացնել այդ ցեղը, անվանելով «արդյունաբերական հավաննա»:

Այդ ցեղի ճագարի բնավորությունը շատ հանդարտ է և հարմար է «գարեննա»-ներում ու պարկեռներում բազմացնելու համար, վորովհետև միմյանց հետ չեն կռվում:



Նկ. 7, «Հավաննա» ցեղի ճագար

«ԱՐԾԱԹԱԳՈՒՅՆ» (անգլիական)

Այդ ճագարը հնադարյան ցեղերից մեկն է, վոր դեռ շատ հին ժամանակներում ստացվել է Սիամում և Բիրմայում (Ասիա):

Առաջին անգամ այդ ճագարը Ասիայից անցել է Իսպանիա, վորտեղից 18-րդ դարում փոխադրվել է Անգլիա: Անգլիայում, այս ինչպես

և մյուս ցեղերի ճագարները, յենթարկվել և կուլտուրական բարելավման, վորի հետևանքով ստացվել է հատուկ տիպի «Արծաթագույն» ճագար:

Ներկայումս այդ ցեղի ճագարը տարածված է շատ յերկրներում:

Արծաթագույն ճագարի մորթին հիմքից լինում է մոխրա-կապույտ-գույն, խիտ մազերով, իսկ վերի մասում գունավորված է լինում սև սպիտակ և մոխրագույն գույներով: Հիշված գույնի մազերը վեր են ցցված լինում, վորի հետևանքով մորթին ստանում է շատ գեղեցիկ արծաթափայլ տեսք:

Մորթին ամբողջ մարմնի վրա պետք է լինի միատեսակ արծաթագույն, առանց կողմնակի բծերի:

Մազերը շատ կարճ են, վորի հետևանքով մորթին ավելի յե գնահատում: Արծաթագույն ճագարի քաշը 2—3 կիլոգրամ է: Հասունանում է 6 ամսական հասակում: Տալիս է մինչև 10 ձագ, վորից կարելի յե թողնել մոր մոտ մինչև 6-ը:

Ձագերը մինչև 25—30 որեկան հասակը լինում են մաքուր սև գույնի, վորից հետո փոխվում են արծաթագույնի: Փորձերը ցույց են տվել, վոր ձագերը վորքան լավ պարմաններում են խնամվում, աչքան նշառաբ փոխվում է գույնը: Գույնի փոխվելը սկսվում է գլխից և հետզհետե անցնում ամբողջ մարմնին: Հենց այդ ձևով գունավորվելը ապացույց է ճագարի գտարյուն լինելուն:

Արծաթագույն ճագարը շատ դիմացկուն է, լավ մայր է և մեծ խնամքով պահում է ձագերին:

Նա խառապահանջ չէ, շուտ է հարմարվում կլիմայական պայմաններին: Միակ բացասական կողմն այն է, վոր փոքր է, քաշում է 2—3 կիլոգրամ:

Չնայած նրանց թեթևաբաշ լինելուն, նկատի ունենալով նրա շուտ հասունանալը, մեծ խնամք չպահանջելը և սակավակերությունը, նրան դարձնում է անսխառպես ավելի ձեռնաու, քան ծանրաբաշ «Ֆլանդր» ցեղի ճագարները:

Արծաթագույն ճագարը շատ ձեռնաու յե արդյունաբերական ճագարաբուծության համար: Նրա շատ գեղեցիկ մորթին վերամշակվում է գործադրվում է իր բնական գույնով՝ առանց ներկելու:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
Մ. Ա. ՄԻՍԿԻՆԻՆ
1948

«ՎԵՆՆԱԿԱՆ ԿԱՊՈՒՅՏ»

1895 թվականին առաջին անգամ այդ ճագարը ստացվել է Վիննա քաղաքում՝ ճագարաբույծ Կ. Շուլցի Լանքերով, վորը իր գեղեցիկ միատեսակ գույնի պատճառով մեծ հաջողությամբ տարածվել է շատ յերկրներում:

Նրա գույնը նման է մուգ մոխրա-կապտագույն աղափնու գույնի:


«Վեննական կապույտ» անունը նա ստացել է առաջին անգամ Վիննա քաղաքում բուծվելու պատճառով: Քաշն է 3—4½ կիլոգրամ:

Շատ դիմացկուն է, հասունանում է 6—7 ամսական հասակում, վորից հետո կարելի չէ գուգավորել:

Ծնում է մինչև 12 ձագ, վորից պետք է թողնել վեցը: Մայրը շատ լավ խնամում է իր ձագերին: Զտարյուն ձագերը ծնված օրից պիտք է լինեն կապտագույն, յեթե նրանց մեջ պատահում են ուրիշ գույնի ձագեր, ապա այդ նշանակում է, վոր գլխավորապես արունները այնքան էլ զտարյուն չեն: Մորթին պետք է լինի միապղպղ կապտագույն առանց վորևե ուրիշ գույնի բծերի: Աչքերը մուգ մոխրակապտագույն են: Մորթին պետք է լինի խիտ և շատ փափուկ, վորը վերամշակվում է գործադրվում է առանց ներկելու՝ իր բնական գույնով: Գերադասվում է ավելի մուգ գույնի մորթին:

Վեննական կապույտը շատ գիմացկուն է շատ հարմարվում է կլիմայական պայմաններին:

Արդյունաբերական ճագարաբուծության համար վիննական կապույտ ճագարը չափազանց նպատակահարմար է:



Նկ. 9. Վեննական կապույտ ճագար

«ՎԻՆՆԱԿԱՆ ՍՊԻՏԱԿ»

Մինչև այդ ցեղի բուծվելը, բոլոր սպիտակ գույնի ճագարներն ունեյին կարմիր աչքեր:

ճագարաբուծները շատ աշխատանք են թափել ստանալ սպիտակ ճագար՝ այլ գույնի աչքերով, բայց այդ աշխատանքները մնացել են անհետևանք:

Միայն վերջին ժամանակներս մի ավստրիացի Մուքքի ազդանունով ճագարաբուծի հաջողվել է «Վեննական կապույտ» և «Հսլլանդական»

ճագարների խառնուրդից ստանալ մաքուր սպիտակ գույնի ճագար՝ կապույտ աչքերով:

Այդ ճագարի կենդանի քաշն է 2¾—3¾ կիլոգրամ: Մորթին խիտ և փափուկ է մաքուր սպիտակ գույնի:

«Սպիտակ Վիննական» ճագարը «Սպիտակ Հսլլայից» տարբերվում է միմիայն քաշով և աչքերի գույնով: Դիմացկուն է և շատ լավ խնամում է իր ձագերին:

Կառված չկա, վոր Վեննական սպիտակ ճագարը, արդյունաբերաբար ճագարաբուծության մեջ բռնելու չէ իր վորոշ տեղը:



Նկ. 10. Վեննական սպիտակ ճագար կապույտ աչքերով

«ԱՆԳՐԱԿԱՆ» ՃԱԳԱՐ

Արդյունաբերական ճագարաբուծարաններում բոլոր ցեղի և տեսակի ճագարներից ամենամեծ արդյունք է ստացվում միայն այն ժամանակ, յերբ ճագարը բուծում են միս և մորթի ստանալու համար:

Միայն «Անգրական» ցեղին պատկանող ճագարն է, վորի բուծման գլխավոր նպատակն է արդյունք ստանալ նրա կենդանի ժամանակը:

Այդ ճագարի բաղմացումը հայտնի չէ դեռ 16-րդ դարից:

Գերմանիայում այդ ճագարի բաղմացումով զբաղվել են 17-րդ դարից, վորտեղ դեռ այն ժամանակ «Անգրական» ճագարի խափառից պատրաստվում էր բարձր տեսակի գործվածքներ:

Այժմ էլ գոյություն ունեն հատուկ գործարաններ այդ ճագարի թանկարժեք մազից գործվածքներ պատրաստելու համար:

Թե վոր յերկրում է առաջին անգամ բուծվել այդ ճագարը, դեռ հայտնի չէ:

Յենթադրվում է, վոր «Անգրական» անունը պատահական է, բայց վոր Անատոլիայի բնակիչները հայտնի չեն յեղել վորպես ճագարաբուծներ, հետևապես ճագարի այդ ցեղը չի կարող անվանվել նրանց մայրաքաղաքի անունով:

17-րդ դարում Գերմանիայում պարզեատրվել են այն ճագարաբուծները, վորոնք բաղմացրել են անգրական ճագարներ:

Նրա բաղմացումը լայն ծավալ է ստացել Ֆրանսիայում, վորտեղ այդ ճագարների մազի արտադրանքը հասցրված է բարձր աստիճանի, վորոնց բաղմացման համար գերծարաններին կից կառուցվել են խոշոր բուծարաններ:

Անդորական ճագարի մաքուր սպիտակ գույնի խափամազը շատ բոլոր—
քուշ և մետաքսի նման փայլուն է. մազի յերկարութիւնը յերբեմն հաս—
նում է մինչև 30 սանտիմետրի, բայց սովորաբար լինում է 10—15 սան—
տիմետր: Խափամազը բոնում է շատ խիտ մարմնի բոլոր մասերում: Այ—
բերը կարմիր են: Ականջների յերկարութիւնը 9—12 սանտիմետր՝ վեր—
ցցված V ձևով: Ականջները նույնպէս ծածկված են խիտ խափամազով: Յերբեմն լինում են բացառիկ դտարյուն տեսակներ, վորոնց ականջնե—
րի ծաշերին լինում են փնջածն յերկար ու խիտ խափամազ: Այդ փնջե—
րի ներկայութիւնը նրանց համար լամ գնահատական է, իսկ բացակա—
յութիւնը վոչ գտարյուն լինելու ազգացույց է:

Փնջածն ականջներ ունեցող «Անդորական» ճագարներն ունեն ֆրանսիական ծագում:

Չարլզ Դարվինի կարծիքով «Անդորական» ցեղի ճագարներն իրենց մտաւոր հատկութիւններով ավելի բարձր են, քան մյուս տեսակ ճագարները:

Այդ ճագարները շատ դիմացկուն են: Հասունանում են 7—8 ամսա—
կան հասակում: Ծնում են մինչև 10 ձագ՝ մաքուր սպիտակ գույնի, վո—
րոնցից մոր տակը պետք է թողնել 6—ը:

«Անդորական» ճագարի խափամազի ամենաբարձր տեսակը ստաց—
վում է նրա մի տարեկան հասակից մինչև 4 տարեկանը, վորից հետո խափամազի վորակն ընկնում է:

Անդորական ճագարի բուրգը կարելի յէ համարել ձեռքով, բայց նպատակահարմար է սանրել փայտե սանրով: Այդ աշխատանքը պետք է կատարվի խնամքով և զգուշ, ցով չպատճառելով ճագարին: Անդ—



Նկ. 11. Անդորական ցեղի ճագար

րական ճագարի մազը պետք է համարել 3—6—9 ամսական հասակում, իսկ հետո 45—60 որ մի անգամ սանրել:

Անդորական ճագարի սանրելը միայն բուրգ համարելու համար չէ, դրանով նա ազատվում է իրեն անհանգստացնող ավելորդ մազերից:

Այդ ճագարից տարեկան կարելի յէ ստանալ մինչև 300 դրամ խա—
փամազ: Նրա խափամազը գոյութիւն ունեցող բոլոր խափամազերից ավելի թանկ է գնահատվում:

Մեր արդյունաբերական ճագարաբուծութեան համար շատ մեծ նշանակութիւն ունեն «Անդորական» ճագարները, վորոնց պետք է բաղ—
մացնել հատուկ բուծարաններում և խնամելու հատուկ պայմաններ քաղցծել: Միայն մաքուր պահելով կարելի յէ նրանցից ստանալ բարձր վորակի խափամազ:

Անդորական ճագարներին նմանվողներ կան նաև ուրիշ գույնի—սև մոխրագույն և կապույտ ճագարներ:

«ԱՍՏՈՐԵԿՍ» (կուրպաքա)

Մինչև այս ցեղի ճագարի յերեան գալը, ճագարաբուծները յերկաթ ժամանակ աշխատել են ստանալու այնպիսի ճագար, վորի մորթին լինի առանց քստամազերի, բայց այդ աշխատանքները միշտ ել մնացել են անհետևանք:

1917 թվականին արեմտյան ֆրանսիայի գյուղերից մեկում, մի արքատ, Ժիլլետ աղանուհու պատահամբ գյուղացի Կալյոնի բակում տեսնում է շատ զեղեցիկ գույնի մի քանի ճագարներ, վորոնց չափա—
զանց խիտ, փափուկ և առանց քստամազերի չաղանակագույն մորթի—
ները խիտ նման է յեղել «Կուրպե» (բոր) թանգարտեք մորթի:

Այդ ճագարները հենց այդ նմանութեան համար ել անվանվել են «Կաստոր» (կուր) «բեկ» (արքա) «Կաստորեկ»:

Յենթադրվում է, վոր այդ ճագարները ստացվել են վոչ թե մաք—
ղու միջոցով, արհեստական ընտրութեան հետևանքով, այլ բոլորովին պատահամբ մուտացիոն կարգով, վորովհետև գյուղացի Կալյոնի տնտեսութեան մեջ վոչ մի ցեղական աշխատանք չի տարվել այդ նպա—
տակով:

Արքատ Ժիլլետը վերցնելով մի քանի գույլ այդ ճագարներից բաղը—
տում է քաղցմացնել քացառապէս «Կաստորեկ» ճագարները:

1919 թվականին ֆրանսիացի գիտնական Կոլերի աշխատանքների հետևանքով այդ ճագարներից ստացվել են ել ավելի հետաքրքիր և թանգարտեք տեսակներ:

Վերջին տարիներին ընթացքում դերմանացի ճագարաբուծները շա—
րունակելով «Կաստորեկ»-ի բարելամման աշխատանքները, կարո—
ղացել են ստանալ այդ ճագարի խառնուրդից մի քանի տեսակ «Բեկ»—
ներ՝ «Շինչիլլաբեկ», «Մյանդրեկ» և այլն, բայց այդ բոլորի մեջ «Վիդրակ»-ի մորթին նմանվելով «Վիդրա» (Վրաչուն) կենդանու թանգարտեք մորթին, ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր ճագար—
ներից ամենաթանկ գնահատվողն է:

Բոլոր տեսակի «Բեկ»-ների մորթիները կարճ և խիտ մազեր ունե—
նալու հետևանքով, վերամշակվում են առանց խուզելու, վորը շատ խո—
շոր նշանակութիւն ունի վորպէս հում նյութ վերամշակող գործարան—
ների համար:

Մեծ նշանակութիւն ունի նաև այն հանգամանքը, վոր այդ մոր—
թին գործադրվում է իր բնական գույնով՝ առանց ներկելու:

Վոչ մի ճագարի ցեղ յերեան գալու առաջին ջրջանում չի արժանա—
ցել այնքան մեծ ուշադրութեան, վորքան «Կաստորեկ»-ը:

Այդ ճագարը թեև մեր արդյունաբերական ճագարաբուծութեան համար անի խոշոր նշանակութիւն, բայց վորովհետև զեռ լիակատար

չի ուսումնասիրված նրա խնամելու և բարձրացնելու յեղանակները, փորձեր դեռ գտնվում են հետազոտություն չըջանում և բազմացնվում են միմիայն ցեղական ճազարարածարաններում, այդ պատճառով և բնականորեն նպատակահարմար չի համարվում մեր արդյունաբերական ճազարարածարաններին հանձնարարել այդ լիանգարժեք ճազարները:

«Կատորրեկս»-ը հասունանում և 7-8 ամսական հասկում: Քաշը $2\frac{1}{2}$ —4 կիլոգրամ: Աչքերը մուգ չաղանակադույն են: Ականջները վերջավաճ: Մնում է մինչև 10 ձագ, փորոնցից պետք է թողնել մինչև 6-ը: Շատ լավ խնամում և ձագերին:



Նկ. 12. Կատորրեկս


«ՇԱՄՊԱՅՆ»

Այս ցեղի ճազարները չափազանց տարածված են Թրանսկասպիանում: Տրուա և Լիոն քաղաքներում գտնվում են հատուկ շուկաներ, փորտեղ բացառապես ծախվում են «Շամպայն» ճազարներ:

Առաջին անգամ Շամպայն ճազարը Հնդկաստանից բերել են Ֆելդրուպա 1510 թվականին:

Նրա համեղ և յուղոտ միսը, նույնպես և նրա խիտ, փափուկ ու միատեսակ արծաթագույն մորթին, շատ բարձր և գնահատվում: Նա նմանվում է «Արծաթագույն» ճազարին, միայն տարբերվում է նրանով, փոր Շամպայնը ավելի բաց դույնի չի:

Շամպայն հասունանում է 6—7 ամսական հասկում, կշիռը լինում է $3\frac{1}{2}$ — $4\frac{1}{2}$ կիլոգրամ:



Նկ. 13. Շամպայն ցեղի ճազար

Մնում են մինչև 10 ձագ, փորից նպատակահարմար է մոր մոտ թողնել մինչև 6-ը:

«Շամպայն»-ի ձագերը ինչպես և «Արծաթագույն»-ինը ծնվում են բոլորովին սև գույնի, փորոնց դույնը 20—25 որևիցե հասակից սկսում է հեռոցներ փոխվել բաց արծաթագույնի:

Պաշտ արդյունաբերական ճազարաբուծարաններում այդ ճազարներին բազմացնելը համարվում է նպատակահարմար:

«Շամպայն»-ը շատ դիմացկուն է, հեշտ է հարմարվում կլիմայական բոլոր պայմաններին և տալիս է լավորակ միս ու մորթի:

«ԳԱՐՆԱՍՍԱՅ» (ԱՔԻՍԱՆՄԱՆ)

Ներկայումս այդ ցեղի ճազարը տարածված է փոշ միայն Ֆելդրուպայում, այլ և Ֆելդիպոսում, Ճապոնյայում և Չինաստանում:

Հայտնի չի թե սկզբում փորտեղ կամ ինչ տեսակ ճազարների խառնուրդից և ստացվել այդ հետաքրքիր ցեղը: Պետք է ասել, փոր «Գարնաստայ»-ի ծագման վերաբերյալ կան դանազան կարծիքներ, որից և յենթադրվում է, փոր նրա հայրենիքը Հիմալայան սարերի ստորոտներն են, փորտեղից անցել է Չինաստան, Սիրիա և վերջերս նաև Ֆելդրուպական շատ յերկրներ:

Հայտնի գիտնականներ, փորոնց թվում և Չարլզ Դարվինը, յենթադրում են փոր «Գարնաստայ» ճազարը առաջին անգամ ստացվել է Անգլիայում «Արծաթագույն» ճազարի խառնուրդից:

— Եվ զմուտց նմո իսթվզմոկ մյոհնոտոյոզ դոկտոգամեն վետոյոյմիզ, առջին անգամ ստացվել է 1850 թվին: Հայտնի չի, փոր 1889 թվին կազմակերպվել է Գերմանիայի ճազարաբուծների միություն, փորոնք, բազմացրել են բացառապես «Գարնաստայ» ցեղի ճազարներ:

Ռուսաստանում առաջին անգամ 1909 թ. այդ ճազարը յերեվանցի և Մոսկվայի գյուղատնտեսական ցուցահանդեսում:

Այդ ճազարն իր արտաքին տեսքով շատ նմանվելով Սիրիայում գոյություն ունեցող թանգարժեք «Գարնաստայ» կենդանուն, դրա պատճառով էլ ստացել է «Ռուսական-Գարնաստայ» անունը: Նրա մորթին շատ կարճ մազերով է ծածկված, խիտ և փափուկ: Քաշը $1\frac{1}{2}$ —2 կիլոգրամ է, լինում են նաև 3 կիլո քաշ ունեցողներ, բայց թեթևաքաշի մորթին ավելի լավորակ է:

Գույնը ձյունի պես սպիտակ է, իսկ ականջները, դուռնը, պոչը և թաթերը սև կամ չաղանակադույն, գերազանցվում է սև գույնը: Դուռնի և ականջների սև կամ չաղանակի գույնը ձերտված հատակում դալիանում է: Բայց իմ գործնական աշխատանքների ընթացքում համոզվել եմ, փոր նույնիսկ չձերտացած «Գարնաստայ» ճազարները յենթադրվելով կլիմայական դանազան պայմանների ազդեցության, փոխում են իրենց ականջների և դնչի գույնը, ստանալով ավելի բաց կամ մուգ գույն:

1919 թվականին գերմանացի դոկտոր Շույցի և 1929 թ. խորհրդային գիտնական Ն. Իլյինի կատարած փորձերից պարզվել է, փոր «Գարնաստայ» ճազարի ականջների, դնչի, թաթի և պոչի գույնը կանգնել չի փոխել սևից-սպիտակ կամ սպիտակից սև գույնի, յենթադրվելով նրան դանազան աստիճանի ջերմության:

Այդ ճազարները հասունանում են 5—6 ամսական հասկում: Մնում

են մինչև 10 ձագ, վորից պետք է թողնել մոր տակը մինչև 6-ը:
 Զագերը ծնվում են մաքուր սպիտակ գույնի. 20 որից հետո հետո-
 հետև սկսվում է նախ սևանալ քիթը, հետո ականջներն ու թաթերը:
 Այդ ճագարի աչքերը կարմիր են:

Նրանք շատ կայտառ ու գիմացկուն են, կերի և խնամքի խնդրում
 պահանջկոտ չեն:

Որինակելի մայրեր են և լավ խնամում են ճագերին:

Արդյունաբերական ճագարաբուծարաններում կիսարնական սալ-
 ժաններում բազմացնելու համար «Գարնատայ» ճագարը անփոխա-
 րենելի չէ:

Ներկայումս շատ տեղերում կարելի չէ պատահել «Գարնատայ» ճա-
 գարին նմանից ալյաստոված ճագարների, վորոնք յեթե զուգավորվեն
 զտարյուն «Գարնատայ» արունների հետ, անկասկած կտան ավելի լավ
 վորակի ձագեր: «Գարնատայ» ճագարը իր թեթև քաշ ունենալու հետև-
 վանքով ներկայումս մեծ չափերով չի բազմացվում մեր արդյունաբերա-
 կան ճագարաբուծարաններում:

Բայց կասկած չկա, վոր մոտ սպագայում այդ ճագարը խոշոր տեղ
 կրոնի «Գարեննա» սխտեմով ճագար բազմացնելու ասպարիզում:



Նկ. 14. Գարնատայ ճագարներ 3 ամսականից մինչև 8 ամսական հասակը

«ԽԸԼՇԸՏԻԿ» (Տրուսիկ)

Այս ցեղի ճագարներն այն հասարակ սովորական բազմագույն և
 չափի ճագարներն են, վորոնց կարելի չէ տեսնել ամեն տեղ թե դյուղում
 և թե քաղաքներում, անխնամ պալմանների մեջ, գոմերում, քակերում
 և զանազան ծածկոյների տակ:

Նրանք կերի ու խնամքի նկատմամբ խստապահանջ չեն, չսփա-
 ցանց գիմացկուն են, շատ լավ մայրեր են, հրաշայի խնամում են ձա-
 գերին: Ծնում են տարբեր գույների մինչև 12 ձագ: Նրանց քաշն է 11½-
 23½ կիլոգրամ:

«Խըլըշիկ»-ի մորթին շատ եթան է գնահատվում, վորի հետևանքով
 էլ նպատակահարմար չի նրանց բազմացնել:

Այդ ճագարները պետք է պահել միմիայն մետիզացիայի յեթար-
 կելու համար, վորովհետև դրանց և զտարյուն ցեղական բնախր արու
 ճագարի խառնուրդից ստացվում են լավ մորթի ունեցող ճագա-
 րներ: Որինակ՝ իմ անձնական փորձերի ընթացքում յեղել են դեպքեր
 յերբ սպիտակ գույնի հասարակ եղ ճագարի և զտարյուն «Շինչիլլա» ցեղի
 արու ճագարի խառնուրդից ստացվել են այնպիսի հետաքրքիր ու գեղե-
 ցիկ մատղաշներ, վորոնք հատուկ հանձնաժողովի վորոշմամբ բալական
 թանգ են գնահատվել:

«Խըլըշիկ»-ների չափազանց գիմացկունության և պահանջկոտ չի-
 նելու հետևանքով «Գարեննա»-ներում պահելու համար նպատակահար-

մար է միմիայն այն պալմանով, վոր նրանց զուգավորեն գտարյուն ցե-
 ղական արու ճագարի հետ:

«ՎԱՅՐԻ» ՃԱԳԱՐ

Մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր տեսակի ճագարները դա-
 րերի բնթացքում թե՛ ընտելացան և թե՛ մետիզացիայի միջոցով ստաց-
 վել են վայրի ճագարից:

Վայրի ճագարը շատ գիմացկուն է, հասունանում է 5 ամսեկան
 հասակում. նրա քաշը 1½—2 կիլոգրամ է, յերկարությունը 50 սանտի-
 մետր, իսկ բարձրությունը 18 սանտիմետր:

Ծնում է մինչև տասը ձագ. որինակելի մայր է, ճագերին խնամում
 է այնքան ժամանակ՝ մինչև վոր նրանք կարողանան ինքնուրույն կեր-
 ակով կերակրվել: Նրա մորթու գույնը գեղնամոխրագույն է և դնահատ-
 վում է շատ եթան: Վայրի ճագարը թեև արտաքինով շատ նման է նա-
 պաստակին, բայց իր վոշ մի հատկությունով նրան նման չի. դրանց
 մեջ մինչև անգամ գոյություն ունի ցեղական թշնամություն: Այն կար-
 ծիքը, թե կարելի չէ ճագարը զուգավորել նապաստակի հետ, անհիմն է,
 յես յերկար ժամանակ փորձեր եմ զուգավորելու ճագարը նապաստակի
 հետ, բայց այդ փորձերը միշտ անցել են ապարդյուն:

Վայրի ճագարի միսը անհամեմատ համեղ է նապաստակի մսից:
 Վայրի ճագարը բեղմնավորվում է տարվա ընթացքում մինչև 8 անգամ
 և հղիության չրջանը տևում է 30—32 օր, իսկ նապաստակը բեղմնավոր-
 վում է տարվա ընթացքում 3—4 անգամ և հղիության չրջանը տևում է
 մինչև 50 օր:

Ճագարը ծնում է աչքերը փակ և առանց մաղի մինչև 12 ձագ, իսկ
 նապաստակը ծնում է 3—4 ձագ, վորոնց աչքերը բաց են լինում և մա-
 գերով ծածկված:

Վայրի ճագարը ինքն ապրում և իր ճագերին խնամում է մեկ մետր
 խորությամբ հողի մեջ քանդած բնում, վորտեղ և պաշտպանվում է
 թշնամիների հայածանքներից, իսկ նապաստակը իր բունը չինում է
 գետնի յերեսին, թփերի մեջ և շատ անգամ թողնում է իր 10—12 որե-
 կան ճագերին ու հեռանում:

Վտանդի ժամանակ ճագարն իր հետին վորտքերով ուժեղ խփում է
 գետնին և զգուշացնում է ընկերներին, իսկ նապաստակը այդ սովորու-
 թյունը չունի:

Վայրի ճագարները գլխավորապես ապրում են խմբերով: Նրանք
 գիշերային կենդանիներ են. ցերեկները հանգստանում են բներում, իսկ
 գիշերները դուրս գալիս՝ կերակրվելու համար:

Ճագարներն ավելի խորամանկ են, քան նապաստակները, չնայե-
 լով նրան, վոր նապաստակը ավելի արագավաղ է, բայց ճագարն իր խո-
 րամանկությամբ ավելի հեշտությամբ է վտանգից խուսափում:

Վայրի ճագարը ներկայումս մեծ չափերով բազմացել է Ալստրալիա-
 յայում և Նոր-Չելանդիայում:

Մոտ 30 տարի առաջ վոմն Մալաիսիակի յերերով Ալստրալիայից
 միջանի դույզ վայրի ճագարներ ապառ բաց է թողել Ուդեսասյի չրջա-
 նում: Այժմ Թեթոնի, Ուդեսասյի և Ուկրայնայի մի քանի չրջաններում
 այդ ճագարները խոշոր քանակությամբ կա:

Բայց վորսորդներն և վալրի դադանների անխնա վոչնչացնելու հետևանքով վերջերս այդ ճաղարների թիվը խիստ պակասել է:

Ներկայումս ձեռք են առնում միջոցներ պաշտպանելու այդ ճաղարների գոյությունը, վորոնք ապագայում պետք է բազմացվեն «Գարեն-նա»-ներում և կղզիներում, մետիզացիայի յենթարկելով բնական պար-մաններում առանց մեծ շինարարական ծախսերի:

ԻՆՉ ՑԵՂԻ ՃԱԳԱՐ ՊԱՀՆԵԼ

Ամենից առաջ պետք է վորոշել, թե ի՞նչ նպատակով է կազմակերպ-վում ճաղարաբուծական տնտեսությունը: Վորովհետև ցեղական, մո-ռե մորթու կամ խալամալ ստանալու նպատակով կազմակերպված բուծարաններում, տարբեր ձևերով ու տարբեր պայմաններում են խնամվում ու բազմացվում ճաղարները, վորի հետևանքով էլ պահանջ-վում են համարատեսական ցեղի ու զիմացկունության ճաղարներ: Ո-րինակ՝ միս ու մորթի ստանալու նպատակով կազմակերպված արդյու-նարբերական ճաղարաբուծարանում աննպատակահարմար է պահել «Ան-գորական» ճաղարներ, վորոնց բազմացում են զլխավորապես խալա-մալ ստանալու համար:

Արդյունաբերական ճաղարաբուծարաններում նպատակահարմար է պահել մի կամ յերկու ցեղի ճաղարներ: Շատ ցեղի ճաղարներ ունենալը դժվարացնում է նրանց ցեղական գիծը պահել, վորի հետևանքով էլ մորթիների միատեսակ գույնը փոխվում է դանադան գույների ու խա-վերի և զգալի չափով դրում նրանց արժեքը:

Մեր կարծիքով մի ցեղի ճաղար պահելը՝ բացի այն, վոր նպատակում է ավել լավորակ մորթի ստանալուն, այլ և խոշոր չափով հեշտացնում է ճաղարաբուծարանի աշխատանքները:

Պետք է ի նկատի ունենալ, վոր հանձնվելիք մորթիները պարու-յալում յեթե մորթիները միատեսակ գույնի յեն, ավելի թանկ են դնա-հատվում, քանի՞նք բազմազան գույնների մորթիները: Իսկ միատեսակ գույնի մորթիները կարելի չէ ստանալ այն դեպքում, յեթե տնտե-սություն մեջ բազմացվում է մի ցեղի ճաղար:

Խոշոր ցեղի ճաղարից ստացվում է լավորակ մորթի և միս: Բայց վորովհետև նրանք խնամքի և կլիմայական պայմանների տեսակետից շատ պահանջկոտ են, ուստի սկզբնական շրջանում նպատակահարմար է պահել խոշոր ցեղի ճաղարներ:

Բոլոր ճաղարների մեջ ամենազիմացկունները և կլիմայական ու խնամելու պայմաններին հեշտ հարմարվողները մանր ցեղի ճաղարներն են:

Բայց վորովհետև նրանց մորթին փոքր է, վորի հետևանքով եժան են գնահատվում, այդ հանգամանքը նրանց զրկում է տնտեսապես նաղ-տակահարմար լինելուց:

Մանր ցեղի ճաղարներ կարելի չէ պահել բացառապես մետիզացի-այի նպատակով:

Ճաղարաբուծության առաջ ներկայումս խնդիր է դրված ավելաց-նել արտահանման հումուլթների քանակը, վերամշակող գործարաննե-րին տալ լավորակ մորթի և կոտլերատիվներին մատակարարել համեղ միս:

Այդ խնդիրը հեշտություն մը լուծելու համար նպատակահարմար է

պահել այնպիսի ճաղարներ, վորոնք պատկանում են միջին կշիռ ունե-ցող ցեղի և հայտնի յեն իրենց արժեքավոր մորթիներով ու լավորակ մսով:

Այդպիսիներից կարելի չէ համարել «Շինչիլա», «Շամպայն», «Վեն-նական կապույտ», «Սպիտակ հակա» և «Վեննական սպիտակ»:

(Սպիտակ հակա ճաղարի քաշը պետք է լինի մինչև 4—4½ կիլո-գրամ, գրանից խոշոր տեսակները զիմացկուն չեն):

Մինչև 1930 թիվը, Անգլիոյկաում ճաղարաբուծություն գոյու-թյուն էի ունեցել, իսկ մի քանի անհատների մոտ յեղած ճաղարների թիվը յեղել է շատ անշահն:

Այն հանգամանքը, վոր ներկայումս ճաղարաբուծարաններ կաղմա-կերպվում են առաջին անգամ, ճաղարաբուծները հնարավորություն ունեն ընտրել իրենց պայմաններին ու հնարավորություններին համա-պատասխան մի խալն մի ցեղի ճաղար և պլանաչափ դարգացնել ճաղարա-բուծական տնտեսությունը:

Միաժամանակ ճաղարաբուծներից ներկայումս պահանջվում է չա-փազանց լուրջ և դժվար աշխատանք, վորպեսզի իրենց հանձնված ցե-ղական ճաղարներից, վորոնք խնամվել են զլխավորապես քաղաքնե-րում վանդակների մեջ, յերբեմն էլ արտասահմանից ստացված, «որի-նակելի» բուծարանների պայմաններին սովորած, կազմվածքով թույլ և մասամբ էլ հիվանդ ցեղական թանդարժեք ճաղարից ստանան այն-պիսի առողջ, լավորակ, զիմացկուն մատղաշներ, վորոնք պետքական լինեն խորհրդային Անգլիոյկաում նոր զարգացվող արդյունաբերա-կան ճաղարաբուծության հիմնական հոտի համար:

Բուծարանի զլխավոր խնդիրներից մեկն էլ պետք է լինի՝ պահել վոչ ավել, քան յերկու ցեղի ճաղար, բայց գերպատելի յեն մի ցեղը:

Մենք 5—7 եղի համար պահել մի արտադրող արու ճաղար:

Արու ճաղարի վորակի և խնամելու վրա մեծ ուշադրություն պետք է դարձնել, վերովհետև նրանից է կախված ամբողջ հոտի վորակի բարձրացումը:

Չհատունացած ճաղարների զուգավորումը միատուժ է թե մոր ա-ռողջությունը և թե ծնված ճագերը լինում են թույլ կազմվածքով:

Պետք է հիշել, վոր մանր ցեղի ճաղար զուգավորել կարելի չէ 5—6 ամսեկան հասակում. միջակ ցեղինը 6—7 ամսեկան, իսկ խոշոր ցեղինը 8—9 ամսեկան հասակում:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՎԸ

Արդյունաբերական և նույնիսկ ցեղական խոշոր ճաղարաբուծա-րանների կազմակերպման գործը մեզ մոտ բոլորովին նոր է, պահան-ջում է լուրջ վերաբերմունք ու մեծ փորձնական աշխատանք:

Հաճախ պատահում է, վոր սկզբնական շրջանում կատարված որ-խալների ուղղման համար պահանջվում է յերկար ժամանակ և խոշոր ծախսեր:

Վոչ մի ձեռնարկ չի կարող տալ այնպիսի ցուցումներ, վորքան ճաղարաբուծը կարող է ձեռք բերել իր ամենորոյա գործնական աշխա-տանքների ընթացքում, ուսումնասիրելով այդ չափազանց հետաքրքիր կենդանու ընամբությունը, նրան խնամելու և բնակարաններ կաու-ցելու միջոցով:

Ճագարներ ներկայումս մեզ մոտ պահում են յերեք տարբեր ձևով՝ վանդակային, պարկետային և գարենային: Այժմ այդ յերեք ձևերից ամենատարածվածը վանդակային ձևն է, վորովհետև մեզ մոտ արդյունաբերական ճագարաբուծությունը դեռ նոր է զարգանում, իսկ դոյություն ունեցող բոլոր ցեղական ճագարաբուծարաններում ցեղական ճագարների խնամելն ու բազմացնելը տարվում է վանդակային ձևով, վորովհետև ցեղական ճագարների հատուկ հատկանիշները և դասարանությունը պահելու համար, նրանց պետք է տեղափոխել ատանձին ատանձին վանդակներում: Բացի այդ վանդակներում խնամվում ու բազմացվում են այն միլիոնավոր բազմատեսակ ցեղերի ճագարները, վորոնք պատկանում են քաղաքներում ապրող բանվորներին, ծառայողներին, և քաղաքացիներին, վորոնք ազատ հողամասեր և այլ հնարավորություններ չունենալով, բացի վանդակում խնամելուց ուրիշ միջոց չեն ունենում պահել չեն կարող:

Պետք է ասել, վոր ճագարները հարմարվելով ամեն տեսակ պայմանների կարող են ապրել, նույնիսկ բազմաանոց դանդաղ արկղների և տակառների մեջ:

Շատ անտեսություններում կարելի է տեսնել, թե ինչպես ճագարը մի փոքրիկ արկղի նմանվող վանդակում բնադառնալիս և, կուտակված աղբի ու մեղի մեջ, անբարեխիղճ քաղաքային աչքի առաջ տանվում է:

Կարելի է տեսնել, թե ինչպես մսուրի քաղաքային հատվածներում, կերը տալիս են աղբի վրա, վորը դեռ չկերած փշանում և կեղտոտությունից ու զարհուրեցիկությունից: Պարզ է վոր այդպիսի պայմաններում խնամվող ճագարից, անկարելի է ստանալ առողջ և լավորակ ճագեր:

Ճագարաբուծությունից արդյունք ստանալու համար անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ:

Վանդակներ պատրաստում են տարբեր ձևերով:

Ամենանպատակահարմար վանդակն այն է, վոր չինելու համար պահանջվում է քիչ շինանյութեր, իսկ մեծությունը համարադասարանում և ճագարի ազատ շարժելիություն, դուրսփոխելիություն, ծնելուն և ձագերին մեծացնելու պահանջներին:


Վանդակը պետք է չինվի այն հաշվով, վոր մեջը կանգ չ'առնի մեզը, հեշտ մաքրվի, չոր լինի, առատ լույս և ոդ ունենա:

Վանդակները բացի դռնակներից վոչ մի անցք չպետք է ունենան, վորովհետև ճագարը շատ դժվար է դիմանում միջանցիկ քամիներին:


Տարբեր ցեղերի ճագարների համար պահանջվում են տարբեր մեծություն վանդակներ, որիևակ՝ խոշոր ցեղի ճագարի համար՝ խոշոր վանդակ, միջակ ցեղի ճագարի համար՝ միջակ մեծություն և մանր ցեղի ճագարի համար՝ փոքր վանդակ: (տես նկար № 15)

Փորձերը ցույց են տվել, վոր պետք է խուսափել փոքր վանդակների չինելուց, վորովհետև սկզբնական շրջանում մանր ցեղի ճագարների համար պատրաստված վանդակները, հետագայում անպետք են լինում, յեթե անտեսություններ մանր ցեղի ճագարներից անցնում է խոշոր ցեղեր պահելուն: Իրա համար էլ նպատակահարմար է հենց սկզբից պատրաստել մեծ վանդակներ: Լավ է մեծ վանդակում պահել փոքր ցեղի, քան թե փոքր վանդակում խոշոր ցեղի ճագար:


Ճագարի արդյուն շրջանառություն և շնչառությունը շատ արագ լինելու հետևանքով, պահանջվում է առատ և մաքուր ոդ:




Նկ. 15. Վանդակի ներսի տեսքը




Նկ. 16. Վանդակի արտաքին տեսքը



Նկ. 17. Վանդակի ձևը



Նկ. 18. Պատի մասը




Նկ. 19. Պատի մասը

ՎԱՆՂԱԿՆԵՐԻ ԶԱՓԵՐԸ

Ոռչոր ցեղի ճագարի համար յերկարությունը 100 սմ., լայնությունը 65 սմ., բարձրությունը 70 սմ.:

Միջակ ցեղի ճագարի համար յերկարությունը 85 սմ., լայնությունը 60 սմ., բարձրությունը 60 սմ.:

Մանր ցեղի ճագարի համար յերկարությունը 75 սմ., լայնությունը 60 սմ., բարձրությունը 55 սմ.:




Նկ. 20. Վանդակի հատակը ձողիկներեց

Վանդակը պետք է պատրաստել յերկհատականի: Վերևի հատակը պետք է չինել 3—4 սանտիմետր լայնությամբ տախտակի ձողիկներեց (ռեշոտկա):

Ձողիկները միջի տարածությունը պետք է լինի մեկ սանտիմետրեց վոչ ավել (տես նկար 20):

Այդ տարածությունը մեծ լինելու դեպքում ձաղերը կարող են ընկնել նրանց արանքները և վնասվել:



Նկ. 21. Բացթյա պահվող վանդակների ձևը

Ներքևի հատակը պետք է լինի ցինկից, կամ ֆաներից, և պետք է այն հաշվով ամրացնել, վոր ձողիկներեց թափված մեղր կանգ չառնի, այլ հոսի դեպի վանդակի հետևի մասում ամրացված ցինկի խողովակը, կամ վանդակի հատակի մեջ տեղում հարմարեցված ցինկի արկղը, վոր պետք է հնարավոր լինի ամեն ուր մեղր թափել:

Պետք է հետևել, վոր վանդակում մեղր և աղբը չ'կուտակվի:


Վանդակների հատակները պետք է լինեն չարժեական, վորպեսզի մաքրելու և ախտահանելու համար հանվեն: Հատակի ծայրերը պետք է ամուր սեղմած լինեն վանդակի ներսի պատերին, վորպեսզի մեղր պատերի և հատակի արանքից դուրս չ'հոսի:

Վանդակները իրար վրա դնելու դեպքում, վերեվի վանդակի մեղր պետք է թափվի ներքեվինի վրա:



Նկ. 22. Վանդակների մաքրելը

Բացթյա պահվող ճագարների վանդակների տանիքը պետք է լինի քիչ թեք, վորպեսզի անձրևի և հալվող ձյան ջրերը կանգ չառնեն վանդակի տանիքի վրա: (տես նկար 21)



Նկ. 23. Վանդակի զուգավորման համար

Վանդակի ներսում պատերից վորեվ մեկում պետք է ամրացնել խոտի համար մուր, վորովհետև հատակին թափած խոտը, ճագարների վորտքերի տակ փչանում է:

Մտուրը պատրաստում են տարբեր ձևերով, բայց ամենահեշտը հաշվի համընթիվ ձև ունեցողն է. ձողիկները պետք է լինեն բարակ յերկաթալարից:

Լարերի արանքը, վորտեղից ճաղարները խոտ են հանում, պետք է լինի 3—4 սանտիմետրից վոչ լայն, վորպեսզի խոտը չթափվի:

Շատերը մտուրը ամրացնում են վանդակի դրսի կողմից, բայց եթանության տեսակետից նպատակահարմար է պատրաստել հասարակ մտուր և ամրացնել ներսից: (Տես նկար № 19):

Ճաղարների ծնելու համար, վանդակների մեջ անհրաժեշտ է պատրաստել հատուկ բուն, վորը միաժամանակ ցերեկները ծառայում է հանգրտանալու և վախենալու դեպքում թաղնվելու հարմար վայր:

Բները պատրաստվում են տարբեր ձևերով:

Պետք է խույս տալ բարդ ու թանգարժեք ձևերից և պատրաստել հասարակ ձևի, բայց անհրաժեշտ հարմարություններով: Որինակ՝ վանդակի աջ կամ ձախ անկյունից վերցվում է 27—30 սանտիմետր լայնությամբ տարածություն, վորի յերկարությունը հավասար է վանդակի լայնությանը: Այսինքն՝ վանդակի հետեվի պատից մինչև յերեսի կողմի պատի դռնակները: Այդ ուղղությամբ պետք է ամրացնել յերկու ձողիկ, վորից մեկը հատակին, իսկ մյուսը առաստաղին. ձողիկները Փաներկայի հաստության համապատասխան պետք է ունենան վորվածքներ: Միջնապատի ամբողջ մեծությամբ վերցնվում է Փաներկայի մի կտոր, վորն անցկացնելով ձողիկների վորվածքով ստացվում է միջնապատ: Վանդակների դռնակներից վոչ հեռու, միջնապատից պետք է բացել անցք դեպի բունը. անցքը պետք է լինի հատակից մոտ 10 սանտիմետր բարձրության, վորպեսզի փոքրիկ ձագերը չկարողանան դուրս գալ բունից. անցքը կարող է լինել կլոր կամ քառակուսի՝ 15 սանտիմետր լայնությամբ:

Վանդակ պատրաստելու համար ամենանպատակահարմար շինանյութերն են՝ Փաներկա, յերկաթե ցանց և տախտակ: Փաներկա չլինելու դեպքում կարելի է շինել նաև տախտակից. միայն այդ դեպքում պատերը չառամուր պետք է լինեն, վորպեսզի միջանցիկ քամիներ չառաջանան:

Ցանցի բացակայության դեպքում դռների վրա կարելի յե ամրացնել յերկաթե յարերից սոփորական ցանց: Բացառիկ դեպքում յեթե հրնարավոր չլինի դռնել յերկաթե յար, կարելի է փոխարինել փայտե ձողիկներով, բայց այդ աննպատակահարմար է, վորովհետև ճաղարները հաճախ կրծում են փայտե ձողիկները և դուրս գալիս:

Շատերը յերբեմն պատրաստում են 2—3 հարկանի վանդակներ, վորոնց առանձին առանձին բաժանմունքներում խնամվում են 6—9 մայր ճաղարներ:

Այդ ձևի վանդակները թե՛ մաքրության և թե՛ ճաղարների առողջության տեսակետից՝ միանգամայն աննպատակահարմար են:

Բացառիկ պահվող վանդակները խոնավությունից և արևից չփշանալու համար, պետք է դրսից ներկել մի վորևե գույնի յուղաներկով. գերադասելի յե բաց-մոխրագույնը:

Ցաներկայից պատրաստած հատակը, վորի վրայից հոսում է մեղը, յերկար ժամանակ փշանալուց պաշտպանելու համար պետք է յերեսից ծածկել ձյութով, կարբոլինեումով կամ մի վորևե ալյ նյութով, վորը կարող է պաշտպանել հոտակը մեզի քայքայեցուցիչ ազդեցությունից:

Ջուր և կեր տալու համար ամեն մի վանդակում պետք է դնել կալից պատրաստված յերկու կերաման: (Տես նկար 24):

Կերամանները պետք է լինեն մոտ մի կիլոգրամ ծանրությամբ, վորովհետև թեթև ամանները ճաղարները ատամներով շուտ են տալիս և կերը թափում: Կերի և ջրի համար միայն մեկ ամանից ոգտվելը նպատակահարմար չէ:

Ամանները կարելի է պատրաստել գանաչան նյութերից, բայց ամենից հարմարը կալից պատրաստածն է:

Վանդակները յեթե պահվում են բացօթյա, պետք է դասավորել այնպես, վոր ձմեռը նրանց յերեսը դարձրած լինի դեպի հարավ, իսկ ամառը դեպի արևելք:

Վանդակները պահվում են նաև տաք շենքերում կամ ծածկոցի տակ՝ յերեք կողմից չընդատված պատերով, իսկ առաջը բաց:

Մեր կարծիքով տաք շենքերում ճաղարներ պահելը թե՛ մեծ ծախսերի և թե՛ նրանց առողջության ու մորթու վորակի տեսակետից աննպատակահարմար է: Ավելի նպատակահարմար է պահել բացօթյա, յեթե միայն բացօթյա պահվող վանդակները ծառերով պաշտպանված են արեգակի ճառագայթներից: Հասարակ ծածկոցների տակ պահելը, թե՛ հեշտացնում է բուծարանի ձմեռվա աշխատանքները և թե՛ ճաղարները պաշտպանվում են ամառվա արեգակի կիզիչ ճառագայթներից:

Պետք է նշել, վոր ճաղարն ավելի հեշտությամբ է դիմանում ցրտին, քան թե չողին:

Բնչ վերաբերվում է վանդակների առանց ծածկոցի՝ բացօթյա պահելուն, պարզվել է, վոր ճաղարները այդպես իրենց վատ չեն զգում և հեշտությամբ տանում են տարվա բոլոր յերանակները: Միայն անհրաժեշտ է, վոր արդ նպատակով պատրաստված վանդակները լինեն ամուր և վորոչ հարմարություններով, վորպեսզի խիստ ցրտերի, քամիների, անձրևների և շոգերի ժամանակ ճաղարը հնարավորություն ունենա պաշտպանվել իր վանդակում:

Ծածկոցի տակ վանդակները տեղավորում են յերկու կամ յերեք շարք. դա աննպատակահարմար է. ծայրահեղ դեպքում միայն կարելի յե տեղավորել յերկու շարք, բայց գերադասելի յե մի շարքը:

Վանդակները պետք է դնել գետնից 30—40 սանտիմետր բարձրությամբ շինված պատվանդանի վրա: Քամիներից խուսափելու համար ծածկոցը պետք է կառուցել յերեսը դեպի հարավ կամ արևելք:

Ճաղարաբուծարանի կառուցելու տեղը վորոշելիս պետք է խուսափել ճահճոտ և խոնավ վայրերից:

Ճաղարաբուծարանի համար ամենահարմար տեղը կավալազային չոր հողամասերն են:

Արև ճաղարները համար պետք է պատրաստել ավելի քնդարձակ վանդակներ. ցանկալի յե, վոր նրանց վանդակները անկյուններ չունենան, ալ լինեն կլոր կամ կիսակլոր ձևի, վորովհետև զուգավորելու ժամանակ, յերբ եզ ճաղարը թողնում ենք արուի վանդակը, նա աշխատում է անկյունների միջոցով յերկար ժամանակ պաշտպանվել արու ճաղարի հետապնդումից, վորի հետևանքով էլ արուն ուժասպառ է լինում:

Վանդակները դասավորելուց, արու ճաղարների վանդակները պետք է հեռու դնել եզ ճաղարների վանդակների շարքերից:

Ձաղերը մոր վանդակում կարելի չէ թողնել մինչև 60 որեկան հասակը, բայց նպատակահարմար ե թողնել մինչև 40—45 որեկան հասակը, վորից հետո պետք է առանձնացնել և ըստ սեռի տեղավորել ամեն 5—6 ձաղը մի վանդակում:

Այն հանդամանքը, վոր մատղաշները իրացվում են 4—5 ամսեկան հասակից հետո խիստ զգվարացնում ե մատղաշներին վանդակներում խնամելու գործը, վորովհետև մի մետր մեծության վանդակում 4—5 ամսեկան 6 մատղաշներ խնամելը վատ ե աղղում նրանց աճելու և առողջության վրա:

Դրա համար ել պետք ե խնամել այնպիսի վանդակներում, վորոնց կից հարմարեցրված են զբոսանքի համար շարժական բակեր: Ձաղերը մորից բաժանելուց հետո նպատակահարմար ե պահել նրանց համար հատուկ պատրաստած ցանկապատներում կամ վալյերներում:

Ձաղարների համար բնակարաններ պատրաստելիս պետք ե նկատի ունենալ, վոր նրանց ֆիզիկական աճման, առողջության և արդյունավետության համար, ամենագլխավորը և ամենաանհրաժեշտը՝ մաքրություն ե առատ ոդր և լույսը: Այդ խնդիրը նույնքան խոշոր նշանակություն ունի ձաղարարուծության զարգացման համար վորքան կերի խնդիրը:

Պետք ե հիշել, վոր ձաղարին չպետք ե պահել մութ ու խոնավ բնակարանում: Նրանք չեն զիմանում միջանցիկ քամիներին: Վորպեսզի վանդակներում լինի առատ լույս և ոդ, անհրաժեշտ ե դռները պատրաստել յերկաթե ցանցից:

Վանդակները պետք ե լինեն յերկհատականի, վորից վերելնը տախտակե ձողերից, իսկ ներքևինը՝ ֆաներկայից կամ ցինկից, մեղը հոսելու համար: Պետք ե վանդակները 1—2 որը մեկ անգամ մաքրել: Կերը չպետք ե թափել հատակի վրա, այլ դնել այդ նպատակով հատկապես պատրաստած մուրում և ամաններում:

Համառոտ նկարագրելով վանդակներ պատրաստելու ձևը, համոզված եմ, վոր ձաղարարուծները իրենց գործնական աշխատանքների բնթացքում ել՝ ավելի բարելավումներ և հարմարություններ կմտցնեն վանդակների կառուցման մեջ: Բայց ավելորդ չեմ համարում յերկու խոսք ասել առհասարակ, վանդակների ձևի դրական և բացասական կողմերի մասին:


Պարզ ե, վոր ցեղական ձաղարարուծարաններում վորտեղ անընդհատ փորձնական աշխատանքներ են տարվում, թե՛ ձաղարների տեսակները վաղացնելու և թե՛ դտարյուն ցեղական մատղաշներ բուծելու նպատակով, վանդակը յեղել ե միակ ձևը, վորի միջոցով ձաղարարուծը կարողացել ե իր անմիջական հսկողության յենթարկել ձաղարի գուգավորման, ծնելու և խնամելու շրջանի կյանքը և սովորությունները:

Ձաղար չափազանց մաքրասեր կենդանի յե, վորը բնական պայմաններում յերբեք չի կեղտոտում իր բունը և չի ուտում անմաքուր կերեր: Նա ըստ իր նախահայր վայրի ձաղարների սովորության, ցերեկը դուրս ե գալիս իր բնից միմիայն արևի, լույսի և մաքուր ոդի համար, իսկ գիշերները միշտ լինում ե դուրսը կերի, զբոսանքի և խաղալու համար:

Մարդիկ հաճախ գրկելով նրան այդ հնարավորություններից և բանտարկելով մի մետր բեծության վանդակներում, ստիպում են նրան ապ-

րել ու բաղմանալ աղբի, մեղի և դարչահոտության մեջ: Յերբեմն ել 5—6 մատղաշներ թողնում են մի փոքր վանդակում մինչև նրանց բեղմնավորվելը:

Այդ բոլորի հետևանքով ել ներկայումս մենք տեսնում ենք, թե ինչպիսի աննախանձելի դրությամբ են մեզ հանում ցեղական ձաղարները թե՛ արտասահմանից և թե՛ միության ցեղական բուծարաններից:



Նկ. 24. Կավից պատրաստած կերամաններ:

ՎԱՆԴԱԿ—ԶԲՈՍԱԲԱԿ

Յերկու յերեք տարի յե վոր փորձեր են կատարվում ցեղական ձաղարարուծարանների մայր ձաղարների համար ստեղծելու մի այնպիսի կոմբինացիոն շարժական վանդակ, վորի միջոցով հնարավոր լինի ցեղական ձաղարները պահել առանձին-առանձին վանդակներում և նրանց մոտեցնել իրենց բնական կյանքի նպաստավոր պայմաններին: Այդպիսի շարժական վանդակներից մեկն ել մեր առաջարկածն ե, վորը զբոսանքի բակի հետ միացրված լինելու հետևանքով անվանում ենք «Վանդա-գրոսարակ»: Շարժական վանդակները այդ ձևով պատրաստելու գըլխավոր նպատակն ե սովորական վանդակներում պահվող ցեղական ձաղարները գոնե մի փոքր մոտեցնել բնական պայմաններին և տալ նրանց հնարավորություն ավելի մեծ չափով ոգտվելու արեգակի լույսից, առատ շարժանքից, միշտ գտնվելով մաքուր ոդում և ամառը արածել կանաչ խոտ:

Համոզված ենք, վոր ձաղարարուծներն իրենց գործնական աշխատանքների ու փորձերի ընթացքում կրացնեն բոլոր թերությունները և մտցնելով անհրաժեշտ բարելավումներ՝ կստեղծեն հնարավորություն ներկայումս գոյություն ունեցող «Բանտվանդակ»-ները վերջնականապես փոխարինելու «Վանդակ-գրոսարակ»-երով:


Շարժական վանդակները կարելի յե պատրաստել տարբեր ձևերի ու մեծության, բայց վորովհետև նրա գործածելու գլխավոր նպատակներից մեկն ել հաճախ տեղից-տեղ տեղափոխելն ե, գրտ համար ել նպատակահարմար չե պատրաստել շատ մեծ և ծանրաքաշ վանդակներ:

Փորձնական շրջանում մենք պատրաստում եյինք 3—3½ մետր յերկարությամբ և մեկ մետր յալնությամբ շարժական «Վանդակ-գրոսարակ»-ներ և նրանց մեծության պատճառով ամրության համար գործադրում եյինք հաստ տախտակներ ու ձողեր, վորի հետևանքով ել «Վանդակ-գրոսարակ»-երը լինում եյին շատ ծանրաքաշ և զգվարացնում տեղից շարժել:

Ինկատի ունենալով, վոր շարժական «Վանդակ-գրոսարակ»-երը վորքան հաճախ տեղափոխվեն տեղից-տեղ, այնքան ավելի նպաստավոր պայմաններ կլինեն ձաղարների համար, որա համար ել ավելի նպատակահարմար ե պատրաստել մայր ձաղարների թե՛ ապրելու, թե՛ հղիանալու, թե՛ ծնելու և թե՛ ձաղերը խնամելու համար միջակ մեծության «Վանդակ-գրոսարակ»-եր:

Որինակ՝ ամբողջ յերկարությունը պետք է լինի 150 սանտիմետր, վորից 50 սանտիմետր վանդակի, իսկ 100 սմ. զբոսաբակի յերկարությունն է:

Լայնությունը 80-90 սանտիմետր, իսկ բարձրությունը ընդամենը 80-90 սանտիմետր, վորից՝ հատակից մինչև ծածկոց-տանիքի սկիզբը՝ 50 սանտիմետր և ծածկոց-տանիքի բարձրությունը 30-40 սանտիմետր: Միայն վանդակի յերկարությունը հավասար է զբոսաբակի լայնությանը՝ 80-90 սանտիմետր, լայնությունը 50 սանտիմետր, բարձրությունը մինչև ծածկոց տանիքի սկիզբը՝ 50 սանտիմետր, իսկ ծածկոց-տանիքի բարձրությունը՝ 30-40 սանտիմետր, վորպեսզի զբոսաբակի և վանդակի ծածկոց տանիքի բարձրությունը հավասարեն միմյանց:




Նկ. 25. Վանդակ զբոսաբակ անիվներով

Զբոսաբակի հատակը պետք է լինի մետաղալարի ցանցերից, վորի տարանքները պետք է լինի 4-5 սմ. լայնությամբ, վորպեսզի ճաղարները չկարողանան հողը քանդել ու դուրս գալ բակից, բայց հնարավորություն ունենան ցանցի արանքներից կանաչ խոտ արածել:

Հատակի ցանցը անհրաժեշտ է ներկել մի վորևէ յուղաներկով, վորպեսզի ձմռան սառտիկ ցրտերի ժամանակ մետաղալարի ցանցը սառելով՝ չփչացնի ճաղարի վորտքերը:

Շարժական «Վանդակ զբոսաբակ»-ը պետք է չինել հետյալ չի-նանյութերից—նեղքեի մասի համար պիտի վերցնել մինչև 13-15 սանտիմետր լայնության, 150 սմ. յերկարության, մինչև 3 սանտիմետր հաստության տախտակներ: Վերևի մասի ձողերը (րեյկա) պետք է լինեն քառակուսի 6-7 սանտիմետր հաստության, յերկարությունը 200



Նկ. 26. Վանդակ զբոսաբակ առանց անիվների

սանտիմետր, վորից 150 սանտիմետր վանդակի և զբոսաբակի յերկարությունն է, իսկ 50 սանտիմետրը յերկու կողմերի կոթերի յերկարությունը, վորոնցից բռնելով՝ շարժում են «Վանդակ զբոսաբակ»-երը:

Թեև 25-րդ նկարում տրված է մի կողմից կոթեր, իսկ մյուս կողմից անիվներ, բայց ի նկատի ունենալով վոր անիվների միջոցով շարժելը նպատակահարմար է միմյանից հարթ տեղերում, այդ պատճառով ել ավելի լավ է «Վանդակ զբոսաբակ»-ի յերկու կողմերից ել թողնել կոթեր՝ մոտավորապես 20-25 սանտիմետր յերկարությամբ, վորպեսզի յերկու հողով հեշտությամբ վանդակը տեղափոխեն մի տեղից-մյուս տեղը (տես նկար № 26):

Ծածկոց-տանիքը պետք է կառուցել յերկու կողմից թեք՝ վորպեսզի վրան կանգ չառնեն անձրևների և ձյան ջրերը: Տանիքը պետք է այնպես չինել, վորպեսզի նրա մի մասը բացվի ինչպես դուռ, վորի միջոցով հնարավոր լինի կատարել կերակրման և մաքրելու աշխատանքները: Տանիքը կարելի չէ չինել նաև այն ձևով, վոր բացվի ամբողջապես:

Մեզ հայտնի չէ, վոր ճաղարները բնական պայմաններում, ձմեռվա սաստիկ ցրտերի և ամառվա խիստ շոգերի ժամանակ պաշտպանվում են հողի տակ իրենց պատրաստած բներում, այդ պատճառով ել զբոսաբակը անհրաժեշտ է պատրաստել ծածկոցով, վորպեսզի ճաղարը հնարավորություն ունենա հարկավոր գեղջուկ պաշտպանվել թե ամառվա արեգակի կիզիչ ճառագայթներից և թե աշնան հորդ անձրևներից:

Տանիքը կարելի է ծածկել թե՛ տուրով և թե՛ ֆաներկայով: Ֆաներկաները պետք է ներկել յուղաներկով, վորպեսզի անձրևների և արեգակի ազդեցությունից չուտ չփչանան:

Զբոսաբակի պատին, դռնակից վոչ հեռու պետք է չինել մսուր խոտ տալու համար, իսկ ջրի ու ուժեղ կերերի համար հարկավոր է բակում դնել յերկու կերամաններ:

Վանդակը պետք է պատրաստել ամուր և առանց միջանցիկ քամիների, վորպեսզի ճաղարը բացթյա պայմաններում հեշտությամբ դիմանա ձմեռվա խիստ ցրտերին և ամառվա շոգին:

Զբոսաբակին կից վանդակի մեծության մասին արդեն խոսել ենք. այդ վանդակում նույնպես անհրաժեշտ է պատրաստել մի մութ անկյուն, սովորական վանդակներում պատրաստած անկյունների նման, վորպեսզի ճաղարը հնարավորություն ունենա այդ մութ անկյունում չինել իր բու-նը, ծնել և կերակրել իր ճագերին:

Մութ անկյունի համար հատկացված տարածության լայնությունը լինելու չէ 30 սմ., իսկ յերկարությունը՝ 50 սանտիմետր:

Միջնապատը պետք է չինել շարժական, վորպեսզի հարկավոր դեպքում դուրս հանվի:

Միջնապատի մի ծայրում պետք է բացել կլոր ձևի անցք՝ 15 սանտիմետր լայնությամբ, ճաղարի անցուղարձի համար:

Ճաղարների ծնելու և ճագերը խնամելու բնիքացում, վորպեսզի հնարավոր լինի հսկել և հետազոտել նրա կյանքը, անհրաժեշտ է վանդակի հետևի պատից, կամ տանիքի վրայից թողնել դռնակներ: Վանդակի դռնակները պետք է պատրաստել խիստ ամուր, վորպեսզի անձրևի և ձյունի ջրերը մինչև անգամ կաթիլներով, չթափվեն բուներ և թրջեն ճագերին:

Զբոսաբակի ցանցի հատակը պետք է հավասար նստի հողի մակե-

րեւոյթին, վորպեսզի ճաղարները կարողանան ցանցի արանքներից ա-
րածել կանաչ խոտ:

Վանդակի հատակը, վորը պատրաստվում է տախտակից, պետք է
լինի շարժական և հարկավոր դեպքում հանվի՝ մաքրելու համար:

Վանդակի հատակը պետք է լինի առանց անցքերի, վորովհետեւ հա-
զարը հնարավորութուն ունենալով անցնել բակը, յերբեք չի կեղտո-
տում իր բուռը, դրա համար ել գրոսաբակին կից վանդակներում հա-
տակը պետք է պատրաստել վոչ թե ձողիկներից, այլ մի ամբողջ տախ-
տակից, վորպեսզի ճաղարը պաշտպանվի թե՛ խիստ ցրտերից, թե՛ անձ-
րեններից և թե՛ միջանցիկ քամիներից:

Հատակը պետք է լինի շարժական և դուրս հանվի մաքրելու համար:
Վանդակի հատակը հողի մակերևույթից պետք է լինի 10 սանտի-
մետրից վոչ պակաս բարձրութեան վրա, այդպիսի բարձրութուն
անհրաժեշտ է նրանց խոնավութիւնից պաշտպանելու համար:

Պետք է ի նկատի ունենալ, վոր այդ ձևով ճաղարներ պահելու հե-
տեանքով, մենք ազատվում ենք ավելորդ շենքերի ծածկոցների խոշոր
ծախսերից, դրա համար ել անհրաժեշտ է բացթողնել խնամվող ճաղար-
ների համար հարմար վանդակներ պատրաստելու, ստեղծել նպաստավոր
պայմաններ:

«Վանդակըրոսաբակ»-ներում կարելի չէ խնամել նաև արտադրող
ճաղարներին, վորոնք այդ վանդակներում անկասկած ավելի լավ կըզ-
դան իրենց, քան սովորական վանդակներում:

Վանդակըրոսաբակներում շատ նպատակահարմար է խնամել նաև մատ
ղաշներին միայն հարկավոր ե նրանց համար վանդակադրոսակներ պատ-
րաստել մի փոքր ավելի մեծ քան մայր ճաղարների համար են պատրաստ-
վում: Որինակ՝ մատղաշների համար շինվող վանդակադրոսակը պի-
տի ունենալ յերկարութուն 200 սանտիմետր, վորից վանդակի յերկարու-
թիւնը 60 սանտիմետր և զրոսաբակի յերկարութիւնը 140 սմ., իսկ
լայնութիւնը կլինի 100 սանտիմետր, հողի յերեսից բարձրութիւնը
մինչև տանիքի ծածկոցի գագաթը՝ 90 սանտիմետր: Պատրաստելու ձե-
վերը նույն են ինչ վոր մայր ճաղարների համար ենք պատրաստում:

Այդ մեծութեամբ պատրաստված «Վանդակըրոսաբակ»-ում կարելի
չէ խնամել 8 մատղաշ ճաղար, մինչև նրա դուգավորելու հասակը:

Կասկած չկա, վոր այդ ձևի վանդակներում ճաղարները ավելի մոտ
են բնական պայմաններին, քան թե սովորական վանդակներում:

Այդպիսի շարժական վանդակներում ճաղարներ խնամելու աշխա-
տանքները հեշտանում են, իսկ դա ամենագլխավորն է: Զրոսաբակ ու-
նեցող վանդակներում ճաղարները ավելի առողջ և առույգ են լինում,
քան թե սովորական վանդակներում:

Մեր կարծիքով, յեթե շինանյութերի սահմանափակ պայմաններ
չլինեն, «Վանդակադրոսակ»-ները կարելի չէ պատրաստել այնպիսի հար-
մարութիւններով, վոր հարկավոր դեպքում հնարավոր լինի վանդակը
անջատել գրոսաբակից և կրկին միացնել:

Այդպիսի պահանջ կարող է դրացվել այն դեպքում, յերբ ճաղարա-
բուծարանը գտնվում է այնպիսի վայրերում, վորտեղ ձմեռը լինում է
խիստ ցուրտ, ուժեղ քամիներ և փոթորիկներ:

Այդ պատճառով ել դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսների
փոթորիկների ժամանակ կարելի չէ վանդակները անջատել գրոսաբա-

կից և պահել ծածկոցի տակ, քանի վոր վանդակները առանց գրոսաբա-
կների շատ քիչ տեղ են բռնում:

Գարնանը վանդակները դարձյալ կարելի չէ միացնել գրոսաբակների
հետ և պահել բացթողնա՝ մինչև աշնան վերջը:

Պետք է նշել, վոր այն վայրերում, վորտեղ ամառը խիստ շոգ է լի-
նում, նպատակահարմար է «Վանդակադրոսաբակ»-ները պահել ծառերի
շվաքների տակ, վորովհետեւ ճաղարն արեւին չի դիմանում:


Մեզ մոտ դեռ նոր է դարձանում ճաղարաբուծութիւնը և այդ
բնագավառում շատ քիչ փորձնական աշխատանքներ են կատարվել, վո-
րի հետեանքով նոր կազմակերպվող ճաղարաբուծարանները սկզբնա-
կան շրջանում հանդիպում են դժվարութիւնների և յերբեմն ել կատար-
վում են սխալներ:

Կասկած չկա, վոր մոտ ապագայում ճաղարաբուծութեան բնագա-
վառում աշխատողների ջանքերով վերջ կտրվի բոլոր թերութիւններին
և ճաղարների պահելու պայմանների մեջ կմտցվեն անհրաժեշտ բարե-
լավումներ:

ՎԱԼՅԵՐԻ ԶԵՎԸ

Մինչև այդ ձևի ստեղծվելը, ցեղական ճաղարաբուծարաններում
ճաղերը միշտ խնամվել են վանդակների մեջ, առանց ազատ շարժում-
ների, վաղվելու և արեղակի լույսից դուրի, վորի հետեանքով ել ցեղա-
կան մատղաշները լինում էյին վատ առողջ և թույլ կալվածքով:

Այդ պատճառով ել անհրաժեշտ էր ստեղծել ցեղական ճաղերի
համար մի այնպիսի ձևի բնակարան, վորտեղ նրանք ավելի ազատ գա-
յին իրենց, քան թե վանդակներում: Այդ նպատակով ել ձևոնարկեցին
կառուցել վալյերներ (տես նկ. № 27):



Նկ. 27. Վալյերներ ծածկոցով

Վալյերների և վանդակ գրոսաբակների կառուցման սկզբունքը միև-
նույն է, միակ տարբերութիւնն այն է, վոր վալյերները անշարժ մնում
են մի տեղ և նրա մեջ ապրող ճաղարը գրկված է ամառը կանաչ խոտ
արածելու հնարավորութիւնից, իսկ շարժական վանդակադրոսաբակը
հաճախ մի տեղից մյուս տեղ տեղափոխելով՝ ճաղարներին հնարավորու-
թիւն է տալիս վոչ թե միայն արածել կանաչ խոտ, այլև միշտ ապրել
մաքրութեան մեջ հեռու լինելով մեղից ու աղբից:

Պարզ է, վոր մինչև շարժական վանդակըրոսաբակի յերևան դալը,

վալյերները կառուցումը միանգամայն անհրաժեշտ էր մատղաշներին համար: Բայց ներկայումս յերբ փորձերը պարզել են, վոր շարժական վանդակադրոսարաններն ավելի նպատակահարմար են, քան թե վալյերները, այլևս կարիք չի դրացվում վալյերներ կառուցելու, թեև դեռ չառանտեսություններում շարունակում են վալյերներում խնամել վոչ թե մատղաշներին, այլև մայր ճագարներին:

Յեթե հաշվի առնենք այն հանգամանքը, վոր վալյերները կառուցման համար անհրաժեշտ է բոլոր պատերի հիմքը հողի մեջ ամրացնել մինչև 80 սանտիմետր խորությունը, կհամոզվենք վոր չինարարական արժեքի տեսակետից էլ վալյերներն ավելի թանկ են նստում, քան թե շարժական «վանդակդրոսարան»-երը:


Վալյերները կառուցվում են տարբեր ձևերի ու մեծությամբ. այդ կախված է անտեսություն հնարավորություններից:

Կառուցում են մի ծածկոց միջանցքի նման, վորի լայնությունն է մինչև 200 սանտիմետր, բարձրություն մինչև 200 սանտիմետր:

Ծածկոցը թեքվում է յերկու կողմի վրա (տես նկար № 27):

Ծածկոցի տակ միջանցքի յերկու կողմերից ցանցապատերով պատրաստվում են զրոսարակներ, — բարձրությունը մինչև 150—200 սանտիմետր, լայնությունը 200 սանտիմետր և յերկարությունը 300 սանտիմետր:

Ծածկոցի տակ զրոսարակներին կից պատրաստում են վանդակներ, վորի լայնությունն է մինչև 50 սանտիմետր, յերկարությունը մինչև 120 սանտիմետր և բարձրությունը մինչև 60—70 սանտիմետր: Վանդակներից դեպի զրոսարակը թողնվում է 20 սանտիմետր լայնությամբ անցք՝ ճագարների անցուղարձի համար:



Նկ. 28. Վալյերներ առանց ծածկոցի

Վանդակներին կից դեպի զրոսարակը պիտի լինի դուռ 60 սանտիմետր լայնությամբ և 100 սանտիմետր բարձրությամբ, վորպեսզի ճագարապահը հնարավորություն ունենա անցնել զրոսարակը մաքրելու ու ախտահանելու համար:

Վանդակների վրայի ծածկոցը պետք է լինի բացվող՝ ջուր և կեր տալու համար: Վանդակի հատակը պետք է պատրաստվի ամուր տախտակից՝ առանց անցքերի: Պետք է ձեռք առնել միջոցներ, վորպեսզի վանդակի մեջ չլինեն միջանցիկ քամի: Զրոսարակի պատերը նպատակահարմար է հողի յերեսից մինչև 60 սանտիմետր բարձրությամբ պատ-

րասել տախտակից, վորպեսզի յերկու հարևան զրոսարակներում ապրող ճագարները չչփվեն միմյանց հետ:

Պատերին պետք է ամրացնել խոտի մսուրներ, իսկ ջրի ու կերի համար հարկավոր է դնել կավից պատրաստած յերկու կերամաններ: Կերամանները պետք է լինեն խոշոր տեսակի, վերպեսզի բավարարեն մի քանի ճագարների:

Այդ մեծություն վալյերներում կարելի չի խնամել միջև 10—12 մատղաշներ:

Վալյերները անպայման պետք է կառուցվեն չոր և կավավայրային հողամասերում:

«ՊԱՐԿԵՏԱ»-ՅԻՆ ՁԵՎ

Մենք արդեն ասել ենք, վոր ցարական Ռուսաստանում գոյություն չեն ունեցել խոշոր արդյունաբերական ճագարաբուծարաններ: Իսկ յեղած աննշան քանակությամբ լավորակ ճագարների մի մասը վաճառվել է քաղաքացիական կոնվների ժամանակ, իսկ մնացածներն էլ մնալով անխնամ՝ ալյասեովել են:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման վերելքի ժամանակ աննկատելի չի մնացել նաև ճագարաբուծությունը, վորի զարգացման համար 1927—1928 թվականներում դիրեկտիվ մարմինների ձեռք առած միջոցներով սկսվել են կազմակերպչական աշխատանքները ուժեղ թափով ծավալվել:

Առաջի հերթին ձեռնարկվել է ցեղական ճագարաբուծարանների կազմակերպումը, վորտեղ պետք է բազմացվեյին արտասահմանից նոր ստացված ցեղական թանգարժեք ճագարները, վորպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում դրանցից ստացված մատղաշները բաշխվեյին նոր կազմակերպվելիք արդյունաբերական ճագարաբուծարաններին, վորից հետո պիտի սահմանափակվեր արտասահմանից ներմուծվող ճագարների քանակը:

Այն խնդիրը, վոր այժմ դրված է ճագարաբուծության առաջ՝ ամենակարճ ժամանակամիջոցում տալ յերկրին մեծ քանակությամբ լավորակ և եժան միս ու մորթի, չեք կարելի լուծել միմիայն ցեղական ճագարաբուծարանների միջոցով, վորովհետև ամբողջ Միության համար նախատեսված միլիոնավոր մայր ճագարները վանդակներում խնամելու դեպքում, հարկավոր կլինեն ծախսել խոշոր գումարներ՝ շենքեր, ծածկոցներ և միլիոնավոր վանդակներ կառուցելու համար:

Բացի դրանից, ամենապլանավորն է վանդակների կառուցման համար անհրաժեշտ կլինեն ծախսել հսկայական քանակությամբ դեֆիցիտային շինանյութեր (դիկա, յերկաթե ցանց, տախտակ, մեխ և այլն): Բացի այդ, կպահանջվեյ խոշոր թվով բանվորական ուժ: Այդ բոլորի հետևանքով էլ արդյունաբերական ճագարաբուծությունը պետք է կազմակերպվի այնպես, վոր կարելի լինի նյութական և բանվորական ուժի քիչ ծախսումով ստանալ մեծ արտադրանք:

Պարզ է, վոր այդ կհաջողվի այն դեպքում, յերբ մենք կկարողանանք ճագարները բազմացնել միայն բնական կամ կիսաբնական պայմաններում:

Այդպիսի ձևերից մեզ հայտնի է՝ «գարեննա»-յին ձևը, վորի միջոցով ճագարները բազմացվում են բնական պայմաններում, և «պարկետա»-յին ձևը, վորի միջոցով բազմացվում են կիսաբնական պայմաններում:

Թեև այդ ձևերը մոտ ապագայում լինելու յեն արդյունաբերական ճաղարարությունների հիմքը, բայց մինչև այսօր դոյութուն ունեցող գրականության կամ ձեռնարկների մեջ չատ քիչ ուշադրություն և դարձրված այդ ձևերի վրա:

Մենք համառոտ բացատրելով այդ ձևերի դրական և բացասական կողմերը համոզված ենք, վոր դործնական աշխատանքների ընթացքում ճաղարարություններ տեղերում կարող կլինեն ուղղել այդ թերությունները:

Հայտնի յե, վոր բնական պայմաններում ճաղարը քանդում և հողի մեջ անցը մի մետր խորությունը և այնտեղ պատրաստում իր բունը (տես նկար № 34): Նա իր ամբողջ կյանքն անց և կացնում և իր ձաղերին ել խնամում և այդպիսի բնություն: Փորձերը ցույց են տվել, վոր բնական պայմաններում ապրող ճաղարներն ավելի առողջ են լինում, քան թե վանդակների մեջ խնամվողները:

Այդ պատճառով ել պարկետը միակ միջոցն և, վորը ինչպես անցողական ձև՝ նպաստում և վանդակներից «զարենանա»-ին անցնելուն:

Ցեղական ճաղարարությունների վանդակներում խնամված, նուրբ պայմաններին սովոր, կազմվածքով թույլ մատղաշներին աննպատակահարմար և վանդակներից անմիջապես դարեննայի խիստ պայմանները փոխադրելը:

Դրա համար ել ել ավելի լավ և սկզբնական շրջանում ճաղարները պահել կիսաբնական պայմաններում, վորտեղ բաղմացնելով՝ կարելի յե ստանալ արդյունաբերական ճաղարարությունների համար անհրաժեշտ դիմացկուն և առողջ ճաղարներ:

Պարկետները կառուցում են տարբեր ձևերի ու մեծությամբ. այդ կախված և տնտեսության հնարավորություններից և ճաղարների նախատեսված հիմնական հոտի թվից:

Բայց ամենահիմնականն այն և, վոր պարկետները պետք և անպայման կառուցվեն չոր, կալ-ավաղային հողամասերում, հեռու խոնավ և ճահճային տեղերից: Ավելի գերադասելի են լանջերը, վորպեսզի անձրևն չուրը կանգ չառնի պարկետներում: Բացի այդ, ինչպես տեսնում ենք նկ. 34-ից, ճաղարները բնական պայմաններում ավելի գերադասում են իրենց բունը պատրաստել թեք տեղերում:

Պետք և նշել, վոր թե՛ պարկետները և թե՛ դարեննաները, յեթե կառուցվում են այնպիսի հողամասերում, վորտեղ բացակայում և կավային մասը, այլ բացառապես ավաղային կամ խիճային և հողը, այդպիսի հողամասերում ճաղարի քանդած բները հաճախ փլվում են և վոչնչացնում ձաղերին և մայր ճաղարներին: Այդ պատճառով ել բնական և կիսաբնական պայմաններում ճաղարներ բաղմացնել կարելի և միայն կավ-ավաղային կամ չոր կավային հողամասերում:

Պետք և ընտրել այնպիսի հողամասեր, վորտեղ 150 սանտիմետրից վոչ պակաս խորություն մեջ ստորերկրյա ջրեր չկան:

Պարկետների յերեսը պետք և դարձված լինի գետի արևելք, հարավ կամ հարավ-արևելք, վորպեսզի ճաղարները պաշտպանվեն հյուսիսային ցուրտ և արևմտյան խոնավ քամիներից:

Պարկետների և դարեննաների միմյանցից ունեցած գլխավոր տարբերությունն այն և, վոր դարեննաներում ճաղարները ապրում են ամբողջ


հոտերով և բաղմանում են՝ առանց մարդու խնամքի ու հսկողությունից, վորի մասին կխոսենք հետո:

Իսկ պարկետները կառուցվում են 8—10 մայր ճաղարների համար և ամեն մի մայր ճաղարին հատկացվում և մինչև 4 քառակուսի մետր տարածություն, վորտեղ ճաղարները խնամվում, զուգավորվում և բաղմանում են մարդու հսկողության տակ:

Պարկետների մեծությունը պետք և համապատասխան լինի հոտի թվին:

Ցենթադրենք, տնտեսությունը վորոշել և հիմնական հոտի համար պահել 35 մայր ճաղար. այդ քանակության համար հարկավոր և կառուցել մի պարկետ հինգ քառակուսիքներով (տես նկ. 29). ամեն մի քառակուսիքը պետք և ունենա 28 քառ. մետր տարածություն, այսինքն՝ 4 մետր լայնություն, 7 մետր յերկարություն ներսից (տես նկ. 29) և մետր լայնությամբ բաժանված կարելի յե պահել 7 մայր ճաղար, վորոնք ըստ իրենց բնական սովորության բուն են քանդում հողի մեջ և այնտեղ ել բաղմանում:

Ճաղարները չափազանց մաքրասեր կենդանիներ լինելով, յերբեք չեն կեղտոտում իրենց բունը, իսկ առանձին ուշադրության արժանի յե այն հանգամանքը, վոր ծնելուց մի քանի օր առաջ նրանք չատ մեծ յեռանդով մաքրում են բունը և պատրաստվում ծննդաբերության համար:




Նկ. 29. Պարկետի հատակագիծը ըստ հեղինակի

Ճաղարները բները չլինելու համար գլխավորապես գերադասում են քանդել պատերի տակ և հաճախ պատահում և, վոր բացելով հիմքերի տակից անցքեր՝ դուրս են գալիս պարկետներից: Այդ պատճառով ել պարկետների չորս կողմի պատերի հիմքերը պետք և ամրացնել վոչ պակաս 80—90 սանտիմետր խորությամբ: Հիմքերն ամրացնում են տարբեր ձևով. որինակ՝ քանդում են հողը՝ 80—90 սանտիմետր խորությամբ և 40—50 սանտիմետր լայնությամբ. այդ տարածությունը լցնում են փոքր քարերով կամ մեծ-մեծ խճերով, վորի վրայից դնում են պարկետի պա-

տերը: Յեթե տնտեսութիւնը գտնվում է անտառների մոտ, վարակող կարելի չէ փայտը ավելի հեշտութեամբ ձեռք բերել, քան թե քարը, այդ դեպքում կարելի չէ հիմքերը ամրացնելու համար տնկել հողի մէջ 5—7 սանտիմետր հաստութեամբ, մի մետր յերկարութեամբ փայտե ցցեր, միմյանցից 5 սանտիմետր հեռավորութեամբ վրա: Ճագարները աղբալիսի հիմքերից չեն կարող անցնել: Հիմքերը ամրացնելու համար պետք է ընտրել ամենաեփան և հեշտ ձևը:

Հիմքերը ամրացնելուց հետո, հարկավոր է նշված 5 բաժանմունքի համար երեք կողմից պատեր դնել պատերի հաստութիւնը կախված է շինանյութերի տեսակից, վորովհետեւ քարի, աղյուսի, ցանկապատի և տախտակի պատերի համար տարբեր հաստութիւնների հիմք է հարկավոր: Պատերի բարձրութիւնը պետք է լինի մինչև 150 սանտիմետր: Բայց յեթե լանջերում է կառուցվում պարկետը, հետևի պատի բարձրութիւնը կարելի չէ պակասեցնել, իսկ կողքերի պատերի բարձրութիւնը ավելացնել: Այդ պետք է վորոշել յերկնով հողամասի հարմարութիւններից:

Պարկետները պետք է ունենան յերեք մետր լայնութեան ծածկոց-շուքարան, ամենահասարակ շինանյութերից (դերադասելի և հողով ծածկված տանիքը) այն հաշվով, վոր պարկետի ամեն մի բաժանմունքն ունենա 3 մետր լայնութեամբ, 4 մետր յերկարութեամբ ծածկոց շուքարան, իսկ զրոսարակը լինի 4 մետր յերկարութեամբ ու 4 մետր լայնութեամբ:



Նկ. 30. Պարկետ ըստ հեղինակի

Աղբալիսի պարկետներում ճագարները հնարավորութիւն կունենան ծածկոցի տակ բնել շինել և հարկավոր դեպքում պաշտպանվել թե՛ տնձրներից և թե՛ ամառվա արեգակի ճառագայթներից:

Ծածկոցը դեպի հետևի կամ առաջի կողմը պետք է քիչ թեք լինի, վորպեսզի նրա տանիքի վրա կանգ չառնեն մթնոլորտային տեղումները:


Պարկետի համար թիթեղի ծածկոցը միանգամայն աննպատակահարմար է, վորովհետև այդ դեպքում ներսը չոգ կլինի, վորին ճագարները չեն դիմանում:

Պարկետների բաժանմունքների միջնապատերի հիմքերը հողի մէջ պետք է ամրացնել մինչև 50 սանտիմետր խորութեամբ: Միջնապատերը կարելի է պատրաստել քարից, հում աղյուսից, տախտակից, ցանցերից կամ ծառերի ճյուղերից (տես նկ. 32):

Միջնապատի բարձրութիւնը հողի մակերեսից պետք է լինի մինչև 150 սանտիմետր: Յեթե միջնապատը պատրաստված է ցանցից կամ ծառերի ճյուղերից, այդ դեպքում անհրաժեշտ է միջնապատի ներքևի մասը 60 սանտիմետր բարձրութեամբ ցելսով սվաղել կամ տախտակով ամրացնել, վորպեսզի ճագարները չլիճեն հարևան բաժանմունքի ճագարների հետ:

Միջնապատը պետք է կառուցվի ամենաեփան շինանյութերից:

Պարկետի ճակատը պետք է կառուցվի հետևյալ ձևով.—80—90 սանտիմետր խորութեամբ ամրացված հիմքերի վրա պետք է դնել մինչև 40—50 սանտիմետր բարձրութեամբ պատ, իսկ այդ պատի վրա ցանկապատ՝ 150 սանտիմետր բարձրութեամբ, վորպեսզի բարձրութիւնը հողի յերեսից լինի 200 սանտիմետր: Ցանկապատը կարելի է պատրաստել յերկաթե ցանցերից կամ փայտե ձողիկներից: Ցանկապատի արանքները պետք է լինի 3—4 սանտիմետրից վոչ լայն, վորպեսզի ուրիշ կենդանիներ արանքներով ներս չմտնեն:



Նկ. 31. Պարկետի հատվածը

Ցանցերից կամ ձողիկներից ցանկապատ կառուցելու նպատակը այն է, վորպեսզի պարկետներում առատ լույս ու արև լինի:


Ճագարապահների՝ պարկետները ներս մտնելու համար, ամեն բաժանմունք պետք է ունենա իր դուռը:

Պարկետների մոտ անձրևաջրերը կանգ չառնելու համար անհրաժեշտ է չենքի պատերի շուրջը ջրատար առուներ քանդել:

Ծածկոցի տակ, պատերին կից ամեն մի բաժանմունքում պետք է ամրացվի յերկու մասը՝ խոտի և ծղնոտի համար:



Նկ. 32. Ցանկապատ ծառերի ճյուղերից:



Նկ. 33. Ցանկապատ տախտակի ձողիկներից:

Մսուրները պետք է ամրացվեն դետնիդ 15—30 սանտիմետր բարձրությամբ վրա, պետք է դնել նաև անհրաժեշտ քանակությամբ ամաններ ջրի և կերերի համար:

Պարկետները կառուցելիս պետք է ի նկատի ունենալ նաև մսուր-դաշների բնակարանների անհրաժեշտությունը, ըստ նրանց քանակի: Թեև նպատակահարմար է մատղաշներին խնամել պարկետներում, բայց դրանց կառուցման հետ կապված ծախսերը նկատի ունենալով կարելի է ձագերի համար պատրաստել հասարակ ցանկապատեր՝ մինչև 30 քառակուսի մետր մեծությամբ և ըստ սեռի ու հասակի աշխտեղ թողնել 25—30 մատղաշներ:


Այդպիսի ցանկապատերում պետք է պատրաստել շատ հասարակ փոքր տնակներ կամ ծածկոցներ, վորպեսզի անձրևները, շոգից և յերբեմն ել դիշատից թռչունների հարձակումներից ձագերը կարողանան պաշտպանվել: Ցանկապատերի մեջ անհրաժեշտ է պատրաստել մսուր-ներ և դնել կերամաններ:

Պարկետներում խնամվող հոտի համար նշանակված արձուները պետք է պահվեն անհատական ձևով առանձին-առանձին նրանց համար հատկապես պատրաստված բնակարաններում, վանդակներում կամ վանդակ զբոսարակներում:

Այսու ձագարները չափազանց կռվարար են, միշտ կռվում են միմյանց հետ և յերբեմն ել իրար սպանում:

Եգ ձագարները պարկետներում շատ հաշտ են ապրում և չուտ ընտելանում միմյանց, իսկ յերբ պատահում են կռվարար եգ ձագարներ, վորոնց բնավորությունը անկարելի է կարճ ժամանակամիջոցում փոխել, այդ դեպքում նմաններին պետք է հեռացնել պարկետներից:

Պարկետներից պետք է հեռացնել նաև չզուգավորվող և ձագերին չխնամող եգ ձագարներին:



Նկ. 34. Ցանկապատեր մատղաշների համար:

Պարկետներում ձագերն իրենց մոր մոտ մնալու յեն մինչև 40—45 օրական հասակը, վորից հետո ձագերը պետք է բաժանել ըստ սեռերի և տեղավորել նրանց համար հատկապես պատրաստած պարկետները կամ ցանկապատերը:

Պարկետներում ձագարներ բռնելու համար պետք է պատրաստել յարժական «վանդակ-թակարդ»-ներ:

Վանդակ-թակարդը կարելի է պատրաստել տարբեր ձևի ու մեծու-

թյան: Որինակ՝ վանդակ-թակարդի յերկարությունը կարելի է անել 150 սանտիմետր, յաջուկությունը մինչև 75 սանտիմետր և բարձրությունը մինչև 60 սանտիմետր:

Վանդակ-թակարդի մի կողմը ամրոջնովին պետք է ծառայի իբրև դուռ, վորը հարկավոր դեպքում հնարավոր լինի ծածկել հեշտ և արագ: Դոնից կապում են բարակ թուկ, վորի մյուս ծայրը հեռու ցանկապատից. կերամանները դնում են վանդակ-թակարդի մեջ և յերբ ձագարները հավաքվում են կեր ուտելու, իսկույն ծածկում են դուռը և բանալով տանիքի մասում պատրաստված անցքը բռնում են նրանց:

Գաղանների, կատունների կամ շների մուտք պարկետի մեջ արգելելու համար, պատի վերևի մասը չինում են 40—50 սանտիմետր դուրս ցցված, կամ պարկետի մոտերքում թակարդ են յարում:

Պարկետից վոչ հեռու պահում են կապած շուն, վորովհետև շան ներկայությունը արգելք է հանդիսանում աղվեսներին, կատուններին և այլ դաղաններին ձագարարուծարանին մոտենալու:

Շուն պետք է կապել աշխարհի հեռավորությամբ վրա, վոր նրա ներկայությունը վտանգավոր չլինի ձագարներին ճիճուներով վարակելու տեսակետից:

Բուծարանում պահվող շանը չպետք է կերակրել ձագարի մսով, վորովհետև նա սովորելով դրան՝ սոված ժամանակ, կարող է ձագարներ վորսալ:

ձագարներին բնական պայմաններում բաղմացնելու նպատակով կառուցում են նաև առանց ծածկոցների պարկետեր, վորոնք մեր կարծիքով, աննպատակահարմար են: Պետք է նրանց համար ստեղծենք աշխարհի հարմարություններ, վորոնք դոնե մի փոքր նպաստավոր լինեն ապրելու ու բաղմանալու համար:

Ներկայումս դոյություն ունեցող պարկետների ձևերից, մեր կարծիքով, ամենանպատակահարմարը մեր առաջարկած կիսածածկ պարկետն է, վորի մեջ ձագարը կարող է բաղմանալ կիսաբնական պայմաններում, ծածկոցի տակ պաշտպանվելով անձրևից, քամուց և արեղակի կիդից ճառագայթներից:

Բայց դրանով մեր անելիքները չեն վերջանում, քանի վոր մեր առաջ խնդիր է դրված, ձագարարուծության դարգացման դործը աշխարհի հիմքերի վրա դնել, վորպեսզի ամենաբիշ ծախսերով ձագարարուծությունից շատ արդյունք մտանալ:

Դիրեկտիվ մարմինների վորոշմամբ 1932 թվին միմիայն կոլխոզներին դժով կաղմակերպված բուծարանների հիմնական արտադրող հոտի քանակը պետք է հասնի ութ և կես միլիոն ձագարի, հետևապես 1933 թվականին պետք է ստացվի միմիայն կոլխոզների դժով հարյուր միլիոնից ավելի մատղաշներ:

Յենելով Խորհրդային Միության հսկայական հնարավորություններին, մեր կարծիքով, կարելի է այդ թիվը ել ավելի մեծացնել:

Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կոլխոզիկների անխոնջ աշխատանքի հետ միասին՝ կաղմակերպել նաև աշխարհի արդյունաբերական ձագարարուծարաններ, վորոնց միջոցով հնարավոր լինի քիչ նյութական միջոցներով ու բանվորական ուժ ծախսելով ստանալ մեծ քանակությամբ ձագարարուծական մթերքներ:


Պարզ է, վոր վանդակային ձևով մենք չենք կարող հիմնականում

լուծել այդ խնդիրը, վորովհետև, բացի այն վոր վանդակը վատ է ազդում ճագարների առողջութեան և վորակի վրա, այլև պահանջում է հսկայական ծախսեր ու բանվորական ուժ:

Մեր առաջարկած պարկետային ձևը նպատակահարմար է գլխավորապես այն տեսակետից, վոր նրա միջոցով կարող ենք կիսաբնական պայմաններում բազմացնել լավորակ ճագարներ:

Բայց վորովհետև պարկետների համար ել նույնպես պահանջվում է շինանյութ և վորոշ չափով բանվորական ուժ, ստիպված ենք պարկետների կառուցման հետ միաժամանակ նախատեսել նաև այնպիսի ձևի ճագարաբուծարաններ, վորոնց միջոցով հնարավոր լինի առանց մեծ ծախսերի և բանվորական ուժ գործադրելու, հեշտութեամբ կատարել ճագարաբուծութեան առաջ դրած խնդիրները:

Այդպիսիներն են «գարեննա»-ները, «Տրանչեյ»-ները կամ «Բլին-դաֆ»-ներն ու կղզիները:



Նկ. 35. ճագարի բուներ բնական պայմաններում

«ԳԱՐԵՆՆԱ»-ՅԻՆ ՉԵՎ

Գարեննաներում բնական պայմանների մեջ ճագարներ բազմացնելու հաջողութեան ամենագլխավոր և ամենաէական պայմաններից մեկը՝ հարմար հողամաս հատկացնելն է:

Ապացուցված է, վոր վայրի ճագարը բնական պայմաններում ապրում է միմիայն չոր, կավավազային վայրերում:

Վայրի ճագարները կառավարվում են ճահճային ու խոնավ տեղերից, գերադասելով բլուրները առատ բուսականությամբ, գլխավորապես թփուտներով ձորակներ, թեք լանջեր, այնպիսի վայրեր, վորոնք պաշտպանված են քամիներից, իսկ ամենագլխավորն է՝ վորտեղ կանոշեն առնում անձրևային ջրերը:

Գարեննաների համար հատկացված հողամասը պետք է հեռու լինի գերեզմանատներից, խոշոր գործարաններից, գոմերից և ճահճներից:

Գարեննաների համար հատկացված ամեն մի հեկտար հողամասում կարելի չէ պահել մինչև 40 եգ և 5 արու ճագարներ, իսկ զրոյից կեր մատակարարելու դեպքում, ամեն մի հեկտար հողամասում կարելի է թողել 100 մայր և 10 արու ճագարներ, այսպիսով գարեննայի տարածութունը համապատասխան է հոտի քանակին:

Չոր տեղավորելու ավելորդ ծախսերից խուսափելու համար նպատակահարմար է, ընտրել այնպիսի հողամասեր, վորտեղ կա մաքուր և առողջ խմելու ջուր:

Գարեննաների և պարկետների կառուցման համար հատկացված հողամասը չեթե բացառապես ավազային է, այդ դեպքում ճագարների շինած բները վրում են և հաճախ հողի տակ խեղդվում են վոչ միայն ճագարը, այլև մայրերը: Դրա համար ել ավելի նպատակահարմար է չոր կավավազային, իսկ այդպիսու բացակայութեան դեպքում կավային հողամաս:

Մենք արդեն ասել ենք, վոր ճագարները քանդելով հողը, կարող են դուրս գալ գարեննաներից, դրա համար ել անհրաժեշտ է նախ քան պարսպելը, հիմքերը ամրացնել ճիշտ նույն ձևով, ինչպես պարկետների կառուցման ժամանակ:

Գարեննաների պարսպի բարձրութունը պետք է լինի մինչև 2 մետր. ծառերի ճյուղերից և յերկաթալարի ցանցից: Յեթե ցանկապատ է կառուցվում այդ դեպքում անհրաժեշտ է հողի մակերևութից 50-60 սանտիմետր բարձրութեամբ ներսի կողմից սվաղել դարմանախառն ցեխով, վորպեսզի ճագարները չկրճեն ցանկապատը ու դուրս չգան:

Անձրևներից, չոգից կամ գիշատիչ թռչուններից ճագարները պաշտպանելու համար անհրաժեշտ է գարեննայի զանազան մասերում պատրաստել փոքրիկ ծածկոցներ՝ ամենահասարակ շինանյութերից: Ծածկոցների տակ պետք է պատրաստել մուրներ և կերամաններ՝ ձմռան կերակրելու համար: Տես նկար № 41:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին բռնում են բոլոր արու ճագարներին, նրանցից ամենալավորակ ու գեղեցիկ մորթի ունեցողներին թողնում այն քանակութեամբ, վորքան անհրաժեշտ է տնտեսութեան համար: Վորպես արտադրողներ, իսկ մնացածներին ծախում կամ մորթում են:

Նպատակահարմար է տարեկան մի անգամ արունները մի գարեննա-յից փոխադրել մյուսը, վորպեսզի միևնույն գարեննայում յերկար թողնելու հետևանքով առաջացած արյունակցական կապի շնորհիվ, այլապես տեղի չունենա, կամ թե չէ սերնդի թարմացման համար ավելի լավ է գտարյուն արուններ բերել ուրիշ տնտեսութուններից:

Մենք ասել ենք, վոր ճագարների արունները լինում են չափազանց կուլարար: Սակայն փորձերը ցույց են տվել, վոր յեթե ամեն մեկ արու ճագարի համար թողնենք 8-10 եգ ճագար, այդ դեպքում արունների բնավորութունն ավելի մեղմանում է:


Միատեսակ գույնի մորթիներ ստանալու համար անհրաժեշտ է ամեն մի գարեննայում թողնել միագույն ճագարներ, գլխավորապես ու-մեն մի գարեննայում թողնել միակի վորակի, ցեղի և գտարյունութեան չաղրութուն դարձնելով արունների վորակի, ցեղի և գտարյունութեան վրա: Յեթե տնտեսութունում կան մի քանի տեսակի ու գույնի ճագարներ, ավելի նպատակահարմար է նրանց տեղավորել տարբեր գարեննաներում՝ ըստ գույների ու տեսակների, վորպեսզի խառնաբլիտութուն չստացվի, այլ միատեսակ գույնի մորթիներ:

ճագարները գարեննաներում տեղավորելու ժամանակ պետք է յուրյ ուշադրութուն դարձնել նրանց առողջութեան վրա:

ճագարների արածելու համար, նպատակահարմար է գարեննաներում ցանել նրանց սիրած բույսերից՝ առվույտ, յերեքնուկ, խոուտիկ, կոուտ, յալչան և այլն:

Գարեննաներում ճաղարները կարող են կերակրվել ու բաղմանալ առանց մարդկանց խնամքի: սակայն յեթե լինում է խիստ յերաշտ ամառ, կամ ցուրտ ձմեռ, այդ դեպքում պետք է կերակրել:

Գարեննաներում ապրող ճաղարները կերակրվում են խոտով, միայն մորթելուց 15-20 օր առաջ, մսի և մորթու փորակը բարձրացնելու նպատակով տալիս են ուժեղ կեր:



Նկ. 36. Գարեննայի ընդհանուր տեսքը:

Գարեննայի բացասական կողմը՝ նրա դադաններից յավ չարաչապանված լինելն է. յեթե անտեսությանը հաջողվի, պահակների կամ չների միջոցով կազմակերպել նրանց հսկողության դժուր, այդ դեպքում կասկած չկա, վոր գարեննաների միջոցով հնարավոր կլինի արտադրել ավելի մեծ քանակությամբ ճաղարարուծական եփան մթերքներ:

«ԲԼԻՆԳԱԺ»-ների կամ «ՏԲԱՆՇԵՅ»-ների մե.

Հյուսիսային կովկասում, Կազակստանում, Վոլգայի և այլ շրջաններում, վորտեղ կան խոշոր տարածությամբ տափաստաններ, ներկայումս կազմակերպվում են արդյունաբերական խոշոր ճաղարարուծարաններ Բլինդաթների կամ Տրանշեյների ձևով:


Առաջներում խոշոր արդյունաբերական ճաղարարուծարաններում գոյություն չի ունեցել այդ ձևը:

Բլինդաթները գործադրել են միայն գյուղացիները՝ մանր անհատական տնտեսություններում, վորի հետևանքով ել մեղ հայտնի չէ, թե ինչ հետևանք են տվել բլինդաթների կամ տրանշեյների ձևով կազմակերպված ճաղարարուծարանները:

Բլինդաթները կառուցվում են ըստ հիմնական հողի թվի: Ամեն մեկ բլինդաթում խնամում են 10 եղ և մի արու ճաղար: Բլինդաթները կառուցվում են միմիայեցի վորոշ հեռավորության վրա, 10-15 մետր մեկ մյուսից հեռու (տես նկար 40):

Տրանշեյի համար փորվում է փոս մինչև 10 մետր յերկարությամբ, 75 սմ. խորությամբ, իսկ լայնությունը՝ վերևում 150 սմ., հատակում՝ 75 սմ.:

Փոսի վերևի մասում դնում են սլառ, կամ ցանկապատում են՝ ճաղատի կողմից 60 սանտիմետր, իսկ հետևի կողմից 20 սանտիմետր բարձրությամբ: Վորի հետևանքով ստացվում է թեք տանիք և հնարավորություն տալիս անձրևի ջրերին հոսել դեպի հետևը:



Նկ. 37. Տրանշեյներ 90 մայր և 9 արու ճաղարի համար

Տանիքը ծածկում են ամենահասարակ շինանյութից՝ յեղեղ, ծղոտ, ծառի ճյուղեր, մոխրատեր, և վրայից 10-12 սանտիմետր հաստությամբ հող են լցնում: Այդպիսի ծածկույթի տակ, Բլինդաթներում, ամառը լինում է հով, իսկ ձմեռը տաք:

Ճակատի կողմից ամեն մեկ բլինդաթի համար պետք է թողնել 5 անցք ճաղարների անցուղարձի և դադանների կամ գիշատիչ թռչունների հետապնդումից խուսափելու ու արագ թափնվելու համար:

Այդ անցքերի ուղղությամբ դեպի ներսը պետք է լինի թեք ճանապարհ, վորպեսզի ճաղարները, գլխավորապես ձաղերը կարողանան հեշտությամբ անցնել:

Բլինդաթի վերին մասում պետք է դնակ պատրաստել, վորպեսզի ճաղարապահը մաքրելու կամ մի այլ աշխատանք տանելու համար կարողանա ներս անցնել (տես նկար 38):


Ճաղարները տրանշեյի մեջ քանդում են հողը և այնտեղ լինում իրենց բունը, վորտեղ և ծնում են:

Նրանք ցերեկները հանգստանում են բլինդաթներում, իսկ գիշերները դուրս են գալիս արածելու և դրոսնելու:

Այդպիսի բլինդաթում կարելի չէ պահել 10 եղ և մեկ արու ճաղար, բլորը պետք է լինեն մի գույնի կամ մի ցեղի:

Արու ճաղարը կարելի չէ ընդմիջաթողնել եղերի մոտ, բայց նպասակահարմար և եղերի մոտ արուն թողնել միայն զուգավորման շրջանում այն ել 10-12 օրով:

Ձաղերը թողնում են մոր տակ մինչև 40 որակյան հասակը, վորից հետո անջատում են մայրերից ու խնամում նրանց համար հատուկ պատ-
րաստած ցանկապատերում կամ մի ալլ համապատասխան բնակարա-
նում, մինչև 5 ամսական հասակը, վորից հետո վաճառում են:



Նկ. 38. Տըռնչեյի կարվածք. պատրաստված է ծառերի ճյուղերից ու սվաղած

Գիշատիչ թռչուններից պաշտպանելու նպատակով, նպատակահար-
մար է բլինդաժների չորս կողմը ծառեր տնկել:

Անձրեային ջրերից պահպանելու համար անհրաժեշտ է ամեն մի
բլինդաժի մոտ ջրատար առուներ պատրաստել:

Միջանցիկ քամիներից խուսափելու համար անցքեր պետք է լինեն
միմիայն ճակատի կողմից, բացառությամբ ճաղարապահի համար պատ-
րաստած դռնակից:

Տըռնչեյները պետք է մաքրել յերկու որը մեկ անգամ:

Վոչ մի կասկած չկա վոր տրանչեյներում հնարավոր է բազմացնել,
լավորակ և առողջ ճաղարներ, քանի վոր այդտեղ նրանք գտնվում են
միանգամայն բնական պայմաններում: Սակայն այստեղ ևս առաջանում է
նրանց պաշտպանելու հարցը, վորը հնարավոր է լուծել հատուկ պահակ
ունենալով:

Գարեննաների կամ տրանչեյների կից կարելի չէ կառուցել փոքրիկ
տուն պահակների համար (տես նկար 37):

Մեր կարծիքով, միացնելով զարեննաների և տրանչեյների կամ
բլինդաժների կառուցման ու խնամքի ձևերը, հնարավոր կլինի ծածկել
այդ յերկու ձևերի բացասական կողմերը:

Նշած կոմբինացիոն ձևի միջոցով ավելի հեշտ կլինի լուծել մեր առաջ
դրած խնդիրն արդյունաբերական ճաղարաբուծության բնագավառում:

ԿՂՁԻՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՑՆԵԼԸ

Կղզիներում կամ թերակղզիներում ճաղարներ խնամելու ու բազ-
մացնելու ամենադիմադր նպատակներից մեկն այն է, վոր մենք այդ ձե-
վով հնարավորություն կունենանք ազատվել այն անհրաժեշտ ծախսե-
րից, վորոնք պահանջում են զարեննաներ ու տրանչեյներ պատրաստելու
և հսկելու համար:

Ներկայումս այդ փորձերը կատարվում են Կասպից ծովի կղզիներ-

րում ու Սևանա լճի թերակղզում և նախատեսվում է ուրիշ ծովերի կամ
լճերի կղզում ու թերակղզիներում կազմակերպել արդյունաբերական
ճաղարաբուծարաններ:

Այդ նպատակի համար հատկացված կղզիները կամ թերակղզիները, թե
բուսականությամբ և թե կլիմայական ու բնական պայմանների տեսա-
կետից, ճաղարաբուծութան համար պետք է համապատասխան լինեն:
Բացի այդ, անհրաժեշտ է նաև ճաղարաբուծարաններին հատկացված
կղզիները ուսումնասիրել և յեթե այնտեղ հայտարկվեն ճաղարների
վնասող գաղաններ, նրանց վոչնչացնելու համար անմիջապես ձեռք
նել միջոցներ:

Կղզիներում ճաղարներ պետք է տեղավորել այն հաշվով, վոր ա-
մեն մի հեկտար տարածութան ընկնի 40 եգ և 3 արու ճաղարներ:

Միատեսակ դույնի մորթիներ ստանալու համար պետք է ընտրել մի-
ևնույն դույնի մորթի ունեցող ճաղարներ:

Կղզիների կլիմայական խիստ պայմաններին ավելի հեշտությամբ
դիմանալու համար նպատակահարմար է ընտրել տեղական սովորական
ճաղարներից ստացված մետիսներ և ամեն 8—10 եգլին հատկացնել մի ցե-
ղական զտարյուն արու:

Այդպիսի խառնուրդից կարելի չէ ստանալ լավորակ, առողջ և դի-
մացկուն մետիսներ:

Կղզիների զանազան մասերում պետք է կառուցել միջանի փոքրիկ
տնակներ, զետնափորեր կամ բլինդաժներ, վորպեսզի հարկավոր դեպ-
քում ճաղարները կարողանան պաշտպանվել հորդ անձրևներից, արեվի
կիզիչ ճառագայթներից և դելատիչ թռչունների հարձակումներից:

Ամառվա և աշնան միջանի ամիսները ճաղարներն արածում են կա-

նաչ խոտ կարիք չեն զգում ուրիշ կերերի, այդ պատճառով ել նպատա-
կահարմար է ըստ հնարավորութան, կղզում ցանել նրանց սիրած բույ-
սերից առվույտ, յերեքուկ, վարսակ և այլն:

Չմեռը անհրաժեշտ է կերակրել: Այդ նպատակով ել պետք է կղզ-
ածակոցների տակ պատրաստել մսուրներ ու կերամաններ: Կղզում նպա-
տակահարմար է թողնել ծղոտ, վորից ճաղարներն ոգտվում են բուն շի-
նելու համար:


Կղզիներում պահելու ձևը մեղ աղատում է այն ծախսերից, վո-
րոնք պահանջվում են ուրիշ ձևերի ճաղարաբուծարաններ կազմակերպե-
լու ժամանակ:

Սակայն կղզիների կլիմայական խիստ պայմանները, մասնավոր
ձմեռվա ընթացքում, պահանջում են մեզինք մեծ ուշադրութուն դարձ-
նել և ստեղծել նպատակավոր պայմանների այն միջավայրում, վորոնց կի-
րառումը ճաղարներին հնարավորություն կտա դիմանալու այդ խիստ
պայմաններին:

Մենք գիտենք, վոր ճաղարները ցրտից չեն վախենում, բայց հորդ
անձրևներից, խիստ քամիներից ու փոթորիկներից պաշտպանվելու հա-
մար անհրաժեշտ է ստեղծել նպատակավոր պայմաններ:


Թերակղզիներում ճաղարաբուծարան կազմակերպելու դեպքում, պետք
է ընտրել այնպիսի թերակղզիներ, վորոնց տարածութան մեծ մասը
չլիարկատված է ջրով: Իսկ այն մասը, վորը ջրով չլիարկատված չէ,
պետք է ամբացնել ճիշտ նույն ձևով, ինչպես ամբացվում են զարեննա-
ները:

Սմբացված հիմքերի վրա պետք է դնել յերկու մետր բարձրությամբ պատ: Պատի մեջ տախտակից պիտի շինել մի դարպաս (դուռ), վորպեսզի հնարավոր լինի սայլերով կամ ուրիշ փոխադրական միջոցներով թե՛ կեր և թե՛ ճագարաբուծության արտադրած մթերքներ փոխադրել:



Նկ. 39. Վայրի ճագարների բները բնական պայմաններում:

Նույն դուռն ոգտադրվելու յե նաև ճագարապահների անցուղարձի համար:




Նկ. 40. Ճագարը այգիսի բներում կարողանում է պաշտպանվել եր թշնամիների հարձակումներից:

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում «Վանդակ-թակարդ»-ի միջոցով պետք է բռնել բոլոր ճագարներին և թողնել միայն նրանց, վորոնք անհրաժեշտ են տնտեսության զարգացման համար, իսկ մնացածներին վաճառել:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել արու ճագարների վորակի վրա, իսկ արյան թարմության համար հարկավոր է արուններին հաճախ փոխել:

Մեր կարծիքով, այն թերակզղիներից, վորոնց չուրջը ձմեռը սառչում է ջուրը և անցք է բացվում թե ճագարներին փախչելու և թե դադաններին անցնելու թերակզղին, նպատակահարմար է ժամանակավոր տեղափոխել ճագարներին մի վորեն հարմարեցրած տեղ մինչև դարնան սկիզբը: Այդ շրջանում միանշամայն անհրաժեշտ է արու ճագարներին ստանձնացնել եղերից, վորպեսզի չզուգավորվեն:



Նկ. 41. Ծածկոց գարեննաներում և կղզիներում ապրող ճագարների համար:



Նկ. 42. Կղզում խնամվող ճագարներ:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ԲՈՒԾՈՒՄԸ

Ինչպես բոլոր տեսակ կենդանիների նույնպես և ճագարների բուծման խնդրում կարևոր տեղ են բռնում արունները: Արտադրող արու ճագարը պետք է լինի առողջ, ուժեղ, կայտառ և գեղեցիկ:

Ցեղական արու ճագարն առանց բացառության պետք է ունենա իր ցեղի հատկանիշները:

Տարբեր ցեղերի ճագարները, տարբեր հասկում են զուգավորման

Հասնում: Որինակ՝ մանր ցեղի ճագարները՝ «Գարնառայ», «Անգլիական Արծաթագույն», տեղական հասարակ և այլ եզերը հասունանում են 5-6 ամսական, իսկ արունները 8 ամսական հասակում:

Միջակ մեծության ցեղերի ճագարները «Շինչիլլա», «Վեննական կապույտ», «Վեննական սպիտակ» և նման այլ տեսակների եզերը հասունանում են 6-7 ամսական հասակում, իսկ արունները 10 ամսական հասակում: Խոշոր ցեղերի ճագարները՝ «Ֆլանդր», «Սպիտակ հրակա» և ուրիշ խոշոր ցեղերի եզերը հասունանում են 8-9 ամսական, իսկ արունները 12 ամսական հասակում:

Թեև բնական պայմաններում ճագարները ավելի վաղ են բեղմնավորվում, քան մեր նշած հասակները:

Սակայն պետք է խուսափել ֆիզիկական դեռ չչարգացած ճագարների զուգավորումից, վորովհետև Հասունացած ճագարներից ստացված ճագերը վատ են աճում և կաղմվածքով թույլ լինում:

ճագարները թեև աղբում են 8-10 տարի, բայց նրանց արդյունավետ հասակը կարելի չէ համարել՝ եզերները մինչև 3 տարեկան, իսկ արուններինը մինչև 4 տարեկան հասակը, վորից հետո նպատակահարմար է նրանց փոխարինել նորերով:

Յերբեմն պատահում է, վոր թե՛ հզ և թե՛ արու ճագարը, հիվանդության կամ չափազանց դերության հետևանքով ավելի վաղ և զրկվում սերունդ արտադրելու ունակությունից: Այդ դեպքում այդպիսիներին պետք է հեռացնել տնտեսությունից, վորպեսզի նրանց վրա անտեղի ծախսեր չկատարվեն:

Թեև յուրաքանչյուր արու կարող է բավարարել մինչև 15 եզ ճագարի, բայց նպատակահարմար է, կիսաբնական պայմաններում խնամվող 7-8 եզին մի արու, իսկ վանդակում խնամվող 5-6 եզին մի արու ճագար տալ:

Կիսաբնական պայմաններում ճագարները զուգավորվում են առանց մարդու հսկողության և ոժանդակության, իսկ վանդակում խնամվող ճագարների զուգավորումը կատարվում է բացառապես ճագարապահների հսկողության տակ:

Յեթե հզ ճագարները հղացած չեն, ապա նրանք ամեն 8-9 օրը մեկ անգամ տրամադրվում են զուգավորվելու և այդ տրամադրությունը չարունակվում է 4-5 օր:

Նրանց տրամադրություն կարելի չէ խմանալ նայելով սեռական որդաններին, վորոնք այդ ժամանակ լինում են խիստ կարմրած, թաց, ուռած ու բորբոքված:

Արու ճագարը պետք է զուգավորեն որական մեկ կամ յերկու անգամ:

Զուգավորման չըջանում անհրաժեշտ է արուններին կերակրել ուժեղ կերերով, մանավանդ վարսակով:

ճագարները բեղմնավորվում են տարվա բոլոր յեղանակներին, բայց վորովհետև ձմեռը ճագերը ստանալու համար անհրաժեշտ է հղի ճագարներին պահել տաք շենքերում, և ծնելու ժամանակ շենքում պիտի լինի 7 աստիճանից վոչ պակաս տաքություն, այդ պատճառով ել նպատակահարմար է զուգավորումը սկսել կլիմայական տաք պայմաններ ունեցող չըջաններում՝ փետրվարի մեկից մինչև 15-ը, ցուրտ չըջանում՝ մարտի մեկից մինչև 15-ը:

Նոր կաղմակերպված ճագարաբուծարաններում, վորտեղ խնամվում են բացառապես նոր ստացված մատղաշներ, վորոնք դեռ առաջին անգամ են զուգավորվում, ավելի նպատակահարմար է զուգավորել մարտի 15-ից հետո, վորովհետև նրանք չեն կարողանում լավ ծածկել ճագերին և յեթե ծննդաբերությունը պատահում է ցուրտ յեղանակներին, ճագերը ցրտահար են լինում:

Զուգավորումը. — Վանդակներում խնամվող ճագարներին նպատակահարմար է զուգավորել վաղ առավոտյան կամ ուշ յերեկոյան ժամերին:

Ավելի գերադասելի յեն յերեկոյան ժամերը: Զուգավորելու համար պետք է եզին տանել արույի մոտ: Դրա համար ել, նախ քան եզին տանելը, անհրաժեշտ է արույի վանդակից հանել կերամանները և մաքրել:

Պետք է հետևել զուգավորմանը, և յեթե արուն բարձրանալով եզի վրա, ծածկելով նրան զլորվում է ցած, մի կողքի վրա և յերբեմն ել ձայն է հանում, այդ նշանակում է վոր զուգավորումը կատարված է: Այդ դեպքում իսկույն պետք է եզին հանել արույի վանդակից և տանել իր տեղը:

Համոզված լինելու համար, վոր զուգավորումը կատարված է քան ըստ յեղանակից հետո նույնը կարելի չէ կրկնել:

Յեթե զուգավորումը կատարվում է ցեղական նպատակով՝ այդ դեպքում անհրաժեշտ է վանդակի վրա ամրացրած քարով վրա դրել:

Մայր ճագարի ականջի №
Յեղը Հասակը
Զուգավորման օրը Արույի ականջի № Յեղը
Ծնելու օրը

Այդ նմուշներն անհրաժեշտ են ճագարաբուծին իմանալու ճագարի ծնելու օրը, վորովհետև ծնելուց յերկու յերեք օր առաջ հարկավոր է հղի ճագարի վանդակը մաքրել, ախտահանել, դուռն չինելու համար հղի ճագարի համար մաքուր ջուր դնել, վորովհետև ծնելու ժամածրոտ և խմելու համար մաքուր ջուր դնել, վորովհետև ծնելու ժամանակ ճագարները խիստ ծարավ են զգում և յեթե վանդակում ջուր չի լինում տանջվում են, յերբեմն ել վնասում ճագերին:

Բնական պայմաններում ծնված ճագերի հայրը կամ մայրը դժվար է իմանալ, բայց վանդակում միշտ իմացվում է:

Յերբեմն պատահում է, վոր եզ ճագարը պաշտպանվելով արու յի հետապնդումներից չի զուգավորվում. այդ դեպքում պետք է եզին վերցնել և մյուս օրը թողնել մի ուրիշ արույի մոտ, վորովհետև համարն պատահում է, վոր եզը չի հավանում մեկին այլ հավանում է մյուսին:

Յեթե հզ ճագարը մի արույի վանդակից վերցնելով անմիջապես փցնեք մի ուրիշ արույի մոտ, այս յերկրորդ արուն զգալով արու ճագարի վանդակի հոտը, կարծում է թե իր վանդակը արու ճագար է մտել, հարձակվում է եզի վրա և գզգզում:

Բազմապիսի ձևերով կարելի չէ ստուգել, արդյոք եզը հղացե՞լ է, թե վոչ, մենք այդ ձևերից միայն տալիս ենք ամենավորձավածը և ստույգը:

Զուգավորման 15-րդ օրը կարելի չէ վերցնել եզ ճագարը դնել ծընկան կամ սեղանի վրա և շատ մեծ զգուշությամբ ձեռքը սեղմել վորին ու քննողությամբ շարժել դեպի վերև. յեթե ճագարը հղացած է չու-

չափովում են մի շարք ընկույթի մեծութիւնը կետեր, այդ կետերը ստեղծ-
մերն են: Իսկ յետեւ չեն շոշափում այդպիսի կետեր, նշանակում է
հղացած չեն, նշանակում է պետք ե կրկին անգամ զուգավորել:

Մի քանի ճաղարարութեան կարծիքով՝ արդեն հղացած եղ ճա-
ղարը, կարող է յերկրորդ անգամ հղանալ և դրա հետեանքով ել
ստուկել:

Յերկար տարիներ մեր գործնական աշխատանքների ու փորձերի ըն-
թացքում չենք նկատել այդպիսի դեպք:

Խոշոր նշանակութիւն տալով զուգավորման աշխատանքների կողմ-
մակերպման գործին, անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասն
տալ այն ցուցմունքները, վորոնք շատ կարեւոր են ճաղարարութեան
ների գործնական աշխատանքների ընթացքում:

1. Այն ճաղարները, վորոնք խնամվում են վանդակներում, ծածկ-
ված չենք երում, ձմեռվա ընդմիջումից հետո, կարելի չէ զուգավորել
փետրվարի մեկին:

Իսկ մնացած բոլոր պայմաններում խնամվող ճաղարներին պետք է
զուգավորել փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը, ըստ կլիմայական
պայմաններին:

2. Նախ քան զուգավորելը, պետք է մաքրել ու արտահանել բոլոր
վանդակները և պարկետները:

3. Ճաղարները ձմեռվա հանգստից հետո, յերբ անցնում են բեղմ-
նավորութեան և ծննդաբերութեան, կարիք են զգում առատ կերերի, այդ
պատճառով ել անհրաժեշտ է թե՛ զուգավորման և թե՛ հղութեան շրջա-
նում նրանց կերակրել ուժեղ կերերով:

4. Ճաղարների զուգավորման շրջանում պետք է կազմել որացույ-
ցային պլան և կախել ճաղարարութեանը:

5. Զուգավորվելու համար պետք է ընտրել ֆիզիկապես հասունա-
ցած և առողջ արուններ, վորովհետեւ դեռ չ'հասունացած և կազմվածքով
թույլ արուններից ստացվում են վատորակ ձագեր, իսկ իրանք արունները
կարճ ժամանակամիջոցում կորցնում են զուգավորման ունակութիւն-
ները:

6. Զորա տարեկանից ավելի հասակ ունեցող ճաղարներին նպատա-
կահամար է փոխարինել մատղաշներով:

7. Արունները պետք է հատկացնել իրենց ցեղի եղերին, իսկ մետղա-
ցիայի համար ընտրել այնպիսի եղեր, վորոնց մորթու դույնը նմանվում
է արունների դույնին:

8. Հասարակ կամ մետիս եղ ճաղարներին մանր տեսակները պետք է
զուգավորել խոշոր արունների հետ, վորոնց խառնուրդից ստացվում է
խոշոր մատղաշներ:

9. Ճաղարներին կարելի չէ բացառիկ դեպքում յենթարկել արյու-
նակցական զուգավորման, զլխավորապես յերբ այդ կատարվում է սե-
լեկցիոն—ցեղական նպատակով:

10. Նպատակահամար է ճաղարարութեանը խնամվող ճաղարնե-
րի զուգավորումը սկսել միաժամանակ և ավարտել 10 օրվա ընթացքում,
վորպեսզի ծնելուց հետո հնարավոր լինի շատ ձագ ունեցող մայրերի
տակից հանել ավելորդ ձագերը և դնել այն մայրերի տակը, վորոնք ու-
նեն քիչ ձագեր:

11. Նախքան զուգավորելը պետք է նայել եղ և արու ճաղարների սե-
ռական որդանները, վորպեսզի վերավորված կամ հիվանդ չ'լինեն:

12. Արու ճաղարների վանդակներից պետք է հանել կերամանները,
վորպեսզի զուգավորման ժամանակ չ'խանգարեն:

13. Եղ ճաղարին պետք է տանել արու ճաղարի վանդակը:

14. Պետք է հետևել, վորպեսզի զուգավորումը կատարելուց հետո
խոկույն եղին հանել արույի վանդակից, իսկ 20 րոպե յից հետո, նորից մի
անգամ կրկին զուգավորումը, վորից եղին տանել իր վանդակը:

5. Եղ ճաղարը կես ժամից ավելի չ'պետք է թողնել արու ճաղարի
մոտ, վորպեսզի արունը ուժասպառ չ'լինի:

16. Արու ճաղարին որական յերկու անգամից ավելի աննպատակա-
համար է ոգտագործել զուգավորման համար: Ավելի լավ է որական մեկ
անգամ:

17. Յերկրորդ եղին կարելի չէ արույի մոտ թողնել մյուս օրը:

18. Պարկետներում խնամվող եղերին զուգավորելու համար պետք է
ամեն 8—10 եղին հատկացնել մեկ արու ճաղար:

Արուն պետք է լինի առողջ և ուժեղ, նա պարկետներում դանդաղ ե-
ղերի ցեղից պետք է լինի:

19. Զուգավորումից մի քանի օր առաջ պետք է մաքրել ու արտահա-
նել պարկետները, իսկ ճաղարներին կերակրել ուժեղ կերերով:

20. Հիվանդներին պետք է հոսանքնել պարկետներից:

21. Արուն կարելի է թողնել պարկետներում եղերի մոտ 10—12 օր
վորից հետո պետք է հոսանքնել պարկետից:

22. Յեթե նկատվում է, վոր արուն թույլ է, պետք է փոխարինել
ուժեղով:

23. Գարեհոտներում, կղզիներում կամ բլինդաժներում խնամվող
ճաղարները զուգավորվում են բնական պայմաններում՝ առանց մարդու
հսկողութեան:

Ազատ պայմաններում 8—10 եղ ճաղարին պետք է հատկացնել 1 ար-
ու ճաղար:

24. Աշնան վերջին նպատակահամար է ազատ պայմաններում խը-
նամվող եղ ճաղարներից անջատել արու ճաղարներին, վորպեսզի ձմեռ-
վա ընթացքում զուգավորում տեղի չ'ունենա:

Հղություն. — Ճաղարների հղութիւնը մեծ մասամբ տեղում է
30—31 օր, իսկ բացառիկ դեպքում 28—34 օր:

Հղութեան շրջանում նրանց պետք է լավ խնամել ու կերակրել,
վորովհետեւ այդ ժամանակ ավելի մեծ պահանջ են դրում առատ և լավ
կերերի:

Հղի ճաղարին չ'պետք է վախեցնել, շուտ-շուտ բռնել և անհանգըս-
տացնել, վորովհետեւ հղիութեան ընթացքում նրանք լինում են շատ ջը-
ղային:

Հղի ճաղարները ծնելուց մի քանի օր առաջ բերանով սկսում են
հավաքել բնակարանի մոտ դանդաղ ծղոտը և տանել իր բնակարանի մի
անկյունը բուն պատրաստելու համար, վորից հետո ատամներով քանդում
են զլխավորապես փորի մաղերը ու նրանով փափկացնում բունը:

Դրա համար ել անհրաժեշտ է ծնելուց մի քանի օր առաջ ծղոտ դնել
բների մոտ:

Մնումը. — Մնելու ժամանակ ճաղարը մարդու ողնության կարիք չի
զգում, յեթե միայն վանդակում դրված է ծղոտ և ջուր:

Մնելուց մի օր հետո, մայր ճաղարին հանում են վանդակից և նրա
բացակայություն ժամանակ ստուգում ճաղերի թիվը ինկատի ունենալով
վոր մայր ճաղարի ծիծը ունի ութը պտուկ, այդ պատճառով էլ նպատա-
կահարմար է մոր տակ վոչ ավելի քան 6—7 ճաղ, իսկ յեթե ճաղերը
հատկացվելու են ցեղական նպատակի համար, այդ դեպքում պետք է
մոր տակ թողնել 5—6 ճաղից վոչ ավելի:

Փորձերից պարզվել է վոր մայրերը շատ ճաղեր կերակրելու դեպ-
քում, ճաղերը լինում են շատ թույլ: Յերբեմն պատահում է, վոր հղի
ճաղարները մահավանդ նրանք, վորոնք առաջին անգամն են հղացել,
բուն չեն չինում և ճաղերը ցրում են վանդակի մեջ, այդ դեպքում ճա-
ղարապահը շատ զգուշությամբ առանց մորը ջղախնացնելու, պատրաս-
տում է բուն ու հավաքում ցրված ճաղերը բնի մեջ:

Մեր պրակտիկայում պատահել է, վոր անսպասելի ցրտերի հետևան-
քով ճաղերից մի քանիսը մահացել են չձածկված և սառել են ցրտից: Ան-
միջապես հավաքել ենք այդ կիսակենդան ճաղերին, զգուշությամբ տա-
քացրել ու խառնել բնում ծածկված ճաղերի հետ և այդպիսով նրանց
ազատել:

Ճաղարների ալյուսեռման գլխավոր պատճառներից մեկն էլ այն է,
վոր նրանք ընդունակ են ծնած օրը նորից գուզավորվել ու հղանալ,
վորի հետևանքով էլ ստիպված են լինում միաժամանակ կերակրել ու
խնամել արդեն ծնված ճաղերին և թե՛ պատրաստվել նոր ծննդաբերու-
թյան համար:

Պարզ է, վոր այդպիսի պայմաններում խնամված ճաղերը լինում են
կազմվածքով թույլ, թեթևաքաշ և ցածր վորակի: Իսկ մայրերը լի-
նում են ուժասպառ:

Նորմալ բաղմացման համար եզ ճաղարը պետք է բեղմնավորվի
արդյունաբերական ճաղարաբուծարաններում տարեկան չորս անգամ,
իսկ ցեղական ճաղարաբուծարաններում տարեկան յերեք անգամ:

Մենք սակ ենք, վոր ճաղարը ծնում է մինչև 17 ճաղ, բայց մե-
ծամասնությունը ծնում են 7—12 ճաղ: Հետևապես ստացվում են ավե-
րորդ ճաղեր, վորովհետև մոր տակ վեցից ավել չպետք է պահել:

Այդ ավելորդ ճաղերը կարելի է խնամել, յեթե անտեսություն մայր
ճաղարների մեջ կան ախտախիւները, վորոնք քիչ ճաղեր են ծնել, այդ
դեպքում կարելի է ավելորդ ճաղերը դնել նրանց տակ, վորի համար ան-
հրաժեշտ է կիրառել հեռեցալ միջոցները. — այն մայրը, վորին տալու
ենք նոր ճաղեր՝ պետք է հեռացնել իր վանդակից կես ժամով, վորից հե-
տո ճաղերը դնել նրա բնում գտնվողների հետ: Կես ժամից ընթացքում
նոր ճաղերը ընդունում են խորթ մոր բնի հոտը, և նա վերադառնալով
իր բունը չի նկատում անհարազատ ճաղերի ներկայությունը և խնամ-
քով կերակրում է նրանց:

Իսկ յեթե մենք նրան չհեռացնենք վանդակից նա նոր ճաղերի հոտից
զգում է, վոր իր ճաղերի մեջ կան ոտարներ, այդ պատճառով էլ նա
զազանանում է ու վոչնչացնում բոլոր ճաղերին:

Խնամք. — Ճաղերը ծնվում են մերկ, առանց մազերի, աչքերը փակ:
Մնվելուց 6—7 օր հետո սկսում են ծածկվել փափուկ վոչ խիտ աղվա-
մազով, իսկ 9—10 օրական հասակում բացվում են նրանց աչքերը:

Բացառիկ դեպքում, յերբ աչքերը չեն բացվում 12—13 օրական հա-

սակում, պիտի բամբակը թացացնել բորաթթվի լուծույթի մեջ և ըվա-
նալ. մաքրելով թարախից իսկույն բացվում են:

Ճաղերը 15—18 օրական հասակում սկսում են դուրս գալ բներից,
իսկ 20 օրական հասակում սկսում են ուտել մոր կերաբաժնից:

Ճաղեր կերակրող մորը տրվող կերերի քանակը այդ ժամանակիա-
նից պետք է ավելացնել:

Պետք է ինկատի ունենալ, վոր վորքան յերկար են մնում ճաղերը
մոր մոտ, այնքան էլ լավ են աճում:

Յեթե փոքր հասակում ճաղերը լավ են խնամվել, ապագայում
նրանք ավելի առողջ և դիմացկուն են լինում, քան վատ խնամվածները:

Ճաղերը անջատում են մորից 30—60 օրեկան հասակում, բայց
ամենանպատակահարմարը 45—50 օրը ցեղական ճաղարների համար,
իսկ 35—40 օր արդյունաբերական ճաղարների համար:

Թեև եզերը և արունները կարելի է թողնել միատեղ մինչև 3 ամիս
հասակը, բայց մեր փորձերից պարզվել է, վոր ավելի նպատակահարմար
է հենց մորից անջատելու օրվանից նրանց տեղավորել առանձին զբոսա-
րակներում:

Ճաղերը մորից անջատելու ժամանակ, արունները եզերից տաքե-
րելու համար, անհրաժեշտ է նրանց սեռական օրգանները սեղմել մատնե-
րով, վորից յերևում է նրանց վոր սեռին պատկանելը:

Ավելորդ արուններին պետք է ամորձատել 4 ամսական հասակում:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼԸ

Ցեղական ճաղարաբուծարաններում վորպեսզի հնարավոր լինի,
գրգբերում նշել ճաղերի ցեղը և վոր ծնողներից սերվելը, անհրաժեշտ է
համարակալել բոլոր ճաղարների ականջները, հատկապես համարակա-
լող ունելիքով (տես նկ. 43):



Նկ. 43. Ճաղարի ականջների համարակալելու ձևը:

Յուրաքանչյուր ցեղին պատկանող ճաղարները պետք է համարակա-
լել սկսած առաջին համարից:

Համարակալելու համար վերցնում են ճաղը և ողու կամ յեթերի
մեջ թացացրած բամբակով մաքրում ականջի ներսի այն տեղը, վորտեղ
պետք է համարակալվի, վորից հետո ունելիքի մեջ ամրացվում են ախ-
տահանված համարները և դնելով ականջի ներսի կողմի կաշվի վրա,
վորտեղ մաղեր չկա և ամուր սեղմում: Համարների ասեղների անցած
տեղերը տուչ են քսում, վորը ծծվելով կաշվի մեջ, մնում է շատ յեր-
կար տարիներ:

Յերբեմն պատահում է, վոր ականջի դրախ մազերի կողմից արյուն է հոսում: Այդ վտանգավոր չէ, միայն հարկավոր է արյունը կանգնեցնելու համար վերքը լվանալ արյան հոսանքը կանգնեցնող դեղերից մեկով:

Պատահում է, վոր համարակալող գործիքների կեղտոտության հետևանքով ճագարի ականջի բորբոքում է, թեև այդ միանգամայն վտանգավոր չէ, բայց անհրաժեշտ է թարախոտված վերքը լվանալ մի վոր-էն լուծույթով. վերքը չուտ անցնում է:

Յուրաքանչյուր ցեղին պատկանող ճագերին պետք է համարակալել առաջին համարից:

Մայր ճագարների քարտում պետք է գրել այն համարները, վորոնցով համարակալվել են նրանց ճագերը:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Ճագարը պահանջկոտ կենդանի չէ, նա ուտում է այն ամենը, ինչ ուտում են բոլոր տեսակի խոտակեր կենդանիները:

Մնուկից ու խնամքից զուրկ ճագարից անկարելի է ստանալ այն արդյունքը, վոր նա ընդունակ է տալու:

Տնտեսության համար շատ խոշոր նշանակություն ունի կերի կայուն բաղա ստեղծելու և կերակրելու հարցը: Այդ բնագավառում թույլ տված անսխեմությունը հաճախ պատճառ է դառնում տնտեսության քայքայմանը:

Ճագարաբուծության դարգացման համար ամենաեյականը՝ ճագարներին նպատակահարմար և եփան կերակրելու աշխատանքների կազմակերպումն է:

Ճագարաբուծական տնտեսությունները միմիանցից տարբեր հնարավորություններ ունենալու հետևաբով չի կարելի այդ խնդիրը միատեսակ լուծել:

Կերերի նորմաները, կերակրելու ձևը կախված է կլիմայական պայմաններից, ճագարների առողջությունից, նրանց ցեղից, հասակից, կըշռից, նրանց ախորժակից, անհատական ընդունակություններից, տարվա շեղանակներից, տնտեսության հնարավորություններից և վերջապես թե ինչ նպատակի համար կամ ինչ ձևով են խնամվում ու բուծվում ճագարները:

Տարվա բոլոր ժամանակներում ճագարին կարելի է կերակրել չոր խոտով: Բայց վորովհետև կանաչ թարմ կերը ավելի հարուստ է վիտամիններով, հանքային աղերով և այլ աննդանյութերով, ուստի անհրաժեշտ է, ըստ հնարավորության դարձանք հետզհետե չոր խոտի փոխարինել կանաչ կերով, վորը շատ է նպաստում ճագարների աճմանն ու առողջությանը:

Կանաչ կերը վոչ միայն նպաստում է ճագարների առողջությանը այլև հնարավորություն է տալիս ամենաեփան կերերով բաղմացնել մեծ թվով ճագարներ:

Մեր կլիմայական պայմաններում ճագարները բնորոշվում են մարտի սկզբներում, իսկ նրանց ապրիլի սկզբներում ծնած ճագերը մայիսի անջատվում են իրենց մայրերից և կերակրվում են ինքնուրույն կերպով:

Յեւ վորովհետև ամառվա ընթացքում մայրերը բնորոշվում են միջանի անգամ, ուստի ամենաշատ կերը պահանջվում է ամռան և աշնան ամիսներին:

Այդ պատճառով էլ, ամառվա ընթացքում նագարներին եփանագին, բայց սննդաբար կերերով կերակրելու հարցը պիտի հանդիսանա մեր խոշոր նագարաբուծարանների որվա խնդիրը:

Մանավանդ, վոր ճագարների առողջության ու աճման համար հսկայական նշանակություն ունեն կանաչ խոտի մեջ գտնվող առատ ածխաջրերը:

Դժբախտաբար, ճագարաբուծության վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը և ձեռնարկները մեջ, գլխավոր ուշադրությունը դարձված է ուժեղ կերերի, չոր խոտի և արմատապտուղների վրա, վորոնք փոխանակ ամառը ծախսելու, կարելի չէ պահել ձմեռվա համար:

Ամառվա ընթացքում չոր խոտը և արմատապտուղները հաջողությամբ կարելի չէ փոխարինել կանաչ կերով: Սակայն, դեռ շատ տեղ-տեղություններում ամառը ճագարներին կերակրում են չոր խոտով, վորը միանգամայն աննպատակահամար է թե՛ ճագարների առողջության և թե՛ տնտեսական տեսակետից:

Գարնան, ամռան և աշնան ամիսները, կանաչ կերերով ապահովելու համար, աշնանը, և դարձանք կարելի չէ ցանել ճագարների սիրած խոտաբույսեր՝ վիկ—վարդակի հետ, յերեքուկ, առվույտ, կորնդան, Սուգանի խոտ, կորեկ, և այլն. իսկ մոլախոտերից՝ յալչան, կուլթ, խոտալիկ, յեղինձ և այլն:

Ճագարները մեծ քանակությամբ ուտում են մոլախոտեր, որինակ՝ յալչան, խոտալիկ, յեղան լեզու, (տխտը—կոռն), յեղինձ, մոլի տերեւներ, անանուխ, թրթնուկ և այլն:

Նրանք սիրում են նաև բանջարանոցային բույսերի թափուկները, որինակ՝ ձակնդեղի, դադարի, չաղգամի, կաղամբի և այլ տեսակ արմատապտուղների տերեւներ:

Մեծ ախորժակով ուտում են նաև քյարափուլ, սամիթ, սեխի, ձմրուկի, ինձորի կեղև, դըղում և այլն:

Ճագարների համար վնասակար բույսեր են համարվում սխտորը, սոխը, լոբու և կարտոֆիլի տերեւները, խաչապաղ և այն թունավոր մոլախոտերը, վորոնք վնասում են բոլոր տեսակ կենդանիներին:

Պետք է խուսափել նաև ճահճային վայրերից հավաքած խոտով կերակրելուց:

Ճագարները չափազանց սիրում են բոլոր տեսակի արմատապտուղներ՝ դադար, ձակնդեղ, չաղգամ, դեմնախնձոր և այլն:

Գագարը բոլորից գերադասելի չէ, վորովհետև շատ հարուստ է վիտամիններով և ձմեռը սառած դրությամբ ճագարներին չի վնասում: Ընդհանրապես բոլոր տեսակի արմատապտուղները, յեթե սառած են, պետք է յեփել ու հնոտ տալ:

Կարտոֆիլով կերակրել կարելի չէ յեփելուց հետո միայն: Տնտեսական և աննդարարության տեսակետից, դեմնախնձորը ամենից ձեռնուտուն է:

Գեանախնձորի թուփը շատ նման է արեածաղիկին, իսկ նրա արմատապտուղները կարտոֆիլին:

Գեոմախինձորը պահանջվում էր, չափազանց հարմարվում է ամեն տեսակ կլիմայական և հողային պայմանների, բացի ճահճոտ տեղերից: Նա հեշտությամբ, առանց հավաքելու պահվում է հողի տակ՝ մինչև դարձան վերջը և յերբ վերջանում են ամեն տեսակի արմատապտուղներ, սա փոխարինում է բոլորին:

Ամեն մեկ հեկտարից կարելի չե ստանալ մոտ 200 ցենտներ բերք: Ճագարներն ախորժակով ուտում են վոչ միայն նրա արմատապտուղները, այլև նրա թուփն ամբողջությամբ:

Սիլոսի համար գեոմախինձորի թփերը նույն հատկությունն ունեն, ինչ վոր արեածաղկինը:

Ճագարները, ինչպես կրծող կենդանիներ, չափազանց սիրում են և կարիք են զգում կոծել ծառերի ճյուղեր: Ծառերի ճյուղերի բացակայությամբ դեպքում, նրանք սկսում են կոծել վանդակների պատերն ու դռները: Դրա համար ել անհրաժեշտ է շարաթը մեկ կամ յերկու անգամ նրանց ծառի ճյուղեր տալ: Նրանք սիրում են ուռենի, բարդի, ակացի և այլ ծառեր:

Ճագարաբուծարանները հեշտությամբ կարող են ձմեռվա համար ծառի ճյուղեր պատրաստել, վորոնց պետք է չորացնել չուք տեղում:

Շատ ոգտավետ է կերերի հետ վերև նշած ծառերի, վիտամիններով հարուստ տերեւները խառնել ճագարներին արվելիք կերերի հետ:

Թեև ճագարները ուտում են բոլոր տեսակի ծառերի ճյուղեր ու տերեւներ, սակայն նրանց համար վնասակար է կորեկափոր պտուղ տվող ծառերի տերեւները, ինչպես՝ կեռասի, պալի, սալորի, ծիրանի, դեղձի և այլն:

Խոտաբույսերից ամենամեղրարարը առվույտն է:

Նա հարուստ է սպիտակուցային մասերով, վորը նպաստում է կերակրող մայրերի կաթի ավելացմանը:

Առվույտով կերակրելու ժամանակ ճագարը ուժեղ կերերի մեծ կարիք չի զգում:

Յերեքնուկն ել շատ սննդարար է, բայց ցողից ու անձրևներից անմիջապես հետո, նրանով կերակրելը վնասում է ճագարներին:

Պետք է խուսափել ճագարներին թաց կանաչ կերերով կերակրելուց:

Նույնպես պետք է խուսափել ճագարներին կերակրել բանջարանոցից հավաքած ցեխոտ ու կեղտոտ ավելցուկներով ու արմատապտուղներով: Պետք է լվանալուց հետո տալ:

Մեղ մոտ ամեն քայլափոխում կարելի է պատահել շատ մեծ քանակությամբ մի մոլախոտի, վորին յեղինջ են ասում: Ծառերը չեն կասկածում, վոր այդ այրող մոլախոտի մեջ խոշոր քանակությամբ սննդանյութեր կան:

Յեղինջը ամենաարժեքավոր կերն է ճագարների համար:

Բացի այն, վոր նրա մեջ առատ են վիտամինները, այլև նրա մեջ կա 18 տոկ. սպիտակուց, 7 տոկ. յուղ, 3 տոկ. կեր, 2 տոկ. ֆոսֆոր և այլ հանքային աղեր:

Չորացրած յեղինջը շատ ոգտավետ է թե՛ կերակրող մայրերի և թե՛ մատղաջ ճագարների համար:

Ճագարաբուծարանները առանց դժվարությունների կարող են մեծ քանակությամբ յեղինջ հավաքել ու չուք տեղում չորացնել:

Յեղինջ հավաքելու ամենալավ ժամանակը՝ նրա ծաղկած ժամանակն է: Պետք է կտրել տակից, հավաքել, փնջեր կապել ու չորացնել:

Տարվա բոլոր ժամանակներում ճագարներին կարելի չե կերակրել չորացրած յեղինջով, բայց ավելի ոգտավետ է մանր կտրտել ու խառնել ուժեղ կերերի հետ:

Առհասարակ ձմեռվա համար պատրաստվելիք խոտաբույսերի ավելի սննդարար ու ոգտավետ լինելը կախված է նրանից, թե ինչպիսի խնամքով կհավաքվեն, կչորացվեն ու կպահվեն նրանք:

Ճագարները ձմեռը շատ սիրում են չոր առվույտ, կորեկան, յերեքնուկ և բոլոր տեսակի հոտավետ խոտաբույսեր, յեթե նրանք անձրևներից կամ խոնավությունից չեն վիչացել:

Ուժեղ կերերից, ճագարներին ամենասիրածը և միևնույն ժամանակ դեղաբույսերի վարսակն է: Բայց այդ չի նշանակում, վոր միշտ ել պետք է վարսակով կերակրել:

Ճագարները սիրում են, յերբ նրանց ուժեղ կերերի կերաբաժինները տեսակները հաճախակի փոփոխվում են:

Միշտ մի տեսակ կեր ուտելուց նրանք կորցնում են իրենց ախորժակը և մարսողության խանգարում ստանում:

Ուժեղ կերեր են համարվում՝ վարսակը, դարին, ցորենը, յեղիլա-տացորենը, հնդկացորենը, հաճարը, վոսպը, լոբին, սիսեռը, սոյան, կտավահատը, արեածաղիկը, քուսալը, թեփը, չորացրած հացի կտորներ և այլն:

Յեթե որեկան արվում է յերկու անգամ ուժեղ կեր, ապա նպատակահարմար է առավույտյան տալ մի տեսակ, իսկ յերեկոյան մի այլ տեսակ:

Ամառվա չոգերին թեփը պետք է տալ երեկոները, վորպեսզի չի թթվի:

Ճագարները մեծ կարիք են զգում հյութալի կերերի, դրա համար ել արմատապտուղներով պետք է կերակրել այն ժամանակ, յերբ նրանք զրկված են կանաչ կերերից:

Սիլոսով ել կարելի չե կերակրել ճագարներին, բայց սիլոսը պետք է արվի չոր խոտի հետ և նրա քանակը պետք է լինի չոր խոտի 20%-ից վոչ ավելի:

Ճագարները բնական ազատ պայմաններում հնարավորություն ունեն գտնելու այն բոլոր հանքային նյութերը, վորոնք խիստ անհրաժեշտ են նրանց համար:

Բայց բանտարկված լինելով վանդակներում կամ պարկետներում, զրկված լինելով բնական պայմանների հնարավորություններից, անհրաժեշտ է բավարարել նրանց պահանջները, հակառակ դեպքում կկորցնեն թե՛ իրենց առողջությունը և թե՛ ղեմացկանությունը:

Պարկետներում և վանդակներում խնամվող ճագարներին պիտի տալ որեկան մեկ գրամ աղ չորս ամսականից ավել հասակ ունեցողներին և կես գրամ չորս ամսականից փոքր հասակ ունեցողներին:

Ըստ հնարավորության չափահաս եղ ճագարներին պետք է տալ որեկան յերեք գրամ, իսկ մատղաշներին մեկ գրամ՝ աղած ֆոսֆորիա կամ վոսկրա ալյուր:

Մեր փորձերից դիտենք, վոր լավ հետևանք է տալիս նաև ամեն մեկ ճագարին յոթ որը մի անգամ մեկ գրամ ծծմբածաղիկ տալը:

Աղը և բոլոր հանքային նյութերը կարելի է տալ տարբեր ձևերով, բայց վորպեսզի ամբողջովին ուտեն, նպատակահարմար է խառնել ճաղարների համար պատրաստվող թեփի կերաբաժին հետ:

Թեփը կշռում են, ըստ սահմանված նորմայի, բոլոր ճաղարները համար: Նրա մեջ խառնում են թե աղ և թե տրվելիք հանքային նյութերը և վորպեսզի հանքային նյութերը մեկին շատ մյուսին քիչ չլինի, լավ խառնում են՝ ապա քիչ ջուր ավելացնում այն հաշվով, վորպեսզի թեփը վճռ շատ չոր լինի և վոչել ջրային:

Ճաղարները թեփն ավելի ակտիվացնում են ուտում, յեթե նրա հետ խառնում են մի վորևե հոտավետ խոտի մանրուկ: Թեփը ակտիվացնում են նաև յեթե նրա մի քանորդը քուսպ է:

Բուսաղը պետք է թրջել տաք ջրի մեջ, վորից նա փափկում ու հեշտ փշրվում է: Ճաղարներն ակտիվացնում են արևածաղկի և կտավճուտի քուսպը:

Մեր գործնական աշխատանքների բնթացքում չենք ոգտվել բամբակի քուսպով, այդ ևս պետք է փորձել:


Կերակրելու ձևը.— յանդակներում, վալյերներում, պարկետներում և առհասարակ կիսաբնական պայմաններում խնամվող ճաղարներին պետք է կերակրել որեկան յերկու անգամ, իսկ մայր ճաղարներին վորոնք ձագերին են կերակրում և բոլոր մատղաշ ճաղարներին նպատակահարմար է կերակրել որեկան յերեք անգամ:

Ամառը պետք է կերակրել՝ առավոտյան ժամը 7-8-ը, յերեկոյան՝ ժամը 7-8-ը, իսկ ձմեռը՝ առավոտյան ժամը 8-9-ը, իսկ յերեկոյան ժամը 6-7-ը: Յերեք անգամ կերակրվողներին, յերկրորդ կերաբաժինը պետք է տալ ցերեկվա ժամի 12-1-ը: Բեղմնավորված և կերակրող մայր ճաղարների կերաբաժինները պետք է լինի անդադար և վխտածիններով հարուստ կերից կազմված:

Աճող մատղաշ ճաղարները ավելի մեծ պահանջ են դրում սպիտակուցով առատ կերերի:

Չմեռը ստույգ արմատապտուղները ճաղարներին վխտում են: Սառած արմատապտուղներից միայն դադարը չի վխտում, մյուսներով կարելի է կերակրել յեփելուց հետո միայն:

Չմեռը խիստ ցրտերի ժամանակ արմատապտուղների կերաբաժինները պետք է պատրաստել այնպիսի չափերով, վորպեսզի ճաղարները կարողանան ուտել մինչև նրանց ստուգելը:



Որենակիկ սպանդան ո ց

Ամառը կանաչ խոտը, մինչև կերակրելը չ'պետք է մեծ քանակությամբ կուտակված պահել, վորովհետև այդ ձևով պահելուց չուտ տաքանում է ու փչանում:

Կանաչ կերերը, մինչև կերակրելը, պետք է վուել շոք տեղերում: Նպատակահարմար է առավոտյան հավաքել յերեկոյան տալու համար, իսկ յերեկոյան հավաքել առավոտյան տալու համար:

Շինգ ամսականից ավելի հասակ ունեցող ճաղարներին կերաբաժին տրվում է չափահասների նորմայով:

Չոր խոտը յեթե, փոխարինվում է կանաչ կերով՝ ապա մեկ դրամ չոր խոտի փոխարեն պիտի տալ յերեք կամ չորս գրամ կանաչ խոտ ըստ նրա վորակի:

Հյութալի կերերի—արմատապտուղների մեկ գրամի փոխարեն պետք է տալ մեկ գրամ կանաչ խոտ:

Ճաղարները շատ մեծ ճշտությամբ սովորում են կերակրելու ժամերին: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այդ հանգամանքի վրա և կերակրել ճիշտ նշանակված և նրանց սովորած ժամերին:

Կերերի աննդանյութերի լիակատար իրացմանը կամ մարսողությանը նպաստում է կերերի հաճախակի մեկը մյուսով փոխարինելը և վորքան հաճախ կատարվի կերակրելու այդ ձևը. այնքան էլ ոգտավետ է ճաղարների համար:

Կերը պետք է տրվի կավից պատրաստած կերամաններում, իսկ խոտը հատուկ այդ նպատակի համար պատրաստված մուրներում:

ԿԵՐԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ցեղային և արդյունաբերական ճաղարարութեան համար:

(Հաշվելով ցեղական ճաղարի եղբւր 3—3¹/₂ կէլոգրամ
իսկ արդյունաբերական ճաղարի կշիւր 2¹/₂—3 կէլոգրամ:)

Կ Ե Ր Ա Կ Ր Ե Լ Ը	Մեկ ճաղարի որվա կերարածինը դրամներով							
	Ուժեղ կեր		Արմա- տապտ- ուղներ		Ն ո տ (չոր)		Աղ	
	Ցեղական	Արդյունա- բերական	Ցեղական	Արդյունա- բերական	Ցեղական	Արդյունա- բերական	Ցեղական	Արդյունա- բերական
ՑԵՂԱԿԱՆ ԱՐՈՒ ՃԱԳԱՐՆԵՐ								
Հանդատութեան շրջանում . . .	60	—	100	—	100	—	1	—
Չուղարկւած շրջանում . . .	70	—	100	—	100	—	1	—
ՄԱՅՐ ՃԱԳԱՐՆԵՐ								
Հանդատութեան շրջանում . . .	60	30	100	70	100	80	1	1
Բեղմնավորման առաջին 10 որը	70	35	100	80	100	80	1	1
Բեղմնավորման 10 որից մինչև 20 որը	80	40	100	90	100	100	1	1
Բեղմնավորման 20 որից մինչև ծնելը	90	50	130	100	100	100	1	1
ՄԱՅՐԵՐԻՆ ՇՆԵԼՈՒՑ ՇԵՏՈ								
Առաջին . . . 10 որը . . .	95	60	180	120	100	100	1	1
10 որից — 20 որը . . .	105	70	200	150	100	100	1	1
20 որից — 30 որը . . .	130	80	250	200	150	120	1	1
30 որից — 40 որը . . .	150	100	250	200	200	150	1	1
ՄԱՏԱՆԵՐԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ								
40 որական հասակից մինչև 2 ամս.	20	15	50	30	40	30	0,5	0,5
2 ամսականից մինչև 3 ամսակ.	30	20	60	40	50	40	0,5	0,5
3 „ „ 4 „	40	25	70	50	70	50	0,5	0,5
4 „ „ 5 „	50	30	100	60	100	60	1,	1,

Կերերը պետք է տալ վորոշված նորմաների համաձայն, վորպեսզի
մինչև յերկրորդ անգամ կերակրելը կեր չմնա կերամաններում: Բացի
խտից, վորը միշտ ել կարելի է թողնել մսուրներում:

Պետք է խիստ ուշադրութեամբ դարձնել կերակրելու ձևերի ու սահ-
մանված նորմաների վրա, վորպեսզի ճաղարը ստանա սպիտակուցա-
յին, ճարպային և ածխաջրային սննդանյութերի անհրաժեշտ քանակու-
թյունը, բայց միևնույն ժամանակ պիտի խուսափել ավելորդ կերա-
բածին տալուց:

Չափազանց մեծ չափով կերակրելու և նորմայից ավելի ուժեղ կեր
տալու հետեւանքով ճաղարները խիստ չաղանում են և կորցնում բազ-
մանալու հատկութիւնները:

Հաճախ պատահում է, վոր ճաղարը հրաժարվում է ուտել անսովոր
կեր, բայց հետո սովորում է ու ախորժակով ուտում:

Շատերի կարծիքով ճաղարներին չ'պետք է ջուր տալ: Այդպիսի կար-
ծիքը միանգամայն անհիմն է ու վնասակար:

Ճաղարն ել ջրի կարիք է զգում այնպես ինչպես բոլոր կենդանիները:
Ճաղարին պետք է ջուր տալ՝ ձմեռը որակի մեկ անգամ, իսկ ա-
մառը՝ յերկու անգամ: Ջուրը պետք է լինի մաքուր, թարմ և չվարակ-
ված: Կեղտոտ և փչացած ջրերից ճաղարները վարակվում և հիվանդա-
նում են: Ջուրը պետք է տալ կերակրելուց քիչ առաջ, իսկ խմելուց հե-
տո՝ ամաններում ավելորդ մնացած ջուրը պետք է թափել, վորպեսզի
ճաղարը ստիպված չ'լինի խմել կեղտոտված ջուրը կամ ավելորդ մընա-
ցած ջուրը չի թափվի վանդակի մեջ:

Ձմեռը յերթե ճաղարները խնամվում են բացօթյա և հնարավորու-
թյուն ունեն ողտվել մաքուր ձյունից, այդ դեպքում նրանք իրենց ծա-
րավը հաղեցնում են դրանով:

Մեր նշած բոլոր տեսակի կերերի մեջ կա թե՛ սպիտակուցային, թե՛
ճարպային և թե՛ ածխաջրային մասեր, բայց բոլոր կերերի մեջ հաճա-
կար չափով չեն այդ մասերը:

Դրա համար ել կերարածիւնների կազմելու ժամանակ պետք է ի նկա-
տի ունենալ, վոր մի կերը փոխարինելով մյուսով, կերարածի սննդա-
բարությունը համապատասխան լինի ճաղարի պահանջին:

Ճաղարները ցերեկները հանգստանում են, իսկ գիշերները դուրս դա-
նի բներից, դրա համար ել համարվում են գիշերային կենդանիներ: Այդ
պատճառով ել նպատակահարմար է գիշերվա կերարածիւններն ավելի
շատ տալ, քան ցերեկվանը:

Յեթե հնարավոր չե թելով կերակրել, այդ դեպքում աղը կարելի է
տալ ուրիշ կերի հետ, որինսակ՝ ըստ նորմայի կշիւրված աղը պետք է լու-
ծել ջրի մեջ և այդ լուծույթով սրսկել նրանց տրվելիք խոտը: Այդպի-
սով ճաղարները խոտի հետ ստանում են նաեւ աղ:

Ճաղարապահների աշխատանքները հեշտացնելու և ճաղարներին ա-
ղով միշտ ապահովելու համար ավելի նպատակահարմար է, պարկեա-
ների, վալյենների և վանդակների մի վորեւ անկյունում ամրացնել
մի փոքր կտոր չ'մանրած աղ. ճաղարները ըստ իրենց պահանջի ու ցան-
կութեան կարող են ողտվել այդ աղից:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԵՐԱԿՐԵԼԸ.

Դարեննաներում, կղզիներում և տրանշէներում բազմացող ճաղար-
ները, բացառապես կերակրվում են խոտով և կարիք չեն զգում մարդու
խնամքի:

Բայց յեթե ամառը խիստ յերաշտ է, իսկ ձմեռը սաստիկ ցուրտ և ձյունը շատ, այդ դեպքում պետք է կերակրել նրանց, փորովհետև ճաշարները հնարավորություն չունենալով դարեննայից հեռանալ և կեր դնել ուրիշ վայրերում, կարող են սովամահ լինել:

Մեն նշել ենք, փոր ամեն մի հեկտար հողամասում 40 եզ և 5 արու ճաղարներ իրենց ճաղերով կարող են կերակրվել տեղի բուսականությունով: Նրանք ուժեղ կերի կարիք չեն զգում: Սակայն նրանց մորթելուց մոտ 15—20 որ առաջ նպատակահարմար է ամեն որ տալ ուժեղ կերեր, փորպեսզի նրանցից ստացվի ավելի համեղ միս և լավորակ մորթի:

ԳԻՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԵՐԱԿՐԵԼ

Ճարպոտ և համեղ միս ստանալու համար, նրանց պետք է կերակրել շատ անդարար կերերով: Որինակ՝ հացահատիկներով, թեփով, արմատապտուղներով, իսկ ակտրժակը դոգուելու համար այդ կերերին կարելի է քիչ քանակությամբ խառնել նրանց սիրած հոտովետ բանջարներից, որինակ քյարավուզ, սամիթ, անանուխ և այլն:

Կերեր տալուց առաջ պետք է ջրել, իսկ վերջին օրերը յերբ նրանք կորցնում են ակտրժակը պետք է հաճախ փոխել նրանց կերերը մեկը մյուսով և հոտովետ բույսերի խառնուրդով դոգուել նրանց ակտրժակը:

Գիրացնող ճաղարներին, նպատակահարմար է կերակրելու չրջանում պահել խիստ փոքր վանդակներում, փորպեսզի հնարավորություն չունենան շատ շարժվելու:

Գիրացնող կերերով կերակրելու ժամանակ չ'պետք է տալ դառն խոտեր, յալչան և կաղամբ, փորովհետև այդ կերերը վատ են ազդում մսի վորակի և համի վրա:

Գիրացած ճաղարի վոչ միայն միսն է համեղ և լավորակ, այդպիսի ճաղարների մորթին լինում է գեղեցիկ և մաշկուն տեսքով:

Բայց ավելի լավորակ միս ու մորթի ստացվում է ամորձատված արու ճաղարներից: Դրա համար էլ նախ քան նրանց գիրացնող կերերի փոխելը նպատակահարմար է ամորձատել:

ԱՐՈՒ ՃԱԳԱՐՆԵՐԻ ՄԱՐԹԱՏԵԼ

Արու ճաղարներին պետք է ամորձատել վոչ միայն լավորակ միս ու մորթի ստանալու համար, այլև նրա համար, փոր արուները 4 ամսեկան հասակից սկսում են հարձակվել միմյանց վրա և իրենց այդ բնավորությամբ ամբողջ ժամանակ միմյանց հանդիստ չեն տալիս:

Նրանց համար կառուցել առանձին-առանձին բնակարաններ — մանավանդ խոշոր տնտեսություններում, փորտեղ մսի ու մորթու համար խնամվում են հարյուրավոր և հազարավոր արու ճաղարներ — անկարելի է:

Դրա համար նրանց պետք է ամորձատել, փորպեսզի կարելի լինի և ամսական հասակից հետո խնամել միատեղ՝ ամբողջ հոտերով:

Ամորձատել կարելի չէ տարբեր ձևերով, որինակ՝ ձվերի ներքևի մասում ամուր կապում են, փորի հետևանքով կանգ և առնում արյան շրջանառությունը և 10—15 օրում ձվերն իրենց պարկով չորանում ու ընկնում են:

Այդ ձևը թեև հեշտ է բայց յերկար ժամանակ խիստ ցավ է պատճառում ճաղարին (տես նկար 44):

Մյուս ձևն էլ կատարվում է անդամահատության միջոցով: Որինակ՝ բռնում են ձվից և ակտահանած դանակով գիծ քաշում մաշկի վրայից ու անցք բանալով հանում են ձվանները, վերոնց տակից՝ ամուր կապում են ակտահանած մետաքսի թելով, փորից հետո մկրատով կտրում են ձվերը, յուզ քսում կտրած տեղերը ու բաց թողնում ճաղարին: Մի քանի օրից վերքը առողջանում է:

Արու ճաղարներին ամորձատելու ուրիշ մի շարք ձևեր էլ կան: Բայց փորովհետև այդ խնդրի նպատակահարմար ձևով լուծելը խոշոր նշանակություն ունի տնտեսության համար, խորհուրդ ենք տալիս ճաղարապահներին դիմել անասնաբուժներին և փորձված ճաղարաբուծներին և նրանցից դորձնականում սովորել ամորձատելը, փորից հետո ինքնուրույն սանել այդ աշխատանքները:

Ձեռնարկների միջոցով դժվար է ճշտությամբ կատարել անհրաժեշտ ցուցմունքները, փորի հետևանքով էլ հաճախ մնալով են ճաղարները:



Նկ. 44. Արու ճաղարի ամորձատելը:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ՄԱՐԹԵԼ



Նկ. 45. Ճաղարի ստանալու ձևը:

Ճագարներին կարելի է սպանել տարբեր ձևերով, բայց այժմ ամեն-
նաբնորոշվածը և հեշտը համարվում է հետևյալ ձևով, վորը մեկ վար-
կյանում մահացնում է ճագարին, նրան ավելորդ տանջանք չի պատճա-
ռում և չի փչացնում մորթին:

Ձախ ձևով բռնում են ճագարի հետևի վրա գտնվող, բարձրացնում
դեպի վեր, յերբ նրա գլուխը կախ է ընկնում, աջ ձեռքով բռնած կարճ
և կտր փայտով ուժեղ հարվածում են ծոծրակին:

Այդ հարվածից ճագարը վարկյանապես մահանում է և քիչ արյուն
է հոսում, իսկ յեթե արյուն չի հոսում այդ դեպքում, սուր յերկար բի-
զով ծակում են քիթը կամ աչքը, վորպեսզի արյուն թափվի:

ՄԱՇԿԵԼԸ

Արյունը քամվելուց հետո, հետևի վրա գտնվող ամրացնում են այդ նը-
պատակով պատրաստված հարմար տեղից և սկսում մաշկել, ախպես ինչ-
պես մաշկում են վոշխարը և այլ անասունները: (Տես նկար 46):

Պետք է զգուշ լինել վորպեսզի մաշկելու ժամանակ մորթին չ'կտրվի
վորովհետև կտրված կամ ավելորդ ճեղքվածքներ ունեցող մորթին ե-
րբեք և զնահատվում:

Մորթին պետք է հանել ամբողջությամբ տևի ձևով, թողնելով վը-
րան դրսի մորթին դուռնն ու ականջները:



Նկ. 46. ճագարի մաշկելը

Մորթու վրա մնացած միսն ու ճարպը զգուշությամբ պետք է մաք-
րել և հետո չուռ տված դրուժյամբ հազցնել այդ նպատակով պատրաս-
ված հատուկ փայտեղի վրա ու կախել չոք տեղում (տես նկար 47):

Մորթին կարելի չէ չորացնել կամ ամբողջությամբ դուրբացի պես
հազցնելով ձողիկներից պատրաստված հատուկ փայտի վրա, կամ կըս-
րելով փորի կողմից, մեխերով ամրացնել հատուկ տախտակի վրա:

Յերկու դեպքումն էլ բորբի պետք է լինի ներսի կողմը և անդայ-

ման չորացվի չոր և չուք տեղում, վորովհետև մորթին փչանում է ա-
րեգակի ճառագայթներից ու խոնավությունից:

Չորանալուց հետո մինչև իրացնելը պետք է պահել չոր տեղ, իսկ
ամառը ցեցից ապահովելու համար նավթալին ցանել վրան: Բայց
վորովհետև սպիտակ գույնի մորթին, նավթալինի ազդեցություներից
փոխվում է, դրա համար ել նպատակահարմար է ամառը այդ գույնի
մորթիները խնամելու համար ոգտվել սկիավղարով:



Նկ. 47. Մորթիների չորացնելու ձևը:

ՄՍԻ ԽՆԱՄԵԼԸ

Մաշկելու ժամանակ, թաթերը պետք է թողնել ճագարի վրա ա-
ռանց կտրելու ու մաշկելու:

Սպառողի այդ պահանջը անպայման պետք է կատարվին ճագա-
րաբուծարանների կողմից:

Ճագարի միսը շատ նուրբ և անուշահամ լինելու պատճառով, ան-
հրաժեշտ է նրան պահել խիստ մաքուր պայմաններում:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենդանիների հիվանդությունները լինում են յերկու տեսակ՝ վա-
րակիչ և վոչ վարակիչ:

Ճագարները նույնպես հիվանդանում են վարակիչ և վոչ վարակիչ
հիվանդություններով:

Չվարակող հիվանդությունները հեշտությամբ բժշկվում են,
կամ անցնում են առանց վորևե մնաս հասցնելու ճագարաբուծական
անտեսություններից, րացատությամբ այն դեպքերին յերբ ճագարապահ-
աների անխուժությամբ կամ տղիտուժյան հետևանքով պատահում է մաս-
նային թունավորում:*)

Հիվանդություններն առաջ են դալիս անհամապատասխան բնակա-

*) Ս. Թ. Մարտ ամսում Վախչի շրջանում «Պարեզա» կոլեոզում բուսալի
հետ խառնած զգեսագործարար կերակրելու հեռանդով յերկու որվա ընթաց-
քում սատկել են 700 ամենարևելք ցեղական ճագարներ:

քանները, քիչ լույսի ու ողի, կեղտոտության, փչացած ու անվորակ կերերի և առանց ջրի ու խնամքի պահելու հետևանքով:

Մեր կարծիքով, ֆագարների մասսայական համաճարակի իրական դարձումները տեղի յեն ունենում գլխավորապես ֆագարապահների անփութության, անշնորհության, տգիտության և անբարեխղճության հետևանքով:

Լուրջ ուշադրություն դարձնելով ճագարաբուծարանների մաքրության և ճագարների խնամքի վրա, կարելի չէ խուսափել ճագարների համար ամենալուրջագույնը հիվանդութուններից ինչպիսիներն են՝ «կոկցիդիոզ»-ը, «բրինխա»-ը, «սեպտիցեմիյա»-ն և այլն:

Այդ հիվանդութունների առաջը առնելու համար պետք է լայն հիմքերի վրա դնել պրոֆիլակտիկ (նախազգուշական) աշխատանքները, վերովհետև ավելի հեշտ և կոպիտ վարակման դեմ և խուսափել հիվանդութուններից, քան թե բժշկել վարակվելուց հետո:

Մեր փորձերով համոզվել ենք, վոր այն բուծարաններում, վորտեղ ուշադրություն են դարձնում ճագարներին նպաստավոր պայմաններում պահելու, նրանց խնամքի ու անդարար կերակրելու վրա, ջր-դրկելով նրանց առատ լույսից ու ողից, այդպիսի բուծարանում յերբեք համաճարակային հիվանդութուններ չեն պատահում:

Շատ հիվանդութուններ դեռ ուսումնասիրված չեն, վորի հետևանքով էլ հաճախ դժվարությունների են հանդիպում վոչ միայն սկզբնականները այլև փորձված ճագարաբուծներն ու անասնաբուժները:

Վանդակային ձևով կադմակերպված ճագարաբուծարաններում համաճարակ հիվանդութունների դեմ պետք է պայքարել հետևյալ միջոցներով:

1. Որեկան մի անգամ, չոգ յեղանակներին, և յերկու որը մեկ անգամ՝ ցուրտ յեղանակներին մաքրել վանդակները: Իսկ ճագարների համար ամենալուրջագույնը «կոկցիդիոզ» հիվանդության բռնկումից խուսափելու համար պետք է շարաթը մեկ անգամ վանդակները տա-տահանել կրեոլինի 3-4 տոկոսանի լուծույթով:

2. Ամիսը մեկ անգամ վանդակների պատերին ներսի կողմից պետք է քսել կրի լուծույթ (մի մաս կիր և հինգ մաս տաք ջուր): Նպատակահարմար է նույնպես քսել այդ խառնուրդով ճագարաբուծարանի այն տեղերը, վորոնք կարող են վարակման աղբյուրներ հանդիսանալ:

3. Տարին յերկու անգամ, դարնանը և աշնանը ճագարանոցի չե-քերը ներսի կողմից պետք է ներկել նույն լուծույթով:

4. Հաճախ պետք է լվանալ բոլոր կերամանները և ախտահանել մուր-րաջրով կամ թթվածնի լուծույթով:

5. Այն ճագարները, վորոնք հիվանդ են կամ կասկածելի յեն անմիջա-պես պետք է հեռացվեն ճագարանոցից և տեղավորվեն այդ նպատակի համար պատրաստված հատուկ մեկուսարաններում: Իսկ նրանց վան-դակները և կերամանները ախտահանվեն ու դրվեն արևի տակ:

6. Սոռը ճագարաբուծարաններում վանդակների մաքրման և ախտահանման աշխատանքներով պետք է զբաղվի հատուկ աշխատակից, վորը չպետք է մասնակցի կերակրելու աշխատանքներին:

7. Ճագարանոցներում վորտեղ խնամվում են փոքր քանակու-թյամբ ճագարներ և վորտեղ անտեսապես նպատակահարմար չեն ավե-լորդ աշխատակից ունենալը, ամեն անգամ պետք է սկզբում կերակրել

առողջ ճագարներին, ապա հագնել նոր խալաթ ու կերակրել հիվանդնե-րին:

8. Թույլատրվում վորեւե բան հիվանդ ճագարների մոտից տեղա-փոխել առողջների մոտ:

9. Զագարաբուծարանի համար դրսից նոր ստացված ճագարները պետք է լվանալ ոճառով:

10. Զագարաբուծարանի համար պետք է պահել առանձին տեղ, մոտ չպետք է խառնել հների հետ, այլ պետք է պահել առանձին տեղ, մոտ մի ամիս, մինչև համոզվենք, վոր նրանք առողջ են:


11. Յեթե ճագարաբուծարանում վանդակները դրված են միմի-յանց վրա, պետք է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի վերևի վանդակի աղբը կամ մեղը չթափվի ներքևիինի վրա:

12. Զագարանոցի աղբը պետք է հավաքել և հեռացնել ճագարա-նոցից և պահել այդ նպատակին հատկացված տեղում:

13. Ստեղծ ճագարների հետևանքով հարկավոր է պայքարել ճագարանոցից հեռու 70 սանտիմետրից վոչ պակաս խորությամբ:

Այդպիսի միջոցներով հնարավոր է պայքարել համաճարակի դեմ, իսկ բժշկելու համար մենք նշում ենք միայն այն հիվանդութունները, վորոնցով ճագարները հաճախ հիվանդանում են:

ԱԿՍՆՁԻ ՔՈՐ.—Այս հիվանդութունն առաջ է դալիս շատ փոքր պարազիտներից, վորոնք թափանցելով ականջի ներսի կողմի կաշվի մեջ, սկսում են բազմանալ այնտեղ, և ճագարին մեծ տանջանք պատ-հասում:



Նկ. 48. ճագարի ականջների քոր պատճառող պարազիտներ:

ճագարները սոսկալի քորից ջղախնացած սկսում են թաթերով քո-րել ականջի ներսը: Վորից առաջ են դալիս վերքեր և ծածկվում թարա-խանման կարմիր գեղնավուն կեղևով:

Վորքան հնանում է այդ հիվանդութունը, այնքան շատանում է ականջի ներսի բորբոքումը և հսկայական անհանգստություն պատճա-ռում ճագարին: Յերբեմն չբժշկելու դեպքում, այդ պարազիտները

ավելի խորն են անցնում, վորի հետեւանքով ճաղարների գլուխը վղից ծովում է դեպի մեջը և ստեղծում են այդ հիվանդութիւնը:

Բժշկութիւն.—Պետք է դիմել այնպիսի միջոցներ, վորպեսզի առանց ճաղարին վնասելու հնարավոր լինի վռնջացնել ականջի ներսում գտնվող պարազիտները:

Դրա համար ել պետք է պատրաստել մի շատ բարակ փայտե ձողիկ, ծայրին փաթաթել մի փոքր կտոր բամբակ, թրջելով մի վորեւե ակտահանող լուծույթով (դերադասելի յե ջրածին գերօքսիդը) և ականջը մաքրել չորացած թարախանման կեղեւներով:

Մաքրելու ժամանակ պետք է լինել շատ զգուշ, վորպեսզի չվնասել ականջի թմբկաթաղանթը:

Յերբեմն պատահում է, վոր մաքրելու ժամանակ, վերքից արյուն է հոսում, այդ վտանգավոր չէ: Մաքրելուց հետո ականջի ներսը քսում են տարբեր դեղորայք, վորոնք մի քանի անգամ կրկնվելուց հետո, լիակատար վռնջացնում են պարազիտներին և կարճ ժամանակահատիւում անցնում է ականջի քորը:

Թվենք այն դեղերը վորոնք մենք փորձել ենք դործնականում՝

1. Պերուանյան բաղամ, մեկ կաթիլը խառնելով հինգ կաթիլ սպիրտի հետ, բամբակով քսել ականջի ներսի վերքերը:

Միքանի անգամ կրկնելուց հետո անհետանում է հիվանդութիւնը:

2. Ծծմբածաղկի փոշին շատ քիչ լցնելով ականջի վերքի վրա, նույնպէս բժշկում է:

3. Կրեոլինի 3 % լուծույթով յերկու օրը մեկ անգամ լվանալով անցնում է հիվանդութիւնը:

4. Յեթե բացակայում են այդ դեղորայքները, այդ դեպքում կարելի է բժշկել՝ յողով, կամ սկիպիդարով, կամ սպիրտակ նալթով:

Բայց բոլորից դերադասելին պերուանյան բաղամն է:

Այդ հիվանդութիւնով վարակվում են միայն ճաղարները, մարդկանց համար միանգամայն վտանգավոր չէ:

Ճաղարաբուծները պետք է հաճախ ստուգեն իրենց ճաղարների ականջները և նկատելուց, անմիջապէս միջոցների դիմեն սկզբից արմատախիլ անելու այդ վարակիչ հիվանդութիւնը:

ՀԱՐԲՈՒՆ. Այս հիվանդութիւնը լինում է յերկու տեսակ՝ հասարակ և թարախոտ:

Հասարակ հարբուխը վոր առաջանում է ցրտից, միջանցիկ քամիներից, խոնավութիւնից, անցնում է առանց հետեւանքի:

Բայց թարախոտ հարբուխը «րինիտ», ամենատարածված հիվանդութիւններից մեկն է ճաղարների համար:

Վարակվում են այդ հիվանդութիւնով գլխավորապէս հիվանդ ճաղարի փուշտալու հետեւանքով արտաթորած թարախից, վորի մեջն էլ գտնվում են այդ հիվանդութիւն բացիւնները:

Հաճախ անցնում են առաջ ճաղարներին կերամանների և ջրի միջոցով, վորոնք ընկնելով առողջ ճաղարի բերանը՝ կամ քիթը վարակում են նրան:

Վարակվելուց ճաղարը կորցնում է ախորժակը և յերբեմն ել ջերմութիւնը բարձրանում է մինչև 40 աստիճանի:

Պետք է նշել, վոր առողջ ճաղարի նորմալ ջերմութիւնը լինում է 38—38 և կես:

Բժշկութիւն.—Այս հիվանդութիւնը բժշկելու համար, զբաղված են շատ դիտնականներ, բայց մինչև այժմ դրական արդշունքներ չկան:

Ճաղարաբուծական շատ ձեռնարկութիւններում՝ առաջարկում են այս կամ այն միջոցները, բայց մեր յերկար տարիների փորձերը մեզ համոզել են, վոր այդ միջոցները վոչ մի արդշունք չեն տալիս:

Այդ առթիւ մենք անձամբ դիմել ենք Լենինգրադի և Մոսկւայի հայտնի գիտնականներ՝ Յակիմովին և Սիդովին, վորոնք մի քանի տարի յե փորձնական աշխատանքներ են տանում այդ բնագավառում:

Նրանք մեզ պատասխանեցին, վոր այդ առթիւ փորձերը չարունակվում են, բայց դեռ միջոցներ չեն գտնված:

Մեր կարծիքով այդ հիվանդութիւնը դեռ կարելի է պայքարել միայն նախազգուշական միջոցներով:

Ճաղարապահները իրենց անխոնջ աշխատանքով կարող են խուսափել այդ հիվանդութիւն վտանգավոր հետեւանքներից:

Այն ճաղարաբուծարաններում, վորտեղ ճաղարները պահվում են մութ և կեղտոտ վանդակներում, զրկված լույսից ու ուղից, անդարար կերերից, այնտեղ «րինիտ»-ն ստանում է լայն ծավալ:

«Րինիտ»-ով հիվանդ ճաղարները լայ խնամքի պայմաններում կարող են մի քանի տարի ապրել ու բազմանալ: Այդ հիվանդութիւնով վարակված ճաղարների միտը չի կորցնում իր համն ու արժեքը:

ԿՈՅՅԻԴԻՈՋ.—Ճաղարների համար - ամենալուսնավոր, ամենա տարածված և ամենամեծ վնասներ պատճառողը այս հիվանդութիւնն է:

Կոկցիդիոզ հիվանդութիւնով ճաղարները վարակվում են գլխավորապէս կերի և ջրի միջոցով:

Յեւրոպական շատ յերկիրներում, նույնպէս և խորհրդային Միութիւնի մեջ շատ դիտնականներ յերկար տարիներ խոշոր աշխատանքներ են կատարում միջոցներ գտնելու այդ չափազանց, մեծ չարիք պատճառող հիվանդութիւնը դեռ պայքարելու համար: Բայց մինչև այսօր դեռ հայտարարված չեն այն միջոցները, վորով հնարավոր լիներ բժշկելու կոկցիդիոզը:

Պետք է նշել, վոր յերկար տարիների փորձերից և ուսումնասիրութիւնից հետո մենք յեկել ենք այն համոզմունքին, վոր այդ հիվանդութիւնը համաճարակի ընթացք է ստանում միայն այն ճաղարաբուծարաններում, վորտեղ նախազգուշական աշխատանքներ չեն տարվում. վորտեղ ճաղարները ապրում են չարաթնրով կուտակված աղբի, մեզի և դարչահոտութիւնի մեջ:

Կոկցիդիոզը համաճարակային վտանգավոր ընթացք է ստանում դրլ խավորապէս տարվա շող յեղանակներին: Վորի հետեւանքով յերբեմն մեկ ամսականից մինչև չորս ամսական հասակ ունեցող մատղաշ ճաղարների 90%-ը զոհ է դնում այդ վտանգավոր հիվանդութիւնը:

Վարակվելու գլխավոր աղբյուրը ճաղարանոցում թողած աղբն է: Հայտնի յե, վոր կոկցիդիոզով հիվանդ ճաղարների աղբի հետ դուրս են գալիս վարակող «Ոոցիտիդիոզի» բացիւնները, վորոնք կերի, կամ մի վորե և այլ միջոցով նորից ընկնում են առողջ ճաղարի ստամոքսը և առաջ բերում վարակում:

Դրա համար ել անհրաժեշտ է մեկ կամ յերկու օրը մի անգամ ճաղարների վանդակները, վալյերները, պարկետները, տրանշէյները մաքրել աղբից:

Բնական պայմաններում խնամվող ճագարները մասամբ փրկվում են Համաճարակից, չնորհիվ հողամասի մեծ տարածութան և արեգակի ճառագայթների ախտահանող հատկութան: Վերովհետև արեգակի ճառագայթների ազդեցությունից վոչնչանում է «Ոռցիտ»-ները:

ԹԱՅ ԴՈՒՆԶ.— Այս հիվանդությունով հիվանդանում են գլխավորապես մատղաղ ճագարները: Թաց-դունչ հիվանդության պատճառների մասին տարբեր կարծիքներ կան: Բայց մեր կարծիքով, ճագարները տառապում են այդ հիվանդությունով գլխավորապես փչացած կեր ուտելու և կեղտոտության մեջ ապրելու հետևանքով:

Բերանից սկսում է հոսել սոսինձանման հեղուկ, վորի հետևանքով քերանի շուրջը մաղերը կաշում են միմիայն և խիստ անհանգստացնում հիվանդին: Ճագարը թաթերով սկսում է մաքրել բերանը, վորի հետևանքով առաջ է գալիս քոր և բորբոքվում է գնչի շուրջը:

Այդ հիվանդությունը մեծ վնաս չի հասցնում, ճագարաբուժարանին, բայց խիստ անհանգստացնում է ճագարին:

Բժշկություն. Կարելի չէ բժշկել տարբեր ձևերով, բայց ամենաեյական և կտրուկ միջոցը հետեյալն է. —

Պետք է վերցնել մեկ թեյի դոզա բերտոլեայան աղ և լուծել մի թեյի բաժակ ջրի մեջ: Այդ բուժությամբ սկզբնական շրջանում որակյան յերկու անգամ, վերջումն էլ որակյան մեկ անգամ լվանալ բերանի շուրջը: Միքանի որից հետո հիվանդությունը բժշկվում է:

ԹԱՐԱԽՈՏ ՈՒՌՈՒՅՔ (ՊԻԵՄԻՅԱ).— Հաճախ պատահում է, վոր ճագարի մարմնի զանազան մասերում, գլխավորապես մեջքի ու վրի վրա, կաշվի տակ ստալանում է թարախոտ ուռուցք, վորը յերբեմն լինում է հավի ձվի չափ:

Այս հիվանդությունը զգալի վնաս չի հասցնում տնտեսությունը և անցնում է անհետևանք, միայն անհրաժեշտ է բժշկել իր ժամանակին:

Բժշկություն. Այս հիվանդությունը կարելի է բժշկել միայն վիրահատության միջոցով:

Ուռուցքը հանելուց հետո, պետք է վրայի մաղերը մկրատով խուզել և խուզած տեղը լվանալ սպիրտով կամ մի վուդեե ախտահանիչ լուծույթով, վորից հետո ախտահանած սուր դանակով ուռուցքի վրայից կտրելով անցք բացել:

Անցքից սկսում է թափվել չառ թանձր թարախ: Վերքը պետք է մաքրել թարախից և լվանալ ախտահանող լուծույթով և քսել յոդ:

Յեթե վերքը ուշադրությամբ սաքրված է յեղել, միքանի որից հետո չորանում է ու առողջանում:

ԱԶՔԵՐԻ ԹԱՐԱԽՈՏ ԲՈՐԲՈՔՈՒՄ.— Մենք արդեն նշել ենք, վոր ճագերը ծնվում են աչքերը փակ և բացում են 9—10 օրից հետո: Իսկ յեթե այդ ժամանակամիջոցում չի բացվում աչքերը, սկսվում է բորբոքվել և թարախակալել: Յերբեմն էլ պատահում է, վոր 1—2 ամսական ճագերի աչքերն էլ կեղտոտության ու անխնամ պայմանների հետևանքով սկսվում է բորբոքվել ու թարախակալել:

Բժշկություն. պետք է բաժակ ջրի մեջ լուծել մեկ թեյի դոզա բորաթթու և մաքուր բամբակով որեկան յերկու անգամ լվանալ աչքերը: Միքանի որից հետո անցնում է բորբոքումը:

ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.— Այս հիվանդությունը յեթե պատահում է փչացած կերերի հետևանքով, անցնում է հեշտությամբ: Իսկ յեթե փա-

2334
քակվում են բացիլներով չառ վտանգավոր է, մանավանդ մատղաղ ճագարների համար:

Բժշկություն. Այս հիվանդությունը բժշկելու համար առաջարկվում են տարբեր միջոցներ: Բայց մենք գործնականում համոզվել ենք, վոր այդ միջոցներից վոչ մեկը չեն տալիս հաջող հետևանքներ:

Մեր կարծիքով պետք է սկսել տալ չոր կերեր և այնպիսի կերեր, վորոնք հայտնի չեն իբրև փոր կապող, որինակ՝ յավչան, մոշի տերեւներ, կաղին և այլն:

Այդպիսի հիվանդներին պետք է խնամել մեկուսարանում և մաքուր պայմանների մեջ:



	Եջ
Առաջաբան	3
Հեղինակի կողմից	4
Հագարից ստացվող մքերֆները	5
Հագարն արագ և բազմաճյուղ	6
Հագարաբուծության համառոտ պատմությունը	6
Հագարների ցեղերը և տեսակները	8
Հագարների բնակարանների ձևը	27
Հագարների բուծումը	55
Հագարների համարակալելը	61
Հագարների կերակրելը	62
Կերերի մորմաները	68
Ամորձատելը	70
Հագարի մորթելը	71
Հագարի մաշկելը	72
Հագարների հիվանդությունները	78

Սրբագրեց՝ Ս. Տ. Պողոսյան և Հ. Հակոբյան

Պետհրատի տպարան

Պատվեր 2136 գլուխ 7538 (բ) Հրատ. 2259 տիրած 4000.

Արտադրութւն և հանձնված 20/VI ստ. Ֆ.
Ստորագրված և տպագրելու 25/VII 1932 թ.



